

Բանասիր

ՄԱՅԻՍ

87

ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐ
ՄԱՅԻՍ
87

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- ԱՐՄԱՆՏ Ասֆ սպասումի
- 4.- « « Վերածնունդ
- 5.- « « հենքը
- 8.- « « Գարնամամուտ
- 9.- « « Սպասում
- 10.- Ս. ՓԱՆՈՍԵԱՆ Զանգն իմ փառաւորիս
- 21.- * * * Արագիլ, քարով խկար...
- 22.- Մ. ՄԵՇԱՐԵՆՑ Արագիլ մը կ'անցնի
- 23.- Ա. ԱԻԱԳԵԱՆ Արագիլները
- 24.- Լ. ԻՍԱՀԱՆԵԱՆ Գաւառի արագիլ
- 25.- Պ. ՍՆԱՊԵԱՆ Միջնաքար - 5
- 42.- Ա. ՃԻԻՂԵԱՆ Համբարի պատարագ
- 42.- « « Հրաժեշտ
- 43.- « « Որոտում լռութիւն
- 44.- Յ. ԿԱՐԱՊԵՆՑ Նիւ Եսթ, Նիւ Եսթ
- 53.- Վ. ԹԵՓԵԱՆ Յակոբ Կարապետի
«Ամերիկեան շուրջպար»ը
- 65.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Եստէֆ էլ-Խալի հետ
- 77.- * * * Մշակութային լուրեր



Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

ԻԶ. ՏԱՐԻ

ԹԻՒ 5

ՄԱՅԻՍ

1987

ՊԵՏՐՈՒՔ

ԱՐՄԱՆՏ

17

10489-89թ.

ԱՍՔ ՍՊԱՍՈՒՄԻ

Մեր երազանքի յաճախանքին
Ու նախրանքին յանձնուած,
Սպասում եմք մենք՝
Մարմնաւորուի նա,
Դառնայ համ ու գոյն
Եւ հոսի, վազի մեր հազար ու մի
Այս վազանման
Ու մազանման
Երակների մէջ:
Մենք սպասում եմք մեր ժլատ բախտին,
Ինչպէս որ լիքը ստինքին իր մօր՝
Մանուկը չազգած:
Եկած խմորը՝ բոնրի թէժ թշին,
Եւ հոգը ծարաւ՝
Աշնան անձրեւի տոտիկներին թաց:
Մենք սպասում եմք, որ հրաշքով մի
Յետ գառնայ անգամ մանկութիւնը մեր,
Այդ աճող յուշը,

Որը ո՛վ գիտի, թէ ո՞ւր է հիմի
 Թափառում անտէր,
 Ու չկայ մէկը, որ հասնի, հանի
 իր ոտքի փուշը...
 Դու, ո՛վ սպասում,
 Երկուորեակը դու կենդանի յոյսի,—
 Մի կռտրիր սիրտս,
 Ուր բաբախում են սրտերը փափուկ
 Աշխարհի համայն
 Եւ մարդու խիզճը:
 Յանախ դառն ես դու ու խորն ես խոցում:
 Ասա՛, անարդար, ինչպէ՞ս է լինում,
 Որ վայրկեանը քո
 Երբեմն ամբողջ մի դար է թւում...
 Բա՛ւ է, շտապիր ու խոնարհուիր դու,
 Ծունկի եկ եւ քո գլխարկը հանիր,
 Երբ կարօտ մայր է քեզ ապաւինում,—
 Աչքը քուր կտրած, նայում է ճամբին՝
 Հակառակ գնացած կամ նոյնան ազնաւ
 Դարձած է որդու...
 Դու նրա փոխան խաբիր նորից ինձ
 Եւ յուսախաբիր,
 Միայն թէ՛ նրան չտեսնեմ տխուր,
 Այդպէս լալագիւն, իր վիզը ծռած՝
 Կանգնած տան շեմքին...
 Դու, ո՛վ սպասում, մի՛ թող, դու մի՛ թող,
 Որ հողը ծարաւ
 Երկար սպասի անձրեւին վարար-
 Թող նա շուտ տեղայ,
 Եւ մոլախոտի ու փշի փոխան՝
 Սինձ ու դաղձ ծլեն,
 Ու ծլարձակի հասկը մի օրում,
 Հաց դառնայ, հասնի քաղցածի քերան:
 Թող հասնի միբզը մի գիշերուայ մէջ՝
 Սիրող ազգկայ հայնացքի տակ թէժ-
 Սէրը պարմանի ու պարմանուի ու
 Սրտում բողբոջի ու պայթի մէկէն:
 Մի՛ թող, դու մի՛ թող, որ կոյսը ծամի
 Եզունգներն իր,
 Երբ սպասում է ժամագրութեանը
 Նա իր առաջին:
 Եզիր դու բարի ու մի չարչարի

Նրանց փութր հոգիմ՝
 Քաշշուֆով քո ու յապաղումով,
 Ակնկալիք ի չիք դարձնելով
 Մի անակնկալ ու գէշ փորձանքով...
 Եւ մօր կողքերը, կոնֆերը մրա,-
 Ազեղն այդ լարուած,-
 Զայլակերպունեն թող.
 Ինն ամուսնայ տեղ՝ վաթսունինն օր
 Մայրը թող կրի բեռն իր մանկան,
 Որ կողերն իր շտման այդքան:
 Դու, օ՛վ սպասում,
 Յոյսի, Հաւատքի երկուորեակը դու,
 Լաւութեան դիմաց՝
 Փոխարինութեան, օ՛ր, դու միամիտ
 Ակնկալութիւն,
 Որ օրօրեց մեզ թէ՛ քուն, թէ՛ արթուն:
 Ես հայ եմ, գիտե՛ս.
 Համբերութիւն է միւս անունս.
 Ես լաւ եմ ծանօթ քո լեզուին անխօս,
 Քո խոստումների դիրքակութեան,
 Դառնութեանն անուշ,
 Տուած յոյսերիդ մաւաքելութեան,
 Տե՛ս, ուշանում է, շա՛տ է ուշանում
 Այն մէկը, որին դու շատ լաւ գիտես,-
 Անառակների անառակն է այն,
 Արդարութիւն է մրա անունը.
 Ո՞ր է արդեօք նա, որտե՞ղ է կորել...
 Ասեցի՝ հայ եմ, Տոկունութիւն է միւս անունս,
 Բայց վա՛յ թէ հատնի համբերութիւնս.
 Ասա՛, այդ ասա՛ դու մեր թշնամուն,
 Հասկացրու մրան,
 Թէեւ նա անվերջ խուլ է ձեւանում...
 Սպասե՛նք պիտի արդեօք մե՞նք մօրից,
 Ի սպաս դնենք
 Ե՛ւ սիրտ, ե՛ւ հոգի,
 Ե՛ւ աչքերի լոյս,
 Ու մնամք անյոյս, անտուն, անկայան...
 Լսո՞ւմ ես ձայնը կարմրաշէկ արեան,
 Որ անմեղօրէն թափուեց սեւ մի օր.
 Նրա ամէն մի կաթիլը հիմա
 Դառել է բողոք կրակալեզու,
 Շաչում է բարբառ...

— Թօթափի՛ր ինչ որ սրտմաշուկ է լուկ,
Տագնապ է ու տենդ գգնաժամային
Եւ սաղբանք է պիղծ.
Հասկացի՛ր հային,
Լսո՞ւմ ես դու ինձ:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Թող ես հաւատամ մի մանկան նման.
Կասկածը բնաւ էլ չճանաչեմ,
Եւ առանց վախի ես սիրտս բանամ,
Թռչնի պէս թեթեւ թռչկոտե՛մ, կանչե՛մ:

Թող չկասկածե՛մ, թող ես հաւատա՛մ,—
— Սեւ ամպը ցրիր, տուր հաւատք ինձ, Տէ՛ր,
Տուր մանանեխի հատի չափ անգամ,
Որ կարողանամ «լեռներ փոխադրել»,

Փոխադրել այս կողմ՝ Լեռը լեռների,
Ու քարը փշրել սրտերի դաժան.
Զլինի ո՛չ ոք՝ ո՛չ ոքի գերի,
Ոչ՝ ագահութեան, ոչ՝ փառքի էժան:

Թող փոխադրեմ ինձ ճղնիմ ԵՍից դուրս,
Միտեմ դէպի վեր՝ լոյս ամպի նման,
Ու փարուեմ հովին, ծառերին սնդուս,
Տեղամ անջրդի դաշտերին խոպան:

Թիթեռի նման թռչեմ թփից թուփ,
Հողի պէս թեթեւ՝ հասնեմ ամէն տեղ,
Հոգին իմ որպէս կախարդանքի տուփ՝
Ամէն հիւանդի դառնայ ճար ու դեղ:

Եւ ինքնամոռաց՝ թռչնի պէս ազատ,
Սլանամ ինչպէս սլացքը նետի,

Թեւածի հոգիս ԵՍից ձերբազատ,
Նաւի՝ հակառակ հոսանքին գետի:

Հաւատամ, որ մահ չկա՛յ, չի՛ եղել,
Որ ցնորք է դա, կատակ է այդ սին.
Յաւիտենութեան ճամբից մեզ շեղել,
Մատնել է վախի մեզ մտացածին:

Թող հաւատամ ես մի մանկան մման,
Կասկածը բնաւ էլ չհանաչեմ,
Հոգով մանկացած՝ ես թեթեւամամ,
Ու գարնան մման նորից կանաչե՛մ:

ԽԵՆԹԸ

Ծիծաղում եմ ես բարձրաձայն, -
Մե՞ղք է միթէ լինել անկեղծ.
Ծիծաղս է մերթ լացի մման,
Փոքր եմ՝ փոքրի, մեծի հետ՝ մեծ:

Ինչ խորհում եմ, ա՛յն էլ ասում,
Ձեմ պահում այն սրտիս խորքում.
Շատերին եմ ես հակասում,
Նրանց խօսքն եմ յանախ հերքում:

Որքան էլ որ լինեմ խելօք,
Ասեմ խօսքեր ես իմաստուն,
Ձի հաւատայ էլ ինձ ոչ ոք,
Ձի հասկանայ ցաւս անհուն:

Թէ սխալը ճշմարիտ է,
Ճշմարիտը՝ եթէ սխալ՝
Կեանքը մեր այս ապա դիրտ է,
Ինչպէ՞ս լռել ու չմխալ:

Ա՛խ, քանի՛ հեղ, ինչպէս մանուկ՝
 Հաւատացել ձեր սուտ խօսքին,
 Խաղացել եմ աշակապուկ,
 Զոհ եմ դարձել ձեր խաբկանքին:

Գուցէ ո՛չ ոք դեռ չի սիրել
 Ինձ պէս՝ դառն դատող մարդուն,
 Նրա ցաւը սրտանց կիսել,
 Դատարկ ձեռքով-դարձել է տուն:

Զի դողացել դեռ ո՛չ մի սիրտ
 Իմ սրտի պէս սիրոյ համար.
 Ոչ էլ եղել ինձ նման բիրտ՝
 Խոստումների դէմ անկատար:

Ինչպէ՞ս, ինչպէ՞ս ես չնչամ,
 Խոր հրնուամփց ես չարտասուեմ,
 Զհանեմ ես սիրտս ու տամ,
 Հոգիս ավիս պէս չբացեմ՝

Անկեղծ մարդու խօսքի դիմաց,
 Նուիրումի ու պարզութեան,
 Երբ շուրջը քո դաւ է ու լաց,
 Սով է սիրոյ ու հեղութեան.

Երբ ես օրպէս ախորական՝
 Իմ մեղութեան անապատում,
 Զո՛ւր փնտռեցի ես մոզական
 Ովասիս մի սիրոյ խնդուն:

Ինչ որ գտայ միբա՛ծ էր լոկ՝
 Յնորական ու խաբուսիկ.
 Յաւը նոյնն էր՝ խո՛ր, անամոք,
 Ու ծաղկատար ռոտեր բոբիկ...

— Ի՞նչ էք նայում ինձ այդպէս խէք,
 Խուսափում էք խօսել ինձ հետ,
 Փսփսում էք՝ խե՛նք է նա, խե՛նք,
 Ու փախչում էք, կորչում անհետ:

Խոնաւ աչքերիս հայելում,
Ախր, միթէ չէ՞ք տեսնում դուք,
Խոր տառապանքը անհատնում՝
Տագնապահար դարի մարդու:

Այո՛, խենթ եմ, խենթանում եմ
Ի տես սրտից բխած խօսքի,
Լաւ քնկերոջ շնչիցը չերմ,
Թաց աչքերից անքիծ կոյսի:

Խենթանալով խենթանում եմ
Նաեւ այսօրն նենգ ու դաւից.
Չխենթանամ, ինչպէ՞ս փրկեմ
Հոգիս այս խոր, մութ անձաւից:

Խենթ եմ ես, խեղճ՝ հաւատով լի,
Որ դագաղն է կրում ուսին,
Դուք մեռեալ էք մի կենդանի,
Միսն էք ուտում մէկդ միւսի...

Ո՛հ, ձեր աչքին դեւ է Սեւը,
Իմաստունը՝ խել է, յիմար.
Մտնով շիլը ու թեթեւը՝
Խելամիտ է, ես՝ խելագար:

Դեւ ու սեւ է ձեր չար հոգին,
Որ ձեր աչքերն է կուրացրել,
Ահա, սիրտս ձեզ փրկագին՝
Շա՛տ սրտեր է այն լուացել.~

Առէ՛ք, կերէ՛ք, տաք հացի պէս,
Եւ արիւնս՝ գինու նման
Խմեցէ՛ք, որ ամենատես
Դառնան աչքերը ձեր մեղսական:

Ի՞նչ փոյք յանախ ինձ ծաղրէ՛ք դուք
Ու կատակներ անէ՛ք անհամ,
Թող լինի ցուրտ, բորան ու բուք,
Նորից փողոց ես դուրս կը գամ

Ու կը փայլեմ ձիւն ու ցրտին,
 Ուտաբոքիկ՝ Սոկրատի պէս,
 Եւ կը տամ ձեզ հարցեր կրկին,
 Բայց հոգուցն իմ յայտնատես

Դուք կը փախչէի խելակորոյս,
 Եւ կը նիւթէի դաւեր պէս-պէս՝
 Յուդայի պէս աստուածախոյս,
 Զի դուք գիտէ՛ք, թէ ո՛վ եմ ես,—

Այդ դո՛ւք էի խենթ, արդեօք, թէ ես:

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Շնչում է հոգը.
 Արգանդի անդոզ պատերը խոնաւ
 Զգում են տակաւ ներծծուող ջերմը,
 Ու բեղմնաւորման երկունքով բռնուած՝
 Մի դոզ է անցում մարմնովը նրա.
 Մայրանո՛ւմ է նա:

Յառնում է տակաւ հատիկը մեռած
 Ու ձգում է վեր մարմինը վերածին՝
 Արգաւանդ եռդի աւշով արբշիռ,
 Ու շողմ է արեւի ըմպում առաջին:

Շուրթը խոխոջում առուակի շրթին՝
 Ուրախ լալիս է մի պատառիկ ձիւն
 Ու ձուլում՝ նրա երգեցիկ երթին:
 Ուռենին է արդ դոզում հեշտանփից՝
 Անձնատուր եռփն իր կանաչ արեան.
 Ուռչել են նրա պտուկները թուխ
 Ու պայթել անձայն...
 Եւ ես քախծանքով մի կաթտագին՝
 Արբունքն եմ յիշում իմ անապական:

Զուգուել է ահա բալենին ծիծղուն՝
Հարսենի ճողով իր փրփրագեղ,
Ու ես իմ անմեղ, մատաղ սէրն եմ
Յիշում առաջին:

Կտցում եմ, կտցում՝ իրար անխնայ,
Մի էգի վրայ՝ տատրակներ երկու,
Ու յիշում եմ ես այն մարալներին,
Որոնք իմ սիրոյն, խանդից տենդագին,
Կռուշտեցին զուր, ու բեկուած սրտով,
Թողեց, հեռացաւ նրանից մէկը՝
Դառնօրէն լալով...

Հոգը բուրում է արեւ ու կանաչ,
Կոյս հեռուններում արտայտն է կանչում
Ու կանաչում է հովիտը սրտիս:
— Ե՛րբ ես դառնալու,
Հոգի՛դ իմ, հոգի՛ս...

ՍՊԱՍՈՒՄ

Սպասումն էլ հանգիստ չի տալիս,
Կանգնել է հիմի իմ սրտի դրան
Ու ներս չի գալիս:
— Դո՞ւ ես ուշանում,
Թէ՛ ե՞ս եմ ի զուր շտապում այսօր:

Սպասումը, տես, է՛լ չի սպասում,
Իր մատներն է կրծում անդադար...
— Հասի՛ր, քանի դեռ
Զի նետել իրեն
Այս բարձունքից
Վար...

ԱՐՄԱՆՏ

Ս. ՓԱՆՈՍԵԱՆ

ԶԱՆՁՆ ԻՄ ՓԱՌԱԻՈՐԵԱԼ

Մեծ քաղաքին արխատկրատիան, բազում բարձրու կարգին, Եւրոպային ընդօրինակած էր Եւրոպայի սովորութիւնը: Պարոն Միշէլ Ազմարի փակել կու տար վաճառատունը ժամը մէկին եւ, Թիւտորին հետ քալելով՝ կը հասնէին տան դրան առջեւ: Զամբուն հեռաւորութիւնը չէին զգար, որովհետեւ ազան խօսքով կը տարուէր, իսկ Ռամիկեան՝ իր ներքին նորարոյս միտքերով: Պարոն Միշէլ կ'ըսէր.

— Արեւին մէջ քայլել եւ քրտինք թափելը բաներ են, որ կը փակեն բոլորին առջեւ տան դուռը, կը հասկնա՞ս, Թիւտոր: Դուք անապատին մէջ ելած ես այդ երկու բանով. ես պէտք է հասնիմ քու վիճակիդ: Ուրեմն, պիտի քալենք մէկն օր արեւին տակ: Տան առջեւ հասանք...: Հիմա, Թիւտոր, տղաս, դուք ազատ ես ուզածդ տեղը երթալու, միայն երեկոյեան շատ չուշանաս, օղի մը նետենք միասին:

Այսպէս էր եղած սովորութիւնը: Սակայն այդ օրը Թադուր կեցաւ վաճառատունէն հարիւր քայլ հեռու անկիւնադարձի մը վրայ եւ ըսաւ քաշուեալով.

— Կը ներկեմ, ազա, կարեւոր գործ ունիմ. մինչեւ տուն երթ ու դարձը բաւական ժամանակ պիտի խլէ...

Ազան հետաքրքրուեցաւ.

— Այդ ի՞նչ գործ է, որ ինձմէ գաղաւթի կը պահես, Թիւտոր:

— Այսինքն՝ գործ չէ, այլ՝ տեսակ մը պարաուորութիւն:

— Հըմ, ո՞վ կը պարաուորեցնէ:

— Ի՞նչ գիտնամ. սանկ... ըսուեցաւ որ...

Պարոն Միշէլ բռնեց Ռամիկեանի թեւէն.

— Կը տեսնեմ, որ չեղուիդ տակը բան մը ունիս... Նըսե՞ս, հը՞:

Ռամիկեան չէր ուզեր միտքը յայտնել աղային. կ'ուզէր գաղտնի պահել երթալիք տեղը: Արծաթ գօտին կը նեղէր մէջքը: Ազան կրնար ընկերանալ իրեն եւ երբ հանուէին, ան երեւան պիտի բերէր արծաթ գօտին գաղտնիքը, զինքը ամբաստանելով իբրեւ կասկածելի բնաւորութիւն: Աղանշատ ստիպեց եւ Թադուր բաց թողուց գաղտնիքը.

— Հասարակաց բազնիքը պիտի երթամ...

Պարոն Ազմարի հրճուեցաւ փոքր տղու պէս.

— Բաղնի՞ք. օհօ՞, այդ ի՞նչ հրաշալի միտք ես յղացեր: Հոն, մարդ քիչ մը կը մաքրուի արտաքին կեղտերէն, ինչպէս եկեղեցի երթալը՝ սիրտի մեղքերէն,

բալետ կարճ պահ մը եւ Ռամիկեան զգաց, որ կտրուած էր ժաղէ թելէ մը՝ ան—
զունգին վերեւ։ Կը զզլար Հիմախնդրանքին համար եւ կը ժաղթէր ինքն իրեն,
որ աղան մերժէր զինք...

Բայց պարոն Միշէլ վրայ տուաւ մէկէն.

— Գեղի բան մը ըսե՛մ, քալէ՛, միասին երթանք ներվանա, այսինքն՝ ոչ
թէ դժոխքին կրակներուն մէջ նետուինք, այլ տաք շոգիներու տակը մտնենք
եւ լաւ մը քրտնինք։ Իմ տարիքիս մարդուն մորթը քիչ մը կարծր կ'ըլլայ,— եւ
առարկութիւնը չվերցնող հաստատուն քայլերով մտաւ նեղ փողոցը, որ շնչ—
տակի կ'երթար բաղնիքին վրայ։

Թաղւոր Ռամիկեան լեցուեցաւ ինքն իր դէմ. զիջլը, յիմարութիւնը եւ
այն զգացումը, որ բարկութիւն կը կոչուի, մէկ զրօշակի առկ՝ յարձակեցաւ
լիդերուն վրայ, քայքայեցին կամքին դիմադրականութիւնը եւ անոր ստիպե—
ցին ակամայ քայլի...։ «Հապը կլլեցինք, Թաղւոր, երբ ժօրմէ մերկ դառնաս,
ո՛ւր պիտի խոթես արծաթ գօտին... ըսէ՛, ո՛ւր պիտի խոթես...»։ Եւ մաքով
զոնհիկ արտայայտութիւն մը ունէր, որմէ ինք չամչցաւ, բայց լեզուին վրայ
հանելէ քաշուեցաւ։ Լեցուեցաւ աղակնով զէմ, սպասուհիին դէմ՝ «փոխորդ—
նեւր կը շարլիկեն եղբւր պառաւին նուրը ձեռքերը...»։ Լուսիւնը հետզհետէ
խտացաւ, մտահոգ զոյներու երանդ ստանալով։ Արծաթ գօտին քկսաւ սեղմել
մէջը, զինք շնչահեղձ դարձնելու աստիճան։ Ընար լուսնէր. հնազանդեցաւ ճա—
կատապիրիս եւ հլու—հնազանդ մէկու մը պէս, իրրեւ իրական ծառայ տիրոջը՝
քալեց անոր ետեւէն...

Իր ծննդավայրը վերադարձող կարօտահար մարդու պէս, Միշէլ Ազմա—
րի դիտեց նեղ փողոցին երկու կողմերուն անմայթ նսաած հին տուններուն
պատն ու պտտուեալը, կարծէք՝ հին ծանօթներ կամ բարեկամ տեսնելու յոյ—
սով։ Դեռ երեկուան պէս, կը յիշէր այս ճամբան եւ ձիակառքին անիւներուն
զոզոզոցը կ'արձագանգէր ականջներուն մէջ։ Ամսուան մէջ մասնաւոր օր մը
ռեզիմալ էր քաղաքին բարձր դասին կէն ու աղջիկներուն։ Միշէլ ունէր այն
տարիքը, երբ ժօրը հետ բաղնիք կու գար, որմէ չէին խրտչիւր հուրի—փերիները։
Երբեմն, անոնցմէ մէկն ու մէկը կ'առնէր զինք մերկ ոտքերուն միջեւ եւ կը
լողցնէր...։ Հէյ—հէյ, ինչ լաւ, երանելի օրեր էին...։ Դարձաւ ետեւ.

— Քալէ թիւաոր, ետ մի մնար, հիանալի անակնկալ մը պիտի ընենք
մեր հաւնմին. պիտի դարձանայ, բայց պիտի բարկանայ, որ փոխնորդ սպի—
տակեղէն հետերնիս առած չենք. խոզ պիտի անուանէ մեզ... սակայն, մենք
խոզ չենք, այլ հայր եւ որդի, ներվանա մասած եւ էլած մաքրամաքուր էակներ,
այնպէս չէ՞, Թիւաոր։

Սալարկուած վերելք մը պիտի նուտնէին։ Պարոն Միշէլ ձեռքը դրաւ
Ռամիկեանի ուսին.

— Մեր քաղաքը անհարթ, դար—վար հողի վրայ հիմնուած, բլրակողեր
տակառած քաղաք է...

— Եստ կը յոգնեցնէ ոտքով քայլողը,— արձագանդի պէս յարեց Թաղ—
ւոր, զգալով աղային ձեռքի ծանրանալը ուսին,— աղա, գուք կառքով գալու
էիք, շուշերնիդ կը հեւայ ու կը կտրի...

— Ընդդէմ, ծերացանք, տղաս. ըսել ուզածս այն էր, որ կեանքն ալ կը
նմանի մեր քաղաքին՝ դար ու վար հողերու վրայ է հիմնուած, աստիճանաւոր
վերելք ու վայրէջք. տեսար՝ բարձր գիւղի վրայ կանգնած մէկը յանկարծ իջաւ
ստորաւոր աստիճաններուն եւ ստորտնէն ելաւ ուրիշ մը գէպի երկինք։ Ասա—
ւած մերժեց ինծի բաշխել որդի մը, որ կրէր ծերութիւնս իր ուսին...։ Հիմա,
դուն կը բռնես չեղածին տեղը։ Բաղնիքին մէջ դուն է, որ պիտի քերես
կոնակս, ատիկա մեծ բաւարարութիւն է ինծի համար։

Հասած էին։ Արարական հին եւ ծանր դուռը ճանչեց իրենց մուտքին։

Հանդերձաբարձին մէջ թիչ մարդ կար: Յարմարեցան բաց անկիւնի մը վրայ: Խորքէն կը լսուէին բաղնեքաներուն, պոռպոռոցի ու երգողի խուլ ձայներ: Պարոն Միշէլ անմիջապէս հանութիւն սկսաւ: Ռամիկեանի դանդաղկոտութիւնը նշմարեց, երբ գրեթէ մերկ էր եւ ծառայողներէն մէկը կը փութար քովը՝ ցամաքոցներ ուսին նետած:

— Անպարտ, Թիւտոր, մի տնտնար, որ միասին ներս երթանք:

Ռամիկեանին կը մնար վրայէն նետել վերնաշապիկը, բայց ահա ան կը թուէր փակած ըլլալ արծաթ գօտիին, որմէ փրցուելու պարագային՝ ամբողջ չափիկը պիտի պատուէր, ա՛յ աւելի ծանրացնելով իր յանցանքը: Այո, Թազուոր, այլեւս յուսահատ, կը խորհէր, թէ ինչ մեղանշած էր աղային հանգչի, գաղտնի պահելով ունեցած գեղիները: Ի՞նչ պիտի պատահէր վերջը, ազան պիտի շարժուէ՞ր միթէ, երկու տարիէ աւելի գաղտնի թողուած արծաթ գօտիին համար: Մտաքրել վիճակ մը ունէր. եթէ ազան բարկանա՞ր, կը խորհէր, իրեն առջեւ փակուած պիտի ըլլար Բախտիմ միակ քաց Թամբաւ...: Գոցեց աչքերը եւ մէկէն նետեց վրայէն վերջին շորը: Աղան շարկացաւ, այլ միայն ծիծաղը բռնեց գինը.

— Օ՛, այդ ի՞նչ կոշտ քալսիման է, Թիւտոր:

— Արծաթ գօտի է, մօրմէս մնացած յիշատակ...

— Ինծի թանկագին բան կ'երեւի. հայկական ձեռագործ է, ազան մատներով չօւսփեց նախուս մետաղը, — ինչո՞ւ կը պահես ինձմէ...

— Կտակով ըսուած է, որ մէջքէս վար շառնեմ դայն, — կ'միայնով վրայ տուաւ Թազուոր, — մէջը բան կայ...

Պարոն Միշէլ ձեռքով նշան ըրաւ, որ ան մօտեցնէր ականջը իրեն:

— Դեղին ոսկի:

Ռամիկեան զիխով գրական պատասխան տուաւ: Ապա աւելցուց.

— Մօրաքոյրո, մահուան սնարին, հոգեվարքի մէջ երգում ընել տուաւ, թէ չքակեմ մէջքէս եւ գաղտնի պահեմ շար աչքերէ. արծաթ թանկագին գօտի է, ըսաւ, կը փորձուին գողնալ եւ խլել կհանքդ...

Թազուոր յուզուեցաւ. գուցէ առաջին անգամ յիշեց մօրաքոյր Աննան եւ սուտը խաբանեց կոկորդը:

Ակամայ, նման պարագաներուն՝ յուզումը կ'անցնէր դիմացիներին: Աղան եւս յուզուեցաւ.

— Բոլորիս վերջը մահն է. ուղենք կամ ոչ. ուրեմն, մօրաքոյրդ իր բանաւոր կտակին մէջ սխալ մը գործած է. ոսկին անծին է. մութին մէջ մնալով չի բազմանար, իսկ դրամը, ոսկի, արծաթ կամ թուղթէ՝ պէտք ունի շարժումի եւ գիտակից ձեռքերու մէջ անիկա կը բազմապատկուի, չփուելով ինքն իր հետ, կրցի՞ հասկցնել: Միւս կողմէ, դու, որ ինկած ես առեւտրական առպարէզ, յանցաւոր ես նոյնքան: Ձէ՞ որ քեզ տնեցի կը համարենք. պահած ըլլալդ լաւ բան չէ, ինչ որ է, հիմա խորհի՛րք դայն ապահով տեղ մը պահել: Իսկ լաւագոյն տեղը բաղնեպանին սնտուկն է, որ կը տեսնես հոն, քովը: Բաղնեպանները աչխարհի ամենամիամիտ, ազնիւ եւ խղճամիտ մարդիկն են. պահ գրուածը տիրոջը կը յանձնեն պատիւ զգալով եւ եթէ քսանհինգ դահեկան տուիր՝ հազար մաղթանքով բարձուած հոգիդ առ եւ զնա՛...

Արծաթ գօտին, այլ մանրուք իրեր, դրամապանակ եւ հաւատամքը բաղնեպանին մօտ պահ զնելով, պարոն Միշէլ եւ Թազուոր մտան լողեմշուշով պատած մերկանդամ մարդերով աղմկարար աշխարհը, հնչեցնելով փայտածուեկներու երգը: Գուռի մը մօտ, անոնք երկնցան տաք քարին: Միշէլն քրտնակալելը, պարոն Միշէլ հաշուեկշիռը ըրաւ Ռամիկեանի դրամազուխին: Քառասունինն զեղիներ այդ օրերուն կոկիկ գումար մըն էր.

— Թիւտոր, տղաս, ես եւ էմիլին համաձայն պիտի ըլլանք, եթէ ուզես,

վաճառատան բաժնեկիցը դառնայ: Քու գրամդ կը ներմուծենք ընդհանուր գումարին մէջ եւ տարեկան շահաբաժինի իրաւունքդ կը ստանաս աւելիով: Յիսու նդ կը դառնայ հարիւր, կը կրկնապատկուի, կ'եռապատկուի հետզհետէ եւ օր մըն ալ քեզ մատով ցոյց կու տան՝ իբրեւ քաղաքի հարուստներէն մէկը: Կայ նոյնպէս զիս փոխարինելու հաւանականութիւնը, երբ ես գործով ծերոպա այցելեմ...

Ռամիկեան անցած էր աղային կոնակի կողմը եւ կը քերէր մէջքը: Մտիկ կ'ընէր իր տիրոջ խօսքերը, իբրեւ հեքիաթ մը: Ընդհանուր կը պատկերէր այն աշխարհը, որուն գովքը կ'ընէր ծեր պարոն Ազմարի: Ռամիկեանի երեւակայութիւնը հարստութեան անջրպետը կը կտրէր սաւառնելով: Մանաւանդ այն հաւանականութեամբ, որ աղան յաճախ պիտի բացակայէր քաղաքէն: Ի՞նչ պիտի պատահէր, աղակէնը ինչպէ՞ս պիտի վարուէր հետը...: Անգիտակցաբար չէր, որ ըրաւ անգաղտնապահ հարցումը:

— Մինակնի՞դ պիտի կատարէք ճամբորդութիւնը:

— Ի՞նչ կ'ըսես, տղաս: Ըրջապտոյտի՝ պիտի ելլենք եւ ըրջապտոյտը առանձինն իմաստ չունի: Գուցէ տեւէ ամիսներ, եթէ ոչ տարի մը: Մեր էմիլին հոգի կու տայ նման առիթներուն...: Դէ՛, կը բաւէ կոնակս չփես: այժմ, անցիւր զիմացս, որ թու կոնակդ ալ ես քերեմ—չփեմ, սերվիս փուր սերվիս, ինչպէս կ'ըսեն մեր ֆրանսացիները:

Թէ ինչո՞ւ մէկէն գլուխը դարձաւ եւ միտքերը պղտորեցան, Ռամիկեան չկրցաւ բացատրել: Բուժ ցաւ մը զարկաւ սրտին ու անցաւ:

— Ո՛չ, շնորհակալ եմ, ձեզ չեմ ուզեր յոգնեցնել: Ես ինքս կը փորձեմ չփել կոնակս: Ձէ, աղա, իմ պարտականութիւնն էր ծառայել աղայիս: Իսկ իմ կոնակիս Թող ծառայեն ձեռքերս:

— Դու ե գիտես, տղաս, արդէն ջերմը թմրեցուց անդամներս: Հրաշալի լողանք առի, մերսի...

Երբ մաքրուած եւ լաւ մը ծնծուած էր իրենց մարմինը տաք ջուրի տակ, ելան մուշներու աշխարհէն լոյս աշխարհ: Նստեցան պահ մը ցամաքեցներով պլլուած: Ապա, երբ կը սկսէին հագուիլ, Թազուր կը դիտէր աղային գիրուկ եւ քիչ ցնփորուած մարմինը, որ աչքէն չէր հեռացած տաք քարերու վրայ երկարելէն ի վեր, բաղդատութեան եզրերու տհաճ համեմատութեան զոհ ընդունենալով տիկին էմիլին...

— Ուշ մնացինք, Թիւտոր, մթնեցաւ արդէն: Հիմա, մեր տիկինը իրապէս իրաւունք ունի մեր վրայ բարկանալու: Ըսու շտուկի:

Ռամիկեան կապեց գօտին, հագաւ արագ եւ օգնեց աղային, որ տեղէն վեր բարձրանայ: Դուրսը, բարակ հով մը զարկաւ Ռամիկեանի երեսին եւ ան զգաստացաւ:

— Ե՛րբ պիտի երթաք:

Աղան կապ չէր պահած Ռամիկեանի ներքին խոհերուն հետ, ուրեմն պարզապէս տուաւ ճշգրիտ պատասխանը:

— Հիմա:

Իրենց բախտէն, միակառք մը կ'անցնէր հոնկէ: Պարոն Միլիէ կեցնել տուաւ: Բարձրացան կառքը եւ աղան տուաւ թաղին եւ փողոցին հասցէն: Ձին վարեց. անիւները սկսան քնարեր մեղեդի մը նուագել:

Տունէն ներս, պարոն Ազմարի զուարթ տրամադրութեամբ յարձակեցաւ կնոջ վրայ:

— Էմիլի, գիտցիր, թէ ուրկէ՞ կու գանք:

Աղակինը սրդողած էր իրենց ուշանալէն, չկրնալով կատարել մտադրածը, անակնկալի եկած՝ ըսաւ:

— Քապարէն...

— Ուրկէ՞ դտար այդ անպիտան բաւը:

— Մոզէ՞ն...

— Օհօ՛, մուկ որսայն էր պակաս. ըսէ՛ ուրկէ՞ եկանք:

Տիկինին աչքերը խաղ կ'ընէին ամուսինին եւ թիչ հտեւ կանգնած Թազուրի գէմքերուն վրայ: Մէկէն պահ մը սառնեցան Թամիկեանին վրայ եւ զգաստ՝ գարձան դէպի էրկանը դէմքին. կկոցուեցան.

— Ո՛ւրկէ եկաք. ըսեմ՝ անպիտան եւ խայտառակ փիլմ ցուցադրող շարժանկարի սրահէն. դէմքերնէ՞ գայտնի է...

— Օ՛հ, հօ՛. այդ ի՞նչ հրաշալի-հրէշային միաք էր, որ յղացաք, տիկին. մենք, ես եւ Թիւտոր պարզապէս բողոք կը բարձրացնենք, յայտարարելով, թէ՛ կիները կը զրկարտեն իրենց էրիկները, որոնք անմեղ են, իսկ մեր կնիկը ո՛չ կռահել գիտէ եւ ոչ ալ եզրակացնել, երբ մենք մաքուր մարմնով մաքուր տեղէ կը ժամանենք...

— Ուրեմն, բաղնիքէն կու գաք. հրաշալի՛... միայն թէ խողերու պէս ըրած էք. մաքրուելէ հաք, նորէն ցեխին մէջ մտած էք: Շուտ, փոխուեցէք, թէ ոչ պատժուած էք անօթութեամբ:

Պարոն Ազմարի գնաց դէպի կինը եւ անակնկալ եղաւ իր պազը անոր այտին: Տիկին էմիլի կարմրեցաւ. Թիւտորէն ամչնալով, բայց պարոն Միշէլ կանխեց դիմք.

— Դէ՛, այնքան ալ խողութիւն չէ ըրածնիս, պառկելու ժամանակ ալ կրնանք փոխուիլ. դուս միայն լաւ սեղան չտէ, խօսք եմ տուած Թիւտորին, որ աղէկ մը պիտի կոնծենք, հրաշալի գործ տեսնելնուս համար:

Տիկին էմիլի չհետաքրքրուեցաւ այսիւս երկու այր մարդոցմով: Խոհանոց անցնելէ առաջ կողմնակի ակնարկով մը շափելով էրիկին յաղթ հասակը, ըրաւ. կատակախառն դիտողութիւնը.

— Զսպանակներդ, յարգելիս, չթուլցնես երբեք. օտար աչքեր կը դիտեն քեզ, որովհետեւ լեզուս կերած են բաղնիքի մուկերը...

Անցնելով խոհանոց, դրկեց Մարիամը խորհրդաւոր առաքելութեան մը, ինչ ստանձնելով սեղանին յարդարումը: Կ'երեւէր, թէ ինք ալ բաղնիք առած էր. գլուխը փաթթած էր վարդագոյն նուրբ ցամքոցով եւ կը կրէր ասեղնագործուած թափանցիկ գիշերազգեստ մը, որուն համար զգուշաւոր էր դէպի սպաններն ու դէպի կերակուրի սանը: Միտքը զբաղուած էր. կը թուէր, թէ ներաշխարհին մէկ մութ անկիւնը փակուած, կալանաւոր զոյգ զգացումներ, անհարգատ եւ օտար վախ կ'ազդէին իրեն: Օտար էին, բայց նաեւ ցանկազորոյց դաւադիրներ: Մէկը կոչած էր մեղի, իսկ միւսին համար, կ'ըսէին, թէ կոշուելու էր երկսայրի իզմ... Հոգին խոռովկան մանուկի պէս աչքերը փակած՝ քուն կը կնդդէր, մինչդեռ սիրտը, իրար վրայ զայլարուելով, մէջը առած իզմը՝ խեղդել կը ցանկար: Տիկին էմիլի խոհանոցէն ականջալուր եղաւ արծաթ գօտիի մասին եղած խօսակցութեան: Ամուսինին ծայրը խորթ կը հնչէր սրահէն: Առաջին խորթ զգացումն էր, որ ծնաւ. մէջը հանգէպ էրկանը: Ու զարմացաւ, թէ ինչո՞ւ յանկարծ աչքին երեւցաւ միրաժային շափերով արիւնոզ վարդակոկոնը, զոր կրած էր պահ մը, սուտ լամբակի մը անցուածի պէս... Մաւրիամի ոտնաձայնը զգաստացուց ուշքը: Երբ նայեցաւ անոր, Մարիամ գլխով միայն տուաւ հաստատական պատասխանը.

— Լաւ, հիմա ընթրիքը բեր սեղան, — եւ ինք եղաւ խոհանոցէն: Սրահ մտնելով՝ տիկին էմիլի յարձակեցաւ պարոն Միշէլին վրայ.

— Լսեցի, որ վաճառականական նոր ընկերութիւն մը հիմնելու վրայ էք, եւ իրրեւ դրամագլուխ արծաթ գօտի մը կայ մէջտեղ. իմ գոհարեղէններս ալ խնդրոյ առարկայ չե՞ն միթէ...

Պարոն Ազմարի ժպտերես իրեն նայեցաւ.

— Ոչ, տիկինս, դու և նոր կամ հին ընկերութեան ցկեանս նախադասուհին ես ու կը մնաս: Դու և ես մնայուն սիւնը պիտի ըլլանք, իսկ պարոն Թիւտորը մեզ պիտի ծառայէ իբրեւ յենակ. այնպէս չէ՞, պարոն Թիւտոր, տղաս: Ռամիկեանի ժպիտը ինքզինք կարեւոր անձնաւորութիւն համարող նոր ձեռք ժպիտ մըն էր: Տիկին Էմիլիին համար անսիրելի թուեցաւ այդ քմեքմեայէն ժպիտը:

Ու այն դիրքը, որ բռնած էր Էմիլի, զարմանալի տպաւորութիւն թողուց ամուսինին վրայ: Հռոմէական կամ յունական մարմարէ շաստուածուհիի սառնութեամբ ցանկայարոյց Աֆրոտիդէ մը, որուն մասին կարդացած էր յունական դիցարանութեան նուիրուած գիրքի մը մէջ: Փոխարեքական այս նմանութեան առջեւ՝ պարոն Ազմարի ունեցաւ ծնողական անկարողութեան ծանր պատասխանատուութեան վիշտը: Ռամիկեան կը յիշէր վարդակոկոնը հրամցուցած օրուան կուսնումներով խառն ու չփոթիլ վիճակը, երբ աղակիւնը երեսին տուաւ զոգութեան յանցանքը: Ռամիկեան զաղափար չունէր դիցարանութեան մասին. անուս, հասպալտ, անձնասէր մէկու մը նախատիպարն էր, իբրը հզած էր մտածողոր ցանկութիւն մը, երբ դիտած էր տիկին Էմիլիին գեղեցիկ կիսադէմքը:

Ընթրիքի սեղանը դրուած էր: Ճոխ էր եւ տօնական օրերու վայել առատութեամբ: Մի՞թէ որեւէ տօն էր իսկապէս: Պարոն Ազմարի այդ կասկածատարածութեան ունենալէ ետք, հարցական նայեցաւ կնոջ երեսին, որ վերջին յարգարուժը կու տար սեղանին: Մարիամ բերաւ—գրաւ այդ օր չուկայէն ապսպրուած կաթոյլի սկուտեղ մը, վրան կլորակ տնկուած տասնհինգ թզալի մոմեր՝ երեք գոյնի: Տիկին Էմիլի միտքին մէջ ունէր հնգամեակները ամուսնական իրենց տարեգարմին, զոր մտահան ըրած էր պարոն Ազմարի: Պարոն Միշէլ ոտքի՝ պիտի գոչէր:

— Այս ի՞նչ տօնական սեղան ես զարդարած, ո՞վ դու կին առաքինի, կիներուն մէջ տեսածներուս, ինչպէս ըսաւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս: Ներող եղիր անուշադրութեանս եւ մոռացումս... կը խոստովանիմ յանցանքս քեզ նուիրով չկարենայ պատուելուս համար,— եւ մօտենալով կնոջ, անոր ձեռքը առաւ ափին մէջ, ապա ծոցեցաւ եւ համբուրեց զայն:

— Մի նեղուիր, սիրելիս, ես ալ վերջին պահուն յիշեցի ամուսնական տասնհինգամեայ տարեդարձի օրը: Կաթոն, ահա կը տեսնես, նոր բերուեցաւ սեղան, անուշափամառին քովէն: Նստեցէ՛ք, խնդրեմ: Պարոն Ազմարի, դուք՝ հոս եւ պարոն Թիւտոր՝ ահա այս աթոռին:

Նստեցան պաշտօնական արարողութիւն կեղծող ծանրախոհութեամբ: Տիկին Ազմարի լեցուց բաժակները կարմիր գինով: Առաջինը պարոն Միշէլ բարձրացուց զաւաթը:

— Կը խմենք, արիւնն այս օրհնուած մեր Տէրով, մաղթելով...— եւ ան չկրցաւ աւելցնել միտքէն անցուցածը, որ անպայման բեղմնաւորութեան իմաստը ունէր, ազդուելով քիչ առաջ ունեցած տպաւորութենէն, երբ կը դիտէր կնոջ գեղեցիկ կիսադէմքը, առաստաղէն կախուած ջահին լոյսով ողորդուած...

— Դէ՛, զու մի տար երեսակայութեանդ, սիրելիս, եւ ընդունէ իրականութիւնը ինչպէս որ է: Մոմերուն առաջին հինգը կը խորհրդանշեն հաւատ—էք, երկրորդ հինգը՝ յոյսը, իսկ վերջինները պիտի խորհրդանշեն երազը. ահա՛ իմ եզրակացութիւնս: Ուրեմն, պարոն Ազմարի եւ գուցէ՛ պարոն Թիւտոր, խմեցէ՛ք այդպիսի մաղթանք մը ի մտի ունենալով...

Տիկին Էմիլի լեցուց սպասները եւ ըսաւ. «Հրամեցէ՛ք սկսիլ»: Պարոն Միշէլ բարձրացուց կրկին բաժակը եւ անակնկալ մը եղաւ, երբ ըսաւ.

— Հիմա ալ խմենք սպասմանը կենացը, քանի որ հոսեւ թողինք հա—

ւատմբ, յայտը, եւ երազը, — մէկ անգամէն կլլել ուզեց գինին, բայց ան դէմ եկաւ խոշարողին եւ հազացուց գինք թափով: — Շամփայնը պիտի ըլլար սեղանին, տիկինս, ես վարժ չեմ գինիի գործածութեան:

— Մարիամը չէ՞ զտած մօտի խանութներուն մէջ. գինիով գոհացիր մտահան պարոն Ազմարի: — Տիկինին ժպտող այնքան հմայիչ էր, որ ոտքի նետել տուաւ ամուսինը:

Պարոն Միշէլ յարձակեցաւ տիկնոջ գեղեցիկ գլուխին վրայ, գրկեց անակնկալօրէն զայն եւ շառաշիւն պազ մը դրաւ այտին: Տիկին իմիջին ըմբոստութիւնը փոխուէր պիտի ծիծաղի, երբ ամօթը երանգ տուաւ այտերուն:

— Դեռ չիմած խումար դարձար, պարոն տը Ազմարի. կը զգուշացնեմ նման արարքի կրկնումէն: Առանձինն չենք, պարոն Թիւտոր նախանձելէն կրնայ շիթ-մոտ-թը կախել. այնպէս չէ՞, Թիւտոր...

— Աղան իր տան մէջն է եւ ես չէզոք կողմ եմ:

— Ապրիտ, տղաս, վաճառականութեան մէջ խելք գործածելը բաւ չէ, պիտի գիտնաս պաշտպանել նաեւ ազայիդ դատը, — պարոն Միշէլ մատով նշան ըրաւ, որ Թազուր գլուխը մօտեցնէր իրեն եւ անկնդծ պազ մըն ալ անոր բաժին տուաւ, ճակատէն համբուրելով:

Աղան բազմած էր սեղանին գլուխը: Էմիլի եւ Ռամիկեան նստած էին դէմ դիմաց եւ անոնց նայուածքները յաճախ կը միտուէին մէջ-մէջի, որմէ խոյս կու տային յանցաւորի պէտ: Պատահմամբ էր, որ անոնց ոտնածայրերը կը զպչէին իրարու սեղանին տակ: Պարոն Ազմարին կը զգար թմբիւրը, որ քայլ առ քայլ կը հետեւէր արիւնին: Առան դեղահատը շուտով ազդեց լեզուին. յօրան-ջեց եւ թլուեցան բառերը:

— Էմիլի, անշափ ուրախ եմ. եփած ես համազամ կերակուրներ, ճաշակդ բարձր գնահատած եմ միշտ, Թիւտորն ալ պակաս չէ, ան իմ կոնսակ չփեց-կակցուց լաւ մը. իսկ իմս եղաւ երեւան հանել թաղուած գանձ մը... Թիւտոր կ'ըլլայ ամբողջով կո... մի նեղուիր, Էմիլի... զուէն միշտ ձախս ես եւ... կը մնաս ձախ բազուկս...

Ակրցաւ շարունակել, լայն յօրանջը բացաւ բերանը:

— Պուշն եկաւ՝ ախորժակէս առաջ...

— Դէ՛, սուտ կատակ չ'ուզեր, իմէ եւ կեր. ի զուր չեմ յոգներ կերակուրներ պատրաստելով: — տիկին Ազմարի դէմ տուաւ գինիով լի բաժակը ամուսինին կզակին, — չիմեցիր, որ գինովնաս, հանգիստի պէտք ունիս, քունդ ծանր կ'ըլլայ մինչեւ առտու...

Ռամիկեանին կը թուէր, որ ազակիներ մասնաւոր հոգ կը տանէր, որ գինովնար ամուսինը: Մինչեւ իսկ խոհանոցէն կանչել տուաւ սպասուհի Մարիամը եւ անոր եւս ոտիպեց խմել. Թէեւ գիւղացի կինը բոլորովին գինի խմած չըլլար կեանքին մէջ: Իրեն հանդէպ զգուշաւոր հեռաւորութիւն ցոյց կու տար. անգամ մը միայն ժպտեցաւ, երբ բաժակը զարկաւ բաժակին եւ յամրածայն ըսաւ.

— Կը շնորհակտութեմ, անգին գօտիի տէր ըլլալդ. ես շատ հաւնեցայ, կաւրիկ՝ էր օր մը անձամբ տեսնել զայն:

— Ինչպէս որ կը փափաքի աղակիներ, սիրով. եթէ կը ցանկաս, հիմա:

— Ոչ հիմա, յետոյ ցոյց կու տաս: — Տիկին Էմիլի անզոյշ շարժումով, որպէս թէ սեղանէն վար ձգեց պատառաքաղը, որ դպաւ Թազուրի ոտքին:

Ռամիկեան ծոծեցաւ սեղանին տակ պատառաքաղը վերցնելու: Իր աչքերը դէմ առին երկու մարմար մերկ գիստերու: Փամանակը իրեն համար կանգ առաւ: Ուզեց գիտնալ, թէ մինչեւ ո՞ւր կը բարձրանար մերկութիւնը, բայց ամօթը խեղդեց զինք, չուրի տակ մնացողի պէս. անմիջապէս շտկուեցաւ. դէմքը կարմրատակած էր. քրտնեցաւ: Տիկին Էմիլի աչքի տակով նայեցաւ

Թագուորին, որ ծուկն գլուխը պնակին վրայ, այնքան ցած, քիթով կերակուրը խառնելու պէս: Այդ շարժումն ծնաւ նոր արկած մը, ձգեց վար իր պատահալքացը: Տիկինն համար որոշ չեղաւ, թէ ան դիտմամբ բաց թողուց զայն: Երբ Թագուոր կրկին վար ծուկեցաւ, երկու ոտքերը անցուցած էին մէջ-մէջի եւ տիկինն էմիլիի գիւնրագոյնսը կը ծածկէր զանոնք մինչեւ փետրագարդ մուծակները: Հիասթափուածի երեւոյթ ունէր, երբ բարձրացուց գլուխը: Տիկինն էմիլի անուշադիր, դարձած էր էրկանը եւ կ'ըսէր.

— Ես երկու կորսուածութիւններու միջեւ մնացած կը զգամ ինքզինքս. դու անցած ես գինովութեանդ սահմանը, պարոն Թիւտոր՝ պատահալքադի հաւաքածութիւնը մը ստանձնած, կորսուած մէկը...

— Եիշդ ես, տիկին տը Ազմարի, ժը քըկըթ մա շնրի. հապը թունդ տեսակէն քնարեր է՝ ուրեմն, քուն ունիմ,— պարոն Ազմարի ելաւ եւ հագիւ ինքզինք ձգած էր բազմոցին մէջ, աչքերը քուն մտան:

— Ահա քեզի փոխութիւն, պարոն Թիւտոր, գինք կրելու ենք մինչեւ անկողինը. զգուշացիր, որ դուն ալ խելքդ չկորսնցնես, քեզ կըողը մարիամը եւ ես պիտի չլսիլանք: Իսկ այժմ, էլիք աղաղ տանինք—դնենք անկողին:

Թամիկեան հագաւ վեր բարձրացնել ու տաքի կեցնել աղան: Թեւեռուն մտան երկուքը այնպէս, որ Թագուոր եղաւ ալ բազուկ, իսկ էմիլի՝ ձախ բազուկ: Աղային կոնակէն անոնց ավերը դտան գիրար եւ շաղկապուեցան, ապահովելու իրրեւ կրուողին մէջը: Թագուոր փորձեց թուշնել օղակը, սա—կայն, էմիլի պինդ կառնած մնաց անոր ավին: Այսպէս կրեցին աղային անդեկ մարմինը մինչեւ մահիճը, դրան նեղուածքին գիրար քաջալերելով, որպէսզի բաց չթողուի բեռը: Ծուռ տուն ին մարդը անկողինին մէջ. տիկինն էմիլի աշխա—տեցաւ. հանել զգեստները, բայց անօգուտ. պարոն Միշէլ քարի պէս ինկած էր անկողինին մէջ: Ի վերջոյ, երկուքը մէկ, լուսնայն ծածկեցին քնացողը եւ ետ եկան ճաշարար:

— Պարոն Թիւտոր, շարունակէ ընթերցդ, ես քիչ մը գործ ունիմ ներսը:

Թամիկեան հասկեցաւ, թէ միեակ պիտի մնար:

— Ախորժակս գոցուեցաւ,— յարեց եւ զնաց զէպի իր սենեակին կողմը: Ինք ալ յոգնած էր, քուն ունէր: Տիկինն էմիլի նկատեց անոր զժգոհ զէմքը եւ ըրաւ թելադրութիւնը.

— Որ ախորժակ չունիս, գնա՛ եւ փոխուէ, մաքուր սաւաններ փռած է Մարիամ:

Թամիկեան յօրանջելով քայեց զէպի խոհանոցին կողմը. զխառ բարեւ տալով աղակնով, որ գինք կը գիտէր զրան մէջէն: Մօտենալով սենեակի դրան, արտանայնը խնդալը բերաւ: Ամէն գիշեր կը լսէր, թէ ինչպէ՞ս Մարիամ խնամքով վրայ կու տար նիզը իր կոնակին:

— Յիմար պատաւ. թէ որ ստատանան մտաւ մարդուն մէջ, Գրիստոսդ ալ իջնէ երկիր, զայն չի կրնար փոխել մարդուն մէջէն: Ան իր ուզածը կ'ընէ, մինչեւ իսկ եթէ եօթը սարեր, եօթը գետեր կամ եօթը ծովեր փակեն առջեւը...

Ուրկէ՞ ուր միտքը ինկաւ առասպելախառն հեքիաթը: Անասպատին մէջ պետեւին լաւ կ'ապրէր միայն, երբ ականջալուր կ'ըլլար հեքիաթասացի պատ—մուծին: Հազար հուրի—փերիներ կ'երեւակայէր եւ երազներով կը սնուէր ու—ղեղը. կը մոռնար օձերն ու կարիճները, լուսն ու ոլիւլը, ճանճերը, մօեղը, աղ—քատիկ ճաշը: Ի՛նչ, ինք ի՞նչ առաւելութիւն ունէր անասպատի պետեւիին. երբ նիզը կ'անցընէր պատաւ Մարիամ դրանը, ներսը ինք կը գտնար գիշերային կալանաւոր մը: Իրեն կը մնար երազել հեքիաթին աշխարհը, անմահական խնձորը եւ հուրի—փերիներով լեցուն Իրախտը: Երբ մտաւ սենեակը ու վառեց լոյսը, ամէն ինչ կարգի մտած տեսաւ: Գոհ եղաւ, որ հոգացող մէկը կար: Նստեցաւ անկողինին վրայ, քակեց մէջքի արծաթ գօտին, խնամքով եւ երկիւ—

դաժնութեամբ դուրս թափեց ու համբեց մէկիկ-մէկիկ գեղինները, ապա միեւնոյն արարողութեամբ պանոսք անցուց զօտին ներսը եւ ունեցաւ ափսոսանքախառն վիշտ մը, թէ ահա կը կորսնցնէր անոնց շողշողուն փայլքը, երբ երթային անոնք միանալ եւ լուծուիլ թղթադրամի կոյտին մէջ։ Ու խօսեցաւ ինքն իրեն.

— Դեռ կը մտածենք, Թագուոր, շատ մը ջուրեր կրնան հոսիլ գետ գործնականի կամուրջին տակէն, — կրկին յորանջեց. արագ ամբացնել ու զեց ծայրափակելը զօտին, փոխուեցաւ, բայց գրեթէ մերկ ինկաւ — քնացաւ, հագիւ կարենալով վերմակը քաշել մինչեւ զօտին։

Դրան նիզը ներսէն շղթաւ. դուրսէն՝ Մարիամ քիչ առաջ անցուց զայն ապահովիկին...

Տեկին իմիջի կրկին անգամ փորձ չորաւ ամուսինին վրան—գլուխը փոխելու. մարեց պատին ջահը եւ յուշիկ քայլերով անցաւ իր դարդախուցը, ուր կը գէշերէր յաճախ առանձին, չկարենալով տանիլ Միշլի խոկոցներուն աղմը—կալի երթը։ Ինչ աւելի կը առաւապէր քնատութենէն, որովհետեւ յարատեւ յուսարեկութիւնը բաց չէր թողուր միաբնակ ամուսինին խոկոցները գիշերը կը վերածէին զագանոցի, ուր հազար ճիւղ նոթի—ծարաւ կը կոնչէին ու վրնջէին, խրոյնցնելով քունին երկվարը... Անձինքնութեան մտայնութիւնը կպաւ իրեն ռատակութեամբ, Հնգամեակէ Հնգամեակ, ապրեցնելով զինք հաւատքի, յոյսի, ապա երազի մը ապաւինած։ Տասնհինգերորդ տարին իսկ անցաւ գինով եւ անիմաստ ժամանցի մը մէջ... եւ ծեր ամուսինը այժմ կը խոկար հոն։ Նստած Հայնիին առջեւ, բազմոցին, կապոյտ լուսամտիփղը կը մաղէր կապաւ տալոյն ցրտութիւն մը սրտին վրայ եւ կուրծքին տակ կը տրոփէր վիշտը։ Դիմքին նստած ամէն շաբաթ Հայնիին կը դարձնէր իրեն՝ բազմապատկուած մանրութեանով։ Ինչո՞ւ փաստած պիտի լլայար կենդանի իր պատկերը, ինչպէ՞ս կամ որո՞ւ մէջ, երբ մայրութիւն չունեցաւ ինք։ Կրկնած էր միշտ, իր միտքին մէջ, որ որոգեթի պէս կը հնչէր միակ հարցումը. «Վե՛րջը...»։ Սակայն ոչ ոք իրմէ զուրտ կամ իր ներսը կրցած էր տալ լուծումը Գարգեան հանգույցի պէս բարդ այս կացութեան։

— Վե՛րջը...

Քանի մը ամիս առաջ, վարդակոկոնին նուիրումէն ասդին, ուրիշ բառ մը, հարցական ու նենդաւոր, կամքէն անկախ, սկսաւ բռնանալ իր վրայ, ստիպելով իրեն, որ ծայրի ու վճիռի ձեւ առնէին ցամաքած իղձերը։ Եւ այդ բռնութիւնն էր, որ ահա ելեւէջել կու տար կուրծքը։

Իմիջի ելաւ տեղէն. նստեց վրայէն գիշերազգեստը. դարձաւ կիսամերկ, շղարային ներքնազգեստի մէջ թափանցիկ. կուրծքերը կը թրթռային ներքին յոյզերէն դողալով. աչքերը կ'ներազէին. մարմինը ամբողջովին ջերմեց։ Զգաց, որ կը մտէր. դարանէն հանեց վարդակարմիր նոր գիշերազգեստը, նստեց զայն ուսերուն։ Հիմա ան կը նմանէր հեքիաթներու մէջ պատմուած հուրի—փերիի մը։

— Զփորձե՛մ անկարելին...

Արձագանգը սրբապղծութիւն թուեցաւ յանկարծ իրեն. իմիջի ինկաւ ծուկնկի, զարդախուցին անկիւնը գրուած Աստուածամօր պատկերին առջեւ, պաղատակաւ.

— Տիրամայր, ո՛վ դուն Մայր Աստուածածին. ո՛ւր է այն Հրեշտակը, որ օր մը եկաւ քեզի, երեւցաւ կոյս Մարիամին եւ աւետեց յղիացումը ոչ մարդկանէ...։ Ո՞ւր է ան, ո՛վ Տիրամայր. զրկէ՛ ինձի...։ Կոյս մը չեմ եւ, բայց մնացի գաւազէ կոյս...։ Ինչե՛ր մի՞թէ մեղք չեմ. մեղաւոր եմ չձնած դաւակի մը հանդէպ. մեղաւոր իմ բնութեանս դէմ...։ Ո՛վ Աստուածածին, դուն մայրութեան անբծ Մայրութիւն, կ'աղաչեմ զքեզ, զրկէ՛ ինձի աւետարեւ Հրեշտակ...։ Երբ—

տասարգութիւնս սահեցաւ—զնայ. կրեցի զքեզ իբրեւ հաւատք, իբրեւ յոյս ու երազ եւ սակայն թաղամեցան սպասումս ծառին բոլոր գալար ճիւղերը, որոնք ուսանանայի համար մեծցուցած էին... Պէ՛տք է որ տերեւները զեղնին ու թափին մէկիկ—մէկիկ ոտքերուս տոջիւ... Ո՛ւր է հրեշտակը, ո՛ւր է անիկա, ահա տասնհինգ տարի է ի վեր... ինչո՞ւ այցի չեկաւ ինձի. բսէ՛, ինչո՞ւ... ինչո՞ւ...

Մնաց ծունկի, ակները իբարու միացուցած, աղօթարար, ազաւաւոր, սպասողական, թէ ահա կը խօսէր Տիրամայրը, կը յուսադէր... Սպասեց, որ ահա կու գար այցի հրեշտակը, որ աւետէր... Սպասեց ծերազիր եւ սակայն ամէն ինչ կ'անցնէր լուռ, վայրկեանը ծանր, ժամանակը՝ ճշդ... անյոյս... Կը լսէր միայն էրկանը խոկոցները... եւ ճամբան շարունակող ժամացոյցին անկանգ թիւք—թաքը:

Ձեր հաւատար աղօթքի ուժին. փորձը առջեւը չէ՛ր. տասնհինգ տարի—ներուն տասներեքը անցուց աղօթելով, ամէն տարի քիչ մը նուազ հաւատաքով: Փորձեց վերջինը՝ տասնհինգերորդի վերջինը եւ չէր հաւատար այլեւս: Ըժրոտ—տացաւ մէջը ներհոգ ցանկութիւնը՝

— Ձփորձե՛մ...

Ինկաւ փորին վրայ անկողնին եւ կը թուէր, թէ ազատութիւն պիտի տար արցունքներուն, բայց չլացաւ եւ շնեկեկաց իր բախտին վրայ, այլ անուշ թմբիւր մը, որ խլեց զխտակցութիւնը եւ զինք նետեց երազին գիրկը... Էմիլի պառկած էր մայրանոցի մը մէկ մահիճին. խանձարուրի մէջ, քովէն կը ճշար նորածինը, որ ծին կը փնտռէր: Էմիլի քաշեց թիւսկէ՛մ նորածինը իրեն... Կը ժպտէր երանութեան մէջ, երբ ծինը տուաւ անոր բերանը...: Եւ ահա Միշէլը, ո՛ւր էր ան. ինչո՞ւ եկաւ. եկաւ ու ծոկեցաւ մանուկին վրայ.

«— Մեր պզտիկն է, Էմիլի... Թուի է...

«— Ես եմ ծնած ու բերած:

«— Հաւատալս չի գար...

«— Հաւատա՞մ որ ես ուզեցի եւ եղաւ. ես իր հարազատ մայրն եմ եւ զուէ՛ր իմ ամուսինս, Միշէլ»:

Ծնեցեալ. պատկերը Միշէլին. թիւսկէ՛մ մարդը անցաւ տեղը, ժպտեցաւ Էմիլիին եւ Էմիլի հասկացաւ, որ ան էր հարազատ հայրը իրմէ ծնած մանուկին...

Ու երազն ալ ցնդեցաւ: Էմիլի արթնցաւ թմբիւրէն եւ զեւ երազի ազդեցութեան տակ, գոչեց.

— Այո, մեղմէ՛ մէկը յանցաւոր է. եւ ես պիտի կրեմ յանցազործութեանս բռնը, եթէ մեղքը իմն է...

Տիկին Էմիլի մատներուն վրայ կոխելով ելաւ հիւրասրահ: Հոս կատար—եալ խաւար էր: Խարխափելով գտաւ միջանցքը, որուն վրայ կը բացուէին Մարիամի եւ Թադէորի սենեակներուն դուռները. սպասուհիին լոյսը մարած էր. Թադէորի դրան նիզը դրուած էր եւ սենեակէն եկող լոյսի աչք մը կը շողար զիմացի պատին. երբ Էմիլի կանգ առաւ դրան տոջիւ, աչքը ինկաւ գոգին. խրաշած՝ մէկդի քաշուեցաւ եւ կամաց—կամաց ետ ըրաւ. նիզը, ապա դրան, որ զիմացութիւն ցոյց չտուաւ: Էմիլի շուշը բռնեց, որովհետեւ կը հեւար ճակատագրի խորհրդաւորութենէն: Ինչո՞ւ. նիզը չէ՛ դրած ներսէն... արթնաւ է՛ միթէ: Դուռն ու վախը հիմա գաշնակից էին իբարու. հրեց դուռը զգոյշ, գոգն ի գոգ սիրտը. գուռը մատնիչ ճռուց մը հանեց եւ անմիջապէս ալ լուսեւ. ներսը լուռ էր եւ լոյսը՝ հսկող: Թադէոր կը պառկէր մինչեւ մէջքը մերկ, ու կունակէ՛ր դրան. անշարժութիւն. Էմիլի անմիջապէս մարեց լոյսը, որ վկայի զեր ալ չէր կրնար ունենալ, սակայն պիտի խոշորցնէր մեղքը...: Մութին մէջ մինակ կանգնած, բոպիկ, կիսամերկ, Էմիլի ունեցաւ գուցէ վերջին պահու մէկ հատիկ զիղջը, երբ կրկնեց ինքն իր մէջ՝ Ինչո՞ւ գուռը չէ փակած ներսէն... Կը

գիտակցէ՞ր պատահելիքին... ո՛չ, չի կրնար ըլլալ. ան կը վախնար ինքնիրմէ. բայց այն ի՞նչ դէմք էր, որ ընդունեց, երբ կը բարձրացնէր գլուխը սեղանին տակէն. տեսած էր տիրուհիին մերկ սրունքները. գիտումնաւոր էր տիրուհիին ըրածը. այո՛, ան կ'ուզէր նախապատրաստել զինք. գիտումնաւոր էր նոյնպէս ամուսինը գինովցնելը, գինիի գաւաթին մէջ աւելցուցած թմրեցուցիչ հաւպին յաւելումով...: Եւ սկիզբէն իսկ ինք ունեցաւ դեռատի երինջի մը թնազգային վախն ու հետաքրքրութիւնը՝ սպասգայ ցուլիմ մօտիկութեամբ...

Հիմա ժամանակը եկած էր: Էմիլի ինքն իր գէմ պայթարը շարունակելու, կը պահէր զրան եզրը կիսաբաց: Կրնար դեռ զղջալ, դէպի ետ փախուստի ելք մը գուցէ փնտռէր...: Բայց մինչեւ հող առած էր հազար քայլ, չփորձէ՞ր հազարմէկերորդ եւ ճակատագրական քայլը: Երբ զուռը փակեց իր ետին, ա՛յ չիլեց Էմիլի, որ ինք տասնհինգ տարուան ամուսնացած կին էր, կրած էր Ազմարի ընտանքին եւ իր գերզաստանին անշեղօրէն բարձր պատիւը: Այժմ, ո՛չ Միլէլլը ունէր նկատի եւ ոչ ալ պատուի գգացում կամ խիղճ ըռուած բան: Տիկին Ազմարի չղգաց նոյնիսկ, թէ ի՞նչ պիտի կատարուէր իրեն հետ երկվայրկեան մը ետք: Սեւեռուն իզձէ մը հրուած՝ թերուած էր հող, քնացող երիտասարդի մը անկողինին մօտ, որ ի՞նչ...: Էմիլի մէկէն թոնուեցաւ կիրքին բոցէն, որ մնացեր էր սկիզբէն երկրորդական մակարդակի վրայ: Երբ վեր վերցուց վերմակին ճոթը, ժամանակի կորուստը եղաւ հրամայական, արձակեց խպնոտ կեռք ամուսնական բոլոր կապանքները: Վախն ու նախապաշարումները չքացան: Ինչ՞եւ. կիրքը այնուհետեւ պլլուեցան կիսամերկ, դողողացող իր մարմիններ... եւ զինք քաշեցին-նետեցին մեղքին մահիճին մէջ...

(Շար 4)

Ս.ՓԱՆՈՍԵԱՆ



Հուսանկար՝ Թ. ԳԵՈՐԳԵԱՆԿ


ԱՐԱԳԻՆ, ԲԱՐՈՎ ԵԿԱՐ . . .

Հայրենի մամուլի գրական ու զեղարու հասակած թե՛ անդամներուն ու մասնաւորաբար «Գարուն» երիտասարդական հանգիստի էջերուն, աւելի քան տասնամեակէ մը ի վեր՝ մասնաւոր տեղ մը կը գրաւէ կրտսեր տղու հոտներէն համարուող յուսանկարչութիւնը: Թերթէլով յիշեալ հանգիստի միայն վերջին երկու-երեք տարիներու համարները, հարիւրէ աւելի յուսանկարներու կը հանգիստի մարդ, իւրաքանչիւր թիւի մէջ շորս-հինգ հատ, երբեմն աւելի, ութ-ինը հեղար, զորմէ՝ «Գարուն»-է հիւրընկալած բանաստեղծներուն թիւին շափ յուսանկարիչներու՝ շուրջ երեք տասնեակ անուններ, որոնց մէջ աւելի յանախ կ'ընդհին արդէն անուն հանած Գաղիկ Ետրու թիւնեան, Վլադիմիր Սարգիսեան, Աշոտ Բարսեղեան, Վլադիմիր Մկրտչեան, Զաւէն Խաչերեան, Վահան Քոչար եւ քանի մը ուրիշներ:

Հայրենի բնայտարիւն մեծահերտ եւ անմեղակերտ երեւոյթներն ու կենցաղային առօրեային յատուկ երեւոյթները բնորոշող այդ յուսանկարները յունուած են հզանակային եւ առարկական տարրեր պահէրու եւ կը փոխանցեն համապատասխան ուղրու մեծը՝ իրենց զուեային փողփողու մեծրով ու բնծայած պարային պատրանքներով:

Բարձրարեւմ խոներու, արեւազած լիներու, արաղափաղ զեներու, կիսամութ կիբներու, միւնապատ կամ կանաչապատ անտառներու, ամպամած երկինքներու ու աղիւմուղներու կարգին՝ Հայաստանի յուսանկարիչներուն է՛ն նախադրած նիւթերէն մէկը կը հանգիստանայ իր բոյնին հաւատարմ ու տեսակին պաշտածան նախաձեռնողի թիւ աւորը, Հայաստանը երբեք չմտածող Հայաստանի սիրելին, արաղիւր, որ ունի պատկերային հարուստ կենսապատկան մը, ուր կ'ընդհին թոշնային իր բոյնը իւրաքանչիւր թիւներէ՝ էջը, պաշտը, զոյգին հաւատարմութիւնը, սիրոյ պահերը, բոյն յարգարելու մեծրը, պատու մեծրը...

Այս էջին եւ 23րդ եւ 24րդ էջերուն արուած նմոյշները առնուած են «Հայրենի» ճայնաշաբաթաթերթի եւ «Գարուն» ամսագրի այս տարուան եւ անցեալ տարուան թիւերէն:



Արագիւ մը կ'անցնի յանկարծ անվրդով,
Ցուցագրելով կարմիրն իրեն կտուցին
Ու կը տաճնայ մէջն արեւին հուր ցանցին,
Ու կը հանէ հոս-հոն կափկափն իր թռթով:

Ի՞նչ արբեցութեամբ դաշտերէն խորոտ,
Եւ հարս հովիտէն՝ կարմրոտանի
Կ'առնէ արագիւն իր դարձին կարօտ:

ՄԻՍԱՔ ՄԵՆԱՐԵՆՑ
digitised by A.R.A.R.@



(Հասկանալիորեն՝ ՍՈՐԻՆԻ ԱՐԶԱՐԻՍԱՆՆԵՐԸ)

ԱՐԱԳԻԼՆԵՐԸ

Նրանք գալիս են
գարնան առաջ բացուած
երկնային կապոյտ պատուհանների միջով,
լոյսի շողերն առած
իրենց ներմակ թւերին:

Նրանք գալիս են
մեր լեռների սրտում արքնացնելու
բարութեան եւ ծաղկունքի ոգին:
Եւ հայոց հողը դիմաւորում է նրանց
ճնծաղիկի փնջերով:

ԱՐԵՒՇԱՏ ԱԻԱԳԵԱՆ

Հայրենիքի արտուժ ճակատագիրն ու ժողովրդի դարաւոր երազը պատկերող բանաստեղծութիւնների մէջ Խանանեանի պատկերամտանդութիւնը բաւական բարդ է: Բանաստեղծը սիրում է ստեղծել բազմաստիճան ասոցիատիւ պատկերներ, որոնց իմաստը կրթման մթադնում է խլիճին այլարանութիւններով: Ոտանաւորը զիւստորապէս անյանդ է, լեզուն տեղ-տեղ խեղդում, հնացած բանաստեղծութիւն ու զարմուածքներով:

ԲՆԴՈՅՆՆԵՐՆ ԵՒ ԵՓԱՆՂԻՈՆՆԵՐՆ
ՀԱՐՔԵՐԸ ԿԱԳՄԱՆ ԵՆ ԳԵՐԱԳԱՆՑԱՊԷՍ
ՍԻՐԱՅԻՆ ԳԵՂՈՆՆԵՐԻՅ՝ ԱԿՆԱՅ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՌՇՈՎ յՈՐԻՆՆԵՐՆ
ԱՍՏՈՒՄ ԵՄԱՆԵՐԻՆՆԵՐՆ, ԽՈՒՍԱԿԱՆ
ՓՈՔԵՐԻԿ ՍՈՒՆԱՆՈՐԵՆԵՐ, ԱՆԿՆԵՐԻ
ՆԵՆԵՐԻ, ԺԱՐԴԿԱՅԻՆ ԱՅՐՈՒՄՆԵՐԻ
ՈՒ ԿՐԵՐԻՐԻ ԲԱԶՄԱՅԻՆԻ ԵՐԱՆԴՆԵՐԻ
ԱՐՏԱՅԱՅԱՏՈՂ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ:
ԵՓԱՆՈՒԹԻ ԱՐԱԳԻՆ ՈՍՈՒՆԱՆՈՐԵՆ,
ՕՐԻՆԱԿ, ԵՐԳՆԿԱՅՈՒՄ ՈՍՈՐԱՆՈՒՄ
ՄԻՆԱՆԴ ՈՒՍԵՆԴ ՈՒՐԵԱՆ ԳԵՂԵՐԻԿ
ՈՒ ԽՈՍՏՈՒՄԻՅ ԺՆԱԿՈՒՄ Է: (ՀԱՅ ՈՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԻԱՆ ԱՅՏՈՒՄԻՆ, 1979, Երևան, էջ 661-642):



Գործ՝ ԼԵՒՈՆ ԶԱՆԱՆԵԱՆԻ

ԳԱՆՈՒԹԻ ԱՐԱԳԻՆ

Արագիւն այսօր իր բոյնին համար
Տարաւ ցորենի հասկեր կրկնակի,
Այդ հասկի բախտին վէգ մը նետէ՛, մա՛յր,
— վէգ չ՝ուգեր, հունձֆն է առատ այս տարի:

Արագիւն այսօր իր բոյնին համար
Թրջում շիւղեր տարաւ կրկնակի:
Թաց շիւղի բախտին վէգ մը նետէ՛, մա՛յր,
— վէգ չ՝ուգեր, անձրեւն է շատ այս տարի:

Արագիւն այսօր իր բոյնին համար
Բան մը չի տարաւ, խի՛ստ գարմանալի:
Այդ պարապին տեղ վէգ մը նետէ՛, մա՛յր,
— վէգ չ՝ուգեր, գաւա՛կ, սով կայ այս տարի:

Արագիւն այսօր իր բոյնին համար
Տարաւ արիւնոտ կտոր մը լաթի.
Այդ լաթի բախտին վէգ մը նետէ՛, մա՛յր,
— Զինուեցէ՛ք, կասկած ունիմ այս տարի:

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ



Պ. ՄԱԱՊԵԱՆ

ՄԻՋՆԱՐԱՐ — 5

Մտքիս մէջ կրկին հաւաքեցի ծանօթութիւններս եւ անհամատեղելի գտայ մեծ իրազործումներու տանող ամէն պատճառ զսպուած համարող իր տեսութիւնը: Զսպուած տեսիլքներով, զսպուած որոնումներով, զսպուած ձեռներեցութեամբ կամ եռանդով կարելի՞ էր միթէ այդքան կարճ միջոցի մը մէջ դարաւոր աւերակի մը վրայ այդքան մեծ ու այդքան այլազան նուաճումներ արձանագրել: Ինծի կը թուէր, թէ հակառակն էր ճիշդը: Այդ բոլորը գինն էին ստեղծուած բարենպաստ պայմաններուն: Այդ կը վկայէին ամէնքը եւ բոլոր երեւոյթները, այցելուներու զեկուցումները, արձանագրութիւնները, երբեմն մեր աչքերուն առջեւ կատարուած թատերական, երգային ու պարային ելոյթները:

Այս հիմունքներով կազմուած առարկութիւններս թուելէ ետք, յարեցի.

— Նոյնիսկ օտարները հիացումով կը խօսին ծաղկման այդ աննախընթաց ու աներեւակայելի թափին մասին:

— Յետոյ ի՛նչ, որ օտարները հիացումով կը խօսին, — թերահաւատօրէն երկարեց ձայնը Միքայէլ, — ի վերջոյ ի՞նչ է այդ օտարներուն տեսածը, եթէ ոչ՝ նորէն տեսանելին միայն: Անգէն աչքերով աշխարհին նայող մեր արեւակիցներուն հիացումներէն անդին չէ անցած ու չի կրնար անցնիլ օտարներուն մեզի շուայլած գովքին պատճառը: Աւելցնեմ խկոյն եւ ըսեմ տակաւին, որ պարզուկ հոգիներէն աւելի՝ հիւրընկալուած մեր գիւրահաճ պարոններուն կը նմանին այդ օտարները, մեր տիկիներուն եւ օրիորդներուն, որոնցմէ ո՛չ աւելի խորունկ եւ ոչ ալ աւելի շահագրքաւոր եղած են օտարները: Դեռ չեմ խօսիր այն մասին, որ օտարը օտար է միշտ, այսօրուան տեսածը կրնայ վաղը չտեսնել կամ տեսնել ուզածը միայն, եւ ուզած ձեւով, մա-

կերեսայնութեամբ, յարաբերական արժեչափերով, հաշ-
ւական հոգեբանութեամբ բերան բացող բոլոր անձերուն
պէս:

— Բայց այսքան բան ե՞րբ կառուցուած է մեր երկ-
րին մէջ, այսքան մեծ, գեղեցիկ, շահաւէտ, շատ:

— Այդ բոլորը շլացնող են մեր կրած պարտութեան,
անհաշուելի կորուստներուն, ըսենք մեզ ոչնչացնել ծրագ-
րած ու չկրցած ոտխին հակադրաբար:

— Միայն,— բացազանչեցի սրտենդ:

— Ուրիշ ի՞նչ հապա: Հին, նոր, յայտնի կամ անյայտ
ո՞ր երկրամասին վրայ կամ ո՞ր ժողովուրդին կողմէ այդ-
քան բան չիրագործուեցաւ, Ասիո՞յ, Ափրիկէի՞, ո՞ր անա-
պատը ծաղիկ չունի հիմա, չէ ծաղկած մարդու ձեռքով,
ափրիկեա՞ն անապատը, արաբակա՞նը: Ոչ ոք կրնայ ըսել
ինծի տակաւին, որ ըստ կարելւոյն օգտագործուեցան մեր
ուժերը եւ Լուսաւորչի աստղին տակ կուտակուած մեծը,
գեղեցիկը, շատը եւ օգտաւէտները կը հանդիսանան հնա-
րաւոր առաւելագոյնը: Այս մասին անգամ մը քանաձե-
ւեցի իմ կարծիքս, մնաց որ, զիս յուզողը հարցին միւս
երեսն է, հարազատութեան տուեալը, որ ամէնէն կենսա-
կանն է թերեւս, այլապէս մեծը թէ գեղեցիկը, առատը թէ
օգտաւէտը կը դառնան ի միջի այլոց բաներ: Արգարեւ,
մարդ ինչ կրնայ ընել մեծը, ինչ կրնայ ընել գեղեցիկը, կամ
շատը, կամ օգտաւէտը, երբ հոգին պարպած են անոնցմով
հմայուելու կենսատու խմորէն: Մօտիկ կամ հեռու հեռա-
ւոր ժողովուրդներուն հոգը կրնայ աւելի յուռթի ըլլալ,
արեւը՝ աւելի պայծառ, աստղերը՝ աւելի պաղպաջուն, լե-
ռը՝ աւելի ձգողական, քուրը՝ աւելի զուլալ, լուսաթաթախ՝
ամէն ինչ, բայց կը խորհիմ, որ ազգայնամոլութեան վա-
րակով չէք մեղադրեր զիս, երբ մերը գերազանց համարեմ
այդ բոլորէն, մերը՝ հարազատութեան խորհուրդով, ա՛յն՝
որ երբեմն քաղցր սուտեր խօսիլ կու տայ մեզի, չափազան-
ցութիւններու կը մղէ, նոր բովանդակութեամբ մը կ'օժտէ
ձեռակերտ եւ անձեռակերտ ամէն արտայայտութիւն: Գի-
տեմ, որ անտրամաբանական բաներ կ'ըսեմ, բայց գիտեմ
նաեւ, որ ճշմարտութենէ զուրկ բաներ չեն ըսածներս.
«Ենթադրական բուրգերը փռլի կը դառնան, Արեւի պէս,
երկիր իմ, կը վառուես վառման»: Այո, ա՛յդ, հարազատու-
թիւնը, հարազատութեան տուեալը, որուն արժէքը երբեք
հաշուի չեն առներ, երբ կը խօսին այս չէնքին կամ այն պո-
ղոտային, այս համալիրին կամ այն կառոյցին մասին: Իմ
նժարս նոյնը չէ սակայն, ինծի համար անփոխարինելի է
մերը ըսելու հպարտութիւնը, սրտաբուխը, պոռթկումը,

չափազանցութեան սխրալի չափը. «Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գազաթ չկայ», ինչպէ՛ս թէ չկայ, բայց չկա՛յ, չկա՛յ, «Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ գազաթ չկայ»: Հայրենիքի մէջ իմ ապրած տարիներուս, ինծի պակսեցաւ այս ողողիչ երջանկութիւնը, ոչ մէկ գիտութեան եւ ոչ մէկ օրինաչափութեան ենթակայ չափազանցութիւններու դիմելու խնդասիրտ ազադակը...

Միջայէլ դեռ խօսքը չէր աւարտած, երբ սպասեակը մօտեցաւ եւ գեղուն հաճոյակատարութեամբ մը սկսաւ նոր յարդարանք մը տալ սեղանին: Փոխեց սպասները եւ բացաւ նոր պատուիրուած զարեջուրի սառն շիշը: Պնակներէն ոմանք ինքս իրարու վրայ դրի ու հրեցի սեղանին աջ ծայրը: Այս պարագան շատ դիւր չեկաւ կարծես Միջայէլին: Շտկեց մէջքը, երկու ափերը զարկաւ իրարու, նայեցաւ սպասեակին ետեւէն, դարձաւ ինծի, հարցուց.

- Կը ձանձրացնե՞մ ձեզ:
- Նման տպաւորութիւն մը կ'առնէ՞ք ինձմէ:
- Ոչ:
- Ուրեմն ինչո՞ւ այդ հարցումը:
- Փորձառութեանս թելադրանքով:
- Ներողութի՞ւն:
- Փորձով գիտեմ, որ մարդիկ ի միջի այլոց միայն կը հետաքրքրուին ուրիշներուն ցաւերով:
- Կախում ունի՞ւրս չոր:
- Ինչէ՞ն:
- Ապրուած ցաւերու ուժգնութենէն:
- Եղեոնը ապրուած ցաւ չէ՞ր, — բնաւ յօնքերը վեր առնելով:
- Անշուշտ ապրուած ցաւ էր:
- Իսկ ո՞վ խորութեամբ զգաց անոր կոտտանքը:

Աթոռս քիչ մը հեռացուցի սեղանէն եւ դարձայ ծոփուն նոր բարձրացած աղմուկին կողմը: Միտքս ուրիշ տեղ էր ու սիրտս քիչ մը վրդոված: Որոշ չափով ես ալ ծանօթ էի ժողովուրդներու փոխյարաբերութեանց, մէկուն յօշոաելու բնադդին, միւսին ստացած վերքերուն, երրորդին ցոյց տուած սառնասրտութեան, բայց գիտէի նաեւ, որ մարդիկ, նոյնիսկ ապահով սահմաններ ունեցող ժողովուրդներ, նոյնիսկ զինական հզօրութեամբ օժտուած պետութիւններ չեն կրնար իրենք իրենց մէջ ներփակուած ապրիլ: Ձէ՞ր բաւեր միթէ մեր օրինակը, Հայաստանի մէջ թէ դուրսը: Ամէն տեղ օտարներով չլրջապատուած կամ օտարներու մէջ կ'ապրէինք, բայց օտարը դասական օտարը չէր միշտ,

Հալածողը չէր անպայման, թալանողը չէր ու արիւնարբուն չէր:

Միջայլ լուռ մտիկ ըրաւ զիս, հառաչեց կրկին, բայց նորէն յուզեց հարազատութեան հարցը, հարազատներէն իր սպասածը չգտած հոգիի մը գառնութեամբ:

— Մեր պայմաններէն անգամ մը անցած կամ անոնց մէջ գեռեւս տապալակող մարդերը,— ըսաւ,— մարդ—կօրէն իրաւունք ունին սպասելու, որ գոնէ՛ որոշ խաւեր կամ անձեր ուղիղ գծով չարձազանգեն պաշտօնական տե—սակէտներու, պաշտօնական տեսակէտները վերջին ճշմարտութիւն չհամարեն: Հոն գեռ հասկնալի է ամէն ինչ ողջունելու սովորոյթին տիրական ընթացքը, բայց հո՞ս: Կը տեսնեմ սակայն, որ հոս եւս կացութիւնը նոյնն է, ցաւա—գինօրէն: Իշխանութեան գլուխը գտնուողներուն կողմէ կը պատուիրուի օրինակ, որ Հանրապետութեան օրօք տե—զի ունեցած կարգ մը անհաճոյ միջադէպեր երբեք մտահան չըլլան ու շարունակ նիւթ դառնան, եւ նիւթ կը դառնան անմիջապէս, ուղղուած չափերով ու չարափոխութիւննե—րով, բայց անցեալը մոռնալու իմաստութեան մը կը կառ—չին ամէնքով, երբ հաշուեյարդարի կարգը կու գայ երես—նամեայ լուծին եւ անոր պատճառած անհաշուելի կո—րուստներուն, ծուստումներուն, սրածումներուն: Այս կը նշանակէ...

Հազ մը ընդհատեց խօսքը: Գարեջուրի ումպը հան—գարտութիւն չբերաւ իրեն: Ձուր ուզեց: Գտաւ իր բնական զոյնը: Վար առաւ աչքերը:

— Այս կը նշանակէ...,— հետապնդեցի զինք:

— Այս կը նշանակէ,— ըսաւ թարմ ձայնով,— որ տեղ մը չարախօսութիւններու թափ կը տրուի եւ ուրիշ տեղ ճիգ կ'ըլլայ քողարկելու չարագործութիւնները: Այնքա՞ն զժուար էր հասկնալ այս միտումը, որ անոր պէս խորթ երեւոյթներու գէժ ընդվզելու փոխարէն՝ պարոն Ատոմ եւ ուրիշներ մեզի պէսները յարձակման թիրախ դարձնելով բաւարարութիւն կու տան իրենց հոգիներուն:

Սիփան անհանգիստ շարժումով կը հետեւէր մեր խօսակցութեան եւ կը գգայի, որ Ատոմի գիրքորոշումէն ալեկոծ իր ջղայնութիւնը հոն կը փոխէ եւ կը լարուի ինծի դէմ:

— Ուրիշները չեմ գիտեր,— ըսի,— բայց ես բնաւ չեմ կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ մարդիկ, կէս դարէ աւելի ժա—մանակ իշխանութեան գլուխ գտնուելէ ե՛տք անգամ, գեռ կը փորձեն խոյս տալ իրականութիւններէն:

Միջայլ զգաց, որ թեթեւ սրտով չդիմաւորեցի զար—

մացումիս ի տես իր դէմքին ուրուացած եւ իսկոյն անհետացած հեգնախառն ժպիտը եւ փութաց չզգացնել ստեղծըւած անհաճոյ կացութիւնը.

— Կը յուսամ՝ չէք մոռցած քիչ առաջ նկարագրած բանտակից դասախօսս:

— Անգլիական լրտէ՞սը:

— Ոչ, ազգայնամոլը: Իր ուսանողին խմբագրած զրպարտագիրին հիմամբ ձերբակալուած լեզուաբանը, որ քաջածանօթ էր նոյնպէս մեր նորագոյն պատմութեան անցքերուն: Ես կը կարծեմ, որ հաւաստին անոր ճշմարտութիւնն էր, ըստ որում՝ Հայաստանի վերջին հողակտորին փրկագործման մէջ որեւէ բաժին չունէին Հանրապետական Հայաստանին յաջորդած իշխանութիւնները ու ճիշդ ատոր համար մարտնչող բարդոյթ մը առաջացաւ անոնց մէջ, որ ժառանգական դարձաւ:

— Ատիկա ենթադրութիւնն չէ՞ սակայն:

— Ենթադրութիւններով բաւարարուող մարդերէն չէր ան. ժամերով կը խօսէր այդ մասին, փաստական տուեալներով: Մնաց որ, զժրախտ գասախօսին հաստատումը իրականութիւններէն խոյս տալու բարդոյթին մէկ պատճառն է:

— Իսկ մի՞ւս պատճառը:

— Ատոր չըջուած իրականութիւնը:

— Այսի՞նքն:

— Դեր ունեցած ըլլալու զժրախտութիւնը:

— Դե՞ր ունեցած: Ի՞նչ դեր, ո՞ւր:

— Հայաստանը թուրք արինարբուներու ճիրաններէն փրկած մարդոց անօրինակ սխրագործութեան մէջ բաժին չունեցան ու սարսափելով բռնի ժառանգուածին հոգեբանական յետագարժ հարուածներէն, կը ճգնին բարձրաձայն ուրանալ իրագործուած հրաշքին բուն գերակատարները, իսկ ստալինականութեան վրայէն չեն ուղեր վերցնել վարագոյրը՝ վախնալով, որ իսկոյն կը բացայայտուի այդ միահեծան բռնակալութեան իրենց բերած մասնակցութիւնը: Կը վախնան, որ տեսանելի կը դառնայ սուտ փառաբանութիւններուն ամօթը, սուտ ովսնանաներուն ամօթը, ներբողական ծննդաներուն ամօթը, ու նաեւ զրպարտութիւններուն, բանսարկութիւններուն, տեսակ-տեսակ քսութիւններուն ու մարտնչական արարքներուն ճամբով ստացած իրենց խարանները: Ես այդ աշխարհէն կու գամ ու բաւական մօտէն կը ճանչնամ տիրող վարդապետութեան այդ նախկին հարուածայիններուն հոգեբանութիւնն ու գործած հին ու նոր աւերները:

— Դեռ կա՞ն այդ մարդերը:

— Կան:

— Ինչպե՞ս կ'ապրին:

— Ձարչարուելով:

— Ձարչարուելով:

— Ուրիշ ի՞նչ ձեռով պիտի ապրէին: Վճարելով կամ փորձելով վճարել գինը գործուած վատութիւններուն, անսանձ նախանձին, պաշտօնամոլութեան կամ ընչաքաղցութեան մոլուցքներով սարքուած մեքենայութիւններուն:

Վերջին հաստատումին ի յուր՝ տխրութիւնը աւելի ճիւղաւորուեցաւ սրտիս: Յաւերէ գերծ մէկը չկար ուրեմն, կարգով ճաշակած էին տառապանքներուն տեսանելին թէ անտեսանելին, օր մը մէկը, յաջորդ օր՝ միւսը, մէկը՝ ուղղակիօրէն, երկրորդը՝ անուղղակի: Կեղեքող ցաւեր, անհանգչելի:

Ճաշարանին ազմկայոյզ մթնոլորտը անգամ մը եւս պրպտելէ ետք՝

— Կեանքս,— ըսաւ Միքայէլ,— եղած է անուրախ օրերու երկար շղթայ մը, որուն օղակները, բնական է, նոյնը չեն: Ոմանք կը ջնջուին յիշողութեան մէջ, ուրիշներ՝ ոչ: Անջնջելիներէն մէկը պատմեցի,— իր ուսանողին կազմած զրպարտագիրով բանտ նետուած դասախօսին տառապանքը, իսկ միւս անջնջելին ես ապրեցայ այս անգամ ուրիշի մը հաշուոյն, արդարացուելէս տարիներ ետք, «Արմենիա» հիւրանոցին մօտերը, ճամբեկրի մը վրայ, խումբ մը երիտասարդներու եւ վաթսունի մօտ անձնաւորութեան մը մէկ հանդիպումին: Քիչ մը աւելի մօտեցայ անոնց եւ ճանչցայ մարդը: Փառաբանուած բանաստեղծ մըն էր, ստալինեան ժամանակաշրջանի բազմեռանդ օրհներգուներէն մէկը, որ կը պնդէր, թէ զինք խաբած են միշտ, ամէնքը, տասնամեակներ շարունակ, եւ թէ՛ իր կամքով չէ գրած երիտասարդներուն խնդրոյ առարկայ դարձուցած գիւցազներգութիւնը: Երիտասարդներէն մէկը մերժեց հաւատալ իր երգումին, ուրիշ մը՝ ժամանակները իրար մի խառնէք ըսաւ խիստ, երրորդ մը՝ ամէն կանչի արձագանդելու ծառայամտութեամբ մը ամբաստանեց իրենց միջեւ զալարուող բանաստեղծը, որուն քրտնաթոր հակատը ստացած էր մեռելային գոյն մը: Չկրցայ դիմաւոր տեսարանին: Կը զգայի, որ մեղապարտ է բանաստեղծը, բայց արդա՞ր էին արդեօք երիտասարդները: Տխրութիւնս չփարատեցաւ ամբողջ օրը եւ խորացաւ աւելի, երբ ուշ գիշերին յիշողութեանս մշուշներուն մէջ փալտեցաւ

նոյն դիւցազներգութեան մասին արձանագրած երիտա-
սարդ քննադատի մը ներդրականը, ուր ի միջի այլոց
կ'ըսուէր, թէ ատիկա, այդ յաւէտ անմոռանալի եւ յաւէտ
դատապարտելի թխուածքը առաջին անգամ հնչեց
1935ին, Կրեմլի կամարներուն տակ եւ կը հանդիսանայ
բանաստեղծին ամենաուժեղ փայլատակումներէն մէկը,
որ արագօրէն ժողովրդականացաւ լայն դանդուածներուն
մէջ: Այս զնահատանքէն քանի մը տարի ետք, յիշեցի նոյն
բանաստեղծին մասին նոյն քննադատին հիւսած մենագ-
րութիւնը, զոր բացի անմիջապէս, թղթտեցի ծայրէ ծայր,
բայց որեւէ էջի վրայ չհանդիպեցայ «ամենաուժեղ փայլա-
տակում»ին: Հաշուեցէք հիմա, թէ քանի՞ երես ունի ող-
բերգութիւնը:

— Քանի՞,— հարցուցի մեքենարար:

— Առնուազն երեք: Ատիկա պատմութիւնն է բա-
նաստեղծի մը յօրինած, քննադատի մը փառաբանած եւ
ժողովուրդին ծափահարած գործի մը, որուն կը մերժէին
տէր դատաւ հիմա բոլորը, հոգեկան նոյն բեկումով հար-
կաւ, մէկը իր հիւսած սուտին, միւսը իր կիրարկած չափա-
նիշներուն եւ միւսները իրենց անբովանդակ ծափահա-
րութիւններուն համար: Եւ օրինակը մէկ չէ, ոչ ալ երկուք
է կամ հարիւր երկու, աւելի՛ է օրինակներուն թիւը, գլխու
պտոյտ պատճառելու չափ շատ, եւ անոնց չափ՝ աւաղում-
ներուն թիւը: Ես տեսած եմ մարդեր, լսած եմ ուրիշներ,
կարդացած եմ խոստովանութիւններ անծանօթ անձերու,
որոնք զղջահար հոգիով կ'ըսէին, թէ ինչե՛ր կու տային
իրենք այսօր, եթէ ըսուած չլլար այսինչ խօսքը, գրուած
չլլար այսինչ գիրքը, յօրինուած չլլար այն երգը, իրենց
անունին կապուած չլլար զրպարտագիր կազմած լլալու
սեւ արարքը: Մարդերը իրենք իրենց մէջ խորտակելու
զարհուրելի ոճ մը կիրարկուեցաւ հոն, այնպիսի՝ ուսմունք
մը, ուր իւրաքանչիւրը ունեցաւ ինքն իրմէ ու իր անցեալէն
ամչնալու անջնջելի պատճառ մը, ըրածէն ամչնալու, չը-
րածէն, ըսածէն, չըսածէն, ձեռամբարձ համաձայնութիւն-
ներէն, ձեռնպահութիւններէն, ազազակներէն, լռութիւն-
ներէն, հաստատած կապերէն, քանդած յարաբերութիւն-
ներէն, ամէ՛ն ինչէ, չրջուած կեանքի մը ջրապտոյտին մէջ:

— Ես չեմ գիտեր, թէ ինչպէս կարելի է ապրիլ նման
պայմաններու մէջ, բայց շատ լաւ գիտեմ, թէ ինչպէս կա-
րելի է մեռած ապրիլ...: Հիմա, սակայն, ինծի ցաւ պատճա-
ռողը եղբրական անցուդարձերու ամէնօրեայ յաճախանքը
չէ այնքան, որքան այդ բոլորը ի միջի այլոց բաներ համա-
բող մարդոց կեցուածքը, կատարուած բռնութիւններն ու

ներքին հարստահարութիւնները արդարացնելու ջանքը, մոռնալու պատուէրը մանաւանդ:

Կանգ առաւ, նայեցաւ շուրջը, նորէն ինծի, վշտահար աչքերով: Իր իրականութեան հանդէպ ուրիշներու օտարութիւնը զգացող մարդու մը կը նմանէր ան հիմա, կրկնակ սրտաբեկութիւններ ապրած մարդու մը, որուն դէմքին կը տարածուէր իր արդարութեան հանդէպ անտարբերներու միայն հանդիպած հոգիի մը մոայլութիւնը:

— Դուք կարծեմ ֆրանսերէն գիտէք, — հետաքրքրուեցաւ պահ մը ետք:

— Քիչ մը, — ըսի:

— Անգլերէն:

— Աւելի քիչ:

— Անպայման կը ճանչնաք ֆրանսացիներուն Սթանտալը:

— Այո, անշուշտ:

— Անգլիացիներուն Պայրընը:

— Ոչ չատ:

— Թէ՛ ֆրանսացիներուն Սթանտալը եւ թէ անգլիացիներուն Պայրընը իրենց հայրենիքներուն վրայ յարձակելով ծառայեցին իրենց հայրենիքներուն: Ընդէն:

Երկարեցի ձեռքս գաւաթին:

Զգաց, թէ պատասխան չունիմ իր հարցումին:

Շարունակեց.

— Հիմա մեզի կը պակսին Սթանտալներու եւ Պայրըններու օրինակով ապրող գրագէտներ, վարտուղիներ, անիծեալ խառնուածքներ եւ այդ պակասին առաջացուցած աղէտը դժուար է նախատեսել ու խորաշափել: Ամէն պատուէր երկիւղած համակերպութեամբ մը գործադրող բանակին մէջ գտնուէին գոնէ՛ քանի մը Սթանտալներ ու քանի մը Պայրըններ:

Նեղութիւն մը պատճառեց ինծի անկարելին պահանջելու իր ողբերգական խստութիւնը ու, վերակազմելով քիչ առաջ իր պատկերացուցած մթնոլորտը՝ յիշեցուցի հակասութիւնը:

— Ո՛չ, — ըսաւ, — ես այնքան անխոհեմ չեմ, ոչ ալ այնքան անխափական կատ, ոչ ալ այնքան անգութ, որ անկարելին պահանջեմ հայրենիքիս մէջ շնչող ազնիւ հոգիներէն, բայց, արտո՛ւս, դո՛ւրսն ալ չունինք Սթանտալներ ու Պայրըններ, մեծ սէրերու յայտարար բարկաճայթ բնաւորութիւններ, այրողներ, չունինք խորթութիւններուն, կամայականութիւններուն, քծնողներուն ու քծնուողներուն դէմ ծառացող կատաղի ճանթէներ, յանուն հայրենիքին

Իրենք զիրենք բղկտող նիցչէներ չունինք: Իմ յուզածը տա-
զանդի հարց չէ անշուշտ, տեսիլքէ մը տաղուած ըլլալու
հարց է աւելի, ուղղութեան, խռովքի, — չունինք: Եղածները
իրաւախոհներ են միայն, ամէն ինչ հաշտ աչքով դիտող
ապշեցուցիչ խելօքներ, Աստուծոյ գառները մոռցնել տա-
լու չափ չլու—հնազանդ գառներ, հաճոյախօս ու երեսանկ-
եալ, որոնք սրբութիւններու համար վտանգ մը յանձն առ-
նելու տեղ՝ նպաստընկալի աղաչաւոր աչքերով ողորմա-
ծութեան սպասող մարդերու նոր դասակարգ մը ստեղծե-
ցին մեր մէջ, տեսակ մը ձրիավարժներ, տեսակ մը...

— Պարոն Միքայէլ, — ընդմիջեցի զինք կրկին:

Վար առաւ գլուխը եւ իրարու միացուցած ձեռքե-
րուն հանգչեցնելով ծնօտը՝ սեւեռաբիր նայեցաւ աչքե-
րուն:

— Կ'ըսէիք, որ հայրենական ձեր առաջին տարինե-
րուն սեւագործ բանուոր եղած էք:

— Այո:

— Յետոյ վեց տարի ապրած էք Սիպերիոյ մէջ:

— Եւ ինչպէ՞ս:

— Ապա, — շարունակեցի նոյն հտնդարաութեամբ, —
երկար ատեն շարունակած էք աշխատիլ Հայաստանի ծայ-
րագաւառներուն մէջ:

— Այո, այդպէս տնօրինեց ճակատագիրը:

Բութ ժպիտով մը նայեցայ աչքերուն, որ յայտնա-
պէս կը սպասէր լրացուցիչ հարցումներու: Հարցում չըրի
սակայն, յայտնեցի միայն այն զարմանքը, թէ այդ պայ-
մաններուն մէջ ինչպէ՞ս կրցած է այդքան բան կարդալ ու
միտք պահել:

— Այդ բոլորին մասին գաղափար կազմեցի կեան-
քէն բացակայած չըջաններուն, — ըսաւ:

— Ի՞նչ:

Փութաց փարատել ապշութիւնս:

Բանտին մէջ ունեցած էր մեծ հմտութեան տէր
բախտակիցներ, — լեզուարաններ, պատմագէտներ, ար-
ւեստագէտներ, աքոռի ընթացքին եւս, իսկ հսկողութեան
տակ ապրած ներքին աքսորի երկրորդ հանգրուանին
առատ ժամանակ:

— Հապա մեքենագիտութի՞ւնը, — հարցուցի:

— Այդ ասպարէզին մէջ ունեցած ծանօթութիւն-
ներս ձեռք ձգեցի հեռակայ կարգով:

— Հեռակա՞յ:

Քրքջաց: Ըսաւ:

— Հեռական անբաժան եղած է իմ ճակատագրէս:

Հեռակայ կարգով եղած եմ յախուռն Հայրենասէր, Հեռակայ կարգով՝ Համայնարանական իժ, Հեռակայ կարգով՝ ամերիկեան լրտես, Հին դաւաճան, նոր դասալիք...

— Իսկ մօտակա՞յ կարգով, — Հարցուցի ժպտուն:

— Հեռականներուն գումարը:

— Այսի՞նքն:

— Ձեր դիմաց նստած աւերակը:

Վերցուցի բաժակս եւ անգամ մը եւս խմեցի աննըկաբազրկի տառապանքներ ապրած մարդու իր զօրեղ հոգիին կենացը: Ինք, սակայն, չըթներուն շտաբաւ բարձրացուցած գաւաթը, այլ բարեկիրթ շարժումով մը վար դրաւ զայն, ու այս անգամ նուաղ ձայնով մը խօսեցաւ իրմէ աւելի տառապածներուն մասին.

— Չարչարուածներուն ամէնէն աւելի շարչարուածը ես չի հարկաւ: Ստեղծուած պտուտահողմին մէջ քաջշուած տարիներուս եւ ապա օտար ձիւնամրրիկներուն ենթարկուած շրջանիս եւ աննշան երիտասարդ մըն էի, անցեալ չունէի, որ զրկէին զիս անցեալէս եւ ապա խաչ հանէին, վաստակ չունէի, որ շարափոխէին վաստակս եւ ապա ոչնչացնէին զիս, չունէի կարեւոր պաշտօն մը, որ պաշտօնանկ ընէին եւ ապա հանէին հողիս: Այդ հանգամանքներով հուշակուած մարդերը աւելի դժբախտ եղան, քան ես, պէտք է այդպէս եղած ըլլայ, վասնզի ես ամբողջ խորութեամբ չեմ կրնար չափել ուրիշներուն վիշտը, ինչպէս ուրիշներ չեն կրնար, չկրցան կամ չուզեցին չափել իմ վիշտերուս խորութիւնը: Ինծի համար առեղծուած կը մնայ տակաւին, թէ ինչու այդպէս վարուեցան վաստակի ու անունի տէր եւ իրենց հաւատարմութիւնը փողով ու թմրուկով ողջ աշխարհին յայտնած մարդոց հետ, եւ նոյն պատճառով չեմ կրցած մոռնալ անոնց ողբերգութիւնը, որուն մէկ արտայայտութիւնը ծանօթ էր երեւանեան զնտանի բոլոր դժբախտներուն եւ դեռ մինչեւ այսօր կը կրկնուի իմ հողիս, թէ՛ «Ձկայ տանջանք աւելի մեծ եւ պատիժ աւելի սեւ, քան դատել մարդուն նրա սրբազան դադափարի, նրա ողջ կեանքի միակ գործին դաւաճան լինելու համար»: Եղան այդպիսի դժբախտներ, հարիւրներով, հազարներով, բիւր բիւրերով: Ո՛չ, ես այդպիսիներէն չէի: Իմ մէջս խորտակեցին մարդոց հաւատալու հաւատքս միայն:

— Բայց այդքանը քիչ է միթէ:

— Քիչ չէ, բայց նոյնը չէ:

— Ձէ՞ք կարծեր սակայն, որ ձեզի պէսներուն

տրուած հարուածը աւելի անդամանելի է,— ըսի յանկարծ:

— Ինչպէ՞ս,— այս անգամ զարմացաւ ինք:

— Ուրացուած վաստակ մը կրնայ իր արժանի տեղը գտնել օր մը, անճիտուած հերոս մը կրնայ արձան ունենալ, բայց...

— Այո, չեմ գիտեր, թերեւս: Ես այն գիտեմ միայն, որ լրիւ պարպեցին զիս հաւատքէ եւ թոյլ շտուին, որ պզտիկ ժառանգութիւն մը ունենամ, պզտիկ վաստակ մը, պզտիկ անուն մը, թոյլ շտուին նո՛յնիսկ, որ հայրենիքին մէջ փոշի դառնամ, կը հասկնա՞ք, փոշի, փոշի՜ դառնամ...

Յանկարծ իրարանցում մը սկսան ճաշարանին արեւելեան խորքին եւ ապա, ծափահարութիւններու ու բացագանչութիւններու տարափի մը տակ՝ ներս մտաւ միջին տարիքով գիրուկ մարդ մը, ետեւէն՝ անձնեայ երկտասարդ մը, ջութակը ձեռքը: Երկուքը մէկ կանգ առին զաշնակին առջեւ, խոնարհութիւն ըրին միասին եւ սկսան սենեկային երաժշտութեան իրենց յայտագիրը:

Քիչ մը խաղաղած մթնոլորտին ու ծաւալած թաւշային ձայնին հետ ներդաշնակելով իր շեշտերը՝ Միքայէլ խօսք բացաւ զինք ամէնէն աւելի խոցած կամայականութիւններուն եւ ներքին ձեւազեղծումներուն մասին, որոնք կը շարունակէին արիւնել էութիւնը՝ իր եւ իր ճանչցած բոլոր մարդոց հաշուոյն, բարձրաստիճան թէ խոնարհ, հռչակաւորին թէ աննշան հոգիներուն հաշուոյն, որոնց մէջ փոքր թիւ մը չէին ներկայացներ Խվանները, Տիմիթրիները, Եուրիները, Խալիլ ու Միխայիլները...

— Օտարները ի՞նչ ամբաստանութիւններով աքսորուած էին,— հետաքրքրեցայ ի միջի այլոց:

— Նոյն, գրեթէ՛ նոյն: Ոմանք իբրեւ դասակարգային թշնամի, ուրիշներ՝ ապաղասակարգային: Անոնց մէջ կային ազգայնականութեան ախտով վարակուածներ եւ կային անցեալը իտէալականացնող անուղղաներ: Աննշան չէր նաեւ թիւը արտասահման ուսանած կասկածելիներուն: Ի՞նչ գիտնամ, ամէ՛ն տեսակը կար: Զեւին մէջ բան մը փոխուած էր հարկաւ, բայց էութիւնը նոյնը կը մնար: Հերթական փոթորիկը տրոցկիստներուն տեղ նացիստներ քաշած էր հիմա ատեան, ժողովուրդի թշնամիներուն տեղ՝ հայրենիքի թշնամիներ, ալ թեքում ունեցողներու տեղ՝ ծախ թեքում ունեցողներ, տաք պատերազմի գործակալներ տակաւին, իսկ ես, ինչպէս կրկնեցի քանիցս, պաղ պատերազմի գործակալ էի, անուշտ նոյնքա՞ն փտանգաւոր, հիւլէական ուժի տէր պետութեան մը վարձկանը:

— Յետոյ ամէնքն ալ արդարացան:

— Չեմ գիտեր: Բաժանման պահերուն մեզմէ ոչ ոք կրնար գիտնալ, թէ ինչ կը պատահի միւսին: Ճամբարէն կ'անհետանար մէկը ճիշդ այնպէս՝ ինչպէս խլուած էր տունէն ու հարազատ միջավայրէն: Առանց հարցում ընելու իրաւունք ունենալու եւ առանց որեւէ պատասխանի ապեման լինելու: Երբ ես կանչուեցայ կալանաւորներու մեր պետին մօտ, կը կարծէի, որ ճամբարս պիտի փոխեն, ինչպէս ըրած էին քանիցս, կամ քիչ անդին պիտի գնդակահարեն զիս, ինչպէս պատահած էր այլոց, բայց լսեցի արդարացման վճիռ, եւ անոր հետ, առանց այլեւայլի՝ ճամբար ելլելու հրահանգը: Միւսներուն եւս նոյնը պատահած պէտք է ըլլայ:

— Ձեզի պէս բախտաւորներուն հարկաւ:

— Ինծի պէս որոնց,— հարցուց զժողով:

— Բախտաւորներուն:

— Ինչո՞ւ չէք ըսեր զժախտներուն:

— Արդարացուածներուն կ'ակնարկեմ:

— Նոյնն է, ըսէք զժախտներուն ու երբեք կասկած մի ունենաք, որ կը սխալիք: Այդ պայմաններէն անցած մարդ մը չի կրնար այլեւս բախտին սպիտակ երեսին հաւատալ: Ինծի, օրինակ, աւելի դիւրին պիտի ըլլար, հաւատացէ՛ք ինծի, որ աւելի դիւրին պիտի ըլլար վեց տարի եւս մնալ Սիպերիա, ցրտահար ձեռքերով կացին զարնել, ինչպէս ըրած էի տարիներ, անտառէն դետափ դերան փոխադրել նորէն, խոզ արածել կամ գետնախնձոր մշակել սառոյցէն կոնծած հողերու մէջ, քան լսել, որ նախկին զեկավարութեան պաշտօնեաները թիւրիմացաբա՛ր հետապնդած են զիս, թիւրիմացաբա՛ր ձերբակալած, թիւրիմացաբա՛ր աքսորած:

— Այդ հանգրուաններէն մէկուն կամ միւսին մէջ չկա՞ր մէկը, որ անդրադառնար գործուած սխալին,— հարցուցի զայրոյթով:

— Ոչ, չկար, չգտնուեցաւ: Տարբեր չէր եղած նաեւ բախտը տարրեր աքսորավայրէ տուն դարձած իմ բախտակիցներու, որոնք նոյնպէս թիւրիմացաբա՛ր քաջքուած էին նոյն զժողովներուն մէջ: Պիտի չմոռնաք տակաւին, որ զժախտութիւնը մասնակի բնոյթ մը չունէր, երկուստեք էր անիկա եւ ընդհանրական: Վերադարձին՝ հարազատ չգտնողները զժախտ եղան ինծի պէս, չգտնողները՝ նոյնպէս զժախտ եղան, որովհետեւ ամէն ինչ փոխուած գտան, հոգեբանութեամբ փոխուած եւ իրականութեամբ, հայր, մայր, կին, զաւակ, բարեկամ, տուն, քաղաք, ճամ-

բայ, ամէ՛ն ինչ, ու խոցուեցան ամէն վայրկեան ու ամէ՛ն տեղ, աւելորդ մարդու զգացումներով՝ խոցուեցան, ետ մնացած մարդու կսկիծներով՝ ինչպէս կ'ընէի քիչ առաջ: Մարդիկ պէտք է հաւատան մեր ապրած իրականութեան եւ քիչ իմաստութիւն թափեն մեր գլխուն, մնաց որ, այդ մէկը շատ կարեւոր ալ չէ, ո՛չ, կարեւոր չէ, մենք այլեւս հաշիւ չունինք կեանքին հետ, որովհետեւ ապրած ենք մեր Քսանի ինքնաբերական ժամը...

Այդ մռայլ պահուն, նուազածուններուն նոր սկսած մէկ եղանակը առանձին համ մը ծաւալեց արիւնիս մէջ ու յանկարծական իրարանցումով մը ձեռք ըրի մօտը կանգնած սպասեակին: Եկաւ: Պահարան մը ուղեցի: Բերաւ: Պատուիրեցի, որ տանի ու դնէ դռնակին վրայ: Իտալացի ջութակահարը թեթեւ մը խոնարհեց գլուխը ու ժպտեցաւ մեզի:

— Հեռանալէս քանի մը ամիս առաջ էր,— սկսաւ Միքայէլ յոգնասպառ ձայնով մը,— երբ Չարենցին նուիրւած դասախօսութեան մը ներկայ եղայ, պետական Հասարակական արհեստներէն մէկուն մէջ, ուր փութացած էին կառավարական ու կուսակցական ծանօթ դէմքեր, դասախօսներ, բանաստեղծներ, գրագէտներ, քննադատներ, նաեւ ուսանողներ ու խուռներամ բազմութիւն մը: Բանաստեղծին վերապանծացման հերթական հանդրուաններէն մէկն էր, ուսաներու փոթորիկ կար ներսը, ծափող-ջոյններու փոթորիկ, այդպէս էր, ամէն ոք տլեկոծ, բայց երբ օրուան դասախօսը սկսաւ բանաստեղծին արտասահմանեան ուղեւորութիւնը նիւթ դարձուցած իր դասախօսութիւնը կարդալ, իմ սրտիս մէջ սուրբութենէ աւելի տխրութիւն մը սկսաւ եռալ, սաստկօրէն, կրկնակ ուղղութիւններով նորէն, մէկ կողմէ դասախօսին դուրս տուած անհեթեթութիւններուն ի լուր եւ, միւս կողմէ՝ հանդիսատեսներուն պահպանած լռութեան ի տես: Տխրութիւնս ծայրագոյն չափերու հասաւ, երբ դասախօսը սկսաւ վերլուծել բանաստեղծին հռչակաւոր «Պատգամ»ը...

— Վայրկեան մը,— ըսի,— չիչողութիւնս թարմանալու պէտք ունի, ատիկա այն բանաստեղծութիւնն է, ուր ով հայ ժողովուրդը...

— Ճիշդ այդ,— փութաց հաստատել Միքայէլ եւ արագ մը վերականգնեց բանաստեղծութեան պատմութիւնը, նկարագրելով անոր հետ ունեցած առաջին ծանօթութեան պայմանները նաեւ, թէ ներգաղթելէ առաջ ոչինչ գիտէր այդ մասին, հարցաքննութեան եւ ներքին աքսորի առաջին շրջանին ալ, եւ բանտին մէջ միայն տեղեկացած էր

անոր գոյութեան եւ խորհուրդին, տառապանքէ յագեցած ու յոռեգոյնին հետ հաշտուած իր բախտակիցներէն:

— Յետո՞յ, — հարցուցի անհամբեր:

— Դասախօսութեան ներկայ անձնաւորութիւններէն ոմանք ուղղակի կը ճանչնայի եւ գիտէի, որ անոնք ծանօթ են Ձարենցի այդ բանաստեղծութեան առնչուած սահմոկէցուցիչ պատմութիւններուն: Միւս ունկնդիրներն ալ չէին կրնար անծանօթ մնացած ըլլալ «Պատգամ»-ին խորհուրդին, բայց անոնցմէ եւ ո՛չ մէկը չփոխեց իր դէմքին արտայայտութիւնը, ընդզգումի ո՛չ մէկ նշան ցոյց տուաւ, երբ դասախօսը այդ բանաստեղծութիւնը պաշտօնական այդ բեմէն, պաշտօնական մարդոց ներկայութեան, պաշտօնապէս յայտարարեց արտասահմանի հայութեան ուղղուած հայրենադարձութեան ազդու կոչ մը: Հայրենադարձութեան կոչ, կ'երեւակայէ՞ք: Երեւոյթը բոլորովին յուսահատական պիտի ըլլար անշուշտ, եթէ խումբ մը երիտասարդներ նոյն վայրկեանին լուռ չհեռանային սրահէն եւ ուրիշներ լսելի չդարձնէին իրենց տրտունջքները:

Նեարդային շարժումով մը ճզմեց սիկարէթը, ծամածոցեց դէմքը, ափը տարաւ քունքերուն ու գլուխը օրօրելով ըսաւ.

— Կը զգաք հարկաւ կացութեան ահաւորութիւնը:

— Այո, ձեւով մը:

— Առաջ «Պատգամ»-ը բերան առնող մարդուն հոգին կը հանէին, իսկ հիմա կը փորձեն «Պատգամ»-ին հոգին հանել:

Հակասութիւնը անզսպելի դարձուց քրքիջս:

— Ինչո՞ւ կը խնդաք, — հարցուց խոթոռելով:

— Ձեմ գիտեր: Այդպէս պատահեցաւ:

— Ես ողբերգութեան մը մասին կը խօսիմ:

— Գիտեմ:

Շարունակեց իր հաստատումները.

— Պիտի մոռնաս ըսին վերէն, ու ամէն ոք մոռցաւ, ու ես՝ ամէնուն հետ: Առարկութիւնը արտօնուած չէ ըսին, ու ամէն ոք լուց, ու ես՝ ամէնուն հետ: Այս մեկնաբանութիւնը ի գօրու է ըսին, ու ամէն ոք խոնարհեց իր գլուխը, ու ես՝ ամէնուն հետ: Բայց ահաւոր բան է կեանքը, երբ մարդ կը հարկադրուի նման միջավայրերու մէջ չնչել ու ամէն օր ականատես ըլլալ շրջուած հասկացողութիւններու թագաւորութեան: Ես տեսայ, որ խախուտ բան մը կայ մարդկային փոխարարելութեանց մէջ, երջանկութիւնը գուրկ է

իր ծանօթ բովանդակութենէն ու ազատութիւնը պապան-
ձումներու ետին կորսուած անարիւն բառ...

— Բայց միշտ ազատութեան մասին կը խօսին:

— Ո՞վ է խօսողը:

— Մարդիկ, երգերը, գիրքերը:

— Ես չեմ գիտեր, թէ ո՞ր ազատութեան մասին է
խօսքը եւ չեմ գիտեր, թէ ո՞ր ճշմարտութեան կամ երջան-
կութեան մասին կարելի է խօսիլ մարդուն կամ անոր
անունով, երբ արգիլուած է իրեն մտածել ինքնորոյն եղա-
նակով, զուրկ է կամովին ընդառաջելու կամ հակազդելու
յախուռն հնարաւորութիւններէն:

Ժամացոյցին սլաքը տասներկուքին կը մօտենար,
բայց մեր զրոյցը զեռ կը շարունակուէր, աւելի ճիշդը՝ Մի-
քայլ կը խօսէր եւ ես կը փորձէի հետեւիլ իրեն, ճամբորդե-
լով հետը երկրէ երկիր, մէկ բեւեռէն միւսը, տարբեր հոգե-
փիճակներու մէջ, դառնութեան, ապշութեան, նուաստու-
թեան ու հպարտութեան, ընդզուգումի ու հաշտութեան ան-
վերջ ջրապտոյտի մը անձնատուր:

— Կարծես հին թշնամիներէն չէր յագեցած Չա-
րենց, — վերսկսաւ՝ ֆանալով նոր ուժ մը հաւաքել ձայնին
մէջ, — մեկնողական հին կամայականութիւնները չէին
բաւած կարծէք, հալածանքը չէր բաւած իրեն, բանտը չէր
բաւած, մահը չէր բաւած, չէր բաւած ոսկերոտիքին ան-
յայտ ճակատագրին մռայլը, որ իր առիթով կը փորձուէր
նոր թափ մը տալ մարդերը խեղճներու վերածելու հին
գաւին: «Պատգամ»ին առիթով կատարուած նոր շարա-
փոխութենէն ետք, կը սպասէի, որ յաջորդ օրը, օրերուն,
շաբաթներուն կամ ամիսներուն՝ ներկաներէն մէկը ձայն
բարձրացնէր ու հարց տար պարոն զասախօսին, թէ հայրե-
նադարձութեան ազնիւ հեռանկարներէ ներշնչուած կոչ
մը ինչո՞ւ տողերուն անդունդին մէջ ծածուկ պիտի պահէր
Չարենց, որ սովորութիւն ունէր արտօնուած բաներ պո-
ռալու ատեն էյֆէլեան աշտարակներ փնտռել ռտքերուն
տակ:

— Չարենց ե՞րբ գրած էր «Պատգամ»ը, — հարցուցի՝
բան մը բաւած բլլալու համար:

— Լոյս տեսած տարին:

— Ե՞րբ:

— 1933ին: Եւ գիտէք հարկաւ, թէ որու օրով:

— Որո՞ւ:

— Ազասի Խանջեանի:

— Ի՞նչ կապ կայ այդ երկուքին միջեւ:

— Կը կարծուէր, թէ Խանջեան՝ Չարենցի մտերիմը,



բարեկամն ու հովանաւորը ամենագոր անձնաւորութիւն մըն էր այդ տարիներուն:

— Լաւ:

— Ի՞նչ լաւ:

— Բան մը կը նշանակէ՞ ատիկա:

— Անշուշտ կը նշանակէ: Կը նշանակէ, թէ նայիրեան տոֆինը ամենագոր մէկը չէր եւ անբաւարար էին անոր անձնաւորած փրկչական տեսութիւնները, ա՛յն աստիճան՝ որ բանաստեղծը ուրիշ ուժի մը պէտքը կը զգար ժողովուրդին փրկութեան համար: Արդէն փրկուած ժողովուրդին ու փառաբանուած փրկիչին օրօք փրկութեա՛ն էլքի որոնում: Զխօսինք սակայն այս բաներուն մասին, որոնք կրնան հեռունները տանիլ մեզ, յետոյ՝ իմ հարցերուս հարցը այդ չէ՛ հիմա, ուրիշ բան է, ուրիշ բան եղած է, իրաւախոհութեա՛ն լուծը, որուն ես ալ ենթակայ էի: Որովհետեւ կը տեսնէի անիրաւութիւնը ու չէի ընդվզեր անիրաւութեան դէմ: Կը տեսնէի անմեղութեան տրորումը ու չէի պաշտպաներ անմեղութիւնը: Կը հաստատէի պատեհապաշտութիւնը, բայց նախամեծար կը համարէի լուել:

— Բոլո՞րը այդպէս կ'ապրէին:

— Առնուազն ես ինքս տարբեր ոճով ապրողներու չհանդիպեցայ: Ու չկարծէք, որ դուրս եկած մարդու արարքն արդարացնելու մտքով կ'ըսեմ այս բաները: Որեւէ արդարութիւն չի կրնար այլեւս կաշառել իմ հոգին, եթէ տակաւին կը կարծէք, որ հոգիի պէս բան մը կրնայ մնացած ըլլալ այդ ճամբաներէն անցած մէկու մը մէջ: Ես կը նմանիմ քանի մը տարի առաջ Կարմիր գիծէն այս կողմը անցած այն ոռւս արուեստագէտին, որ կ'ըսէր, թէ աւելի լաւ է հայրենիքի կարօտէն մեռնիլ, քան ապրիլ հայրենիքին մէջ՝ ատելութեան ամէնօրեայ զգացումներ սնուցանելով անոր հանդէպ:

Լուեց:

Վեր առի գլուխս:

Դիմացս կանգնած էր իտալացի երիտասարդ ջութակահարը, որ ժպտալիւ խոնարհեց գլուխը եւ ճիպոտի յանկարծակիս հարուածով մը լարերուն վրայ թնդացուց անսպասելի եղանակ մը.

Պիրամի ծառ, բար մի տայ,

Ճղմերդ իրար մի տայ... վա՛յ...

Հիասքանչ աչքերս պտրտուցի շուրջս ու տեսայ, որ նոյն վայրկեանին ամէն շուկ կանգ առած էր ճաշարանին մէջ: Նուազին ձգողականութեան տակ ու նուազածուն յափշտակութեան թափին դիմաց կարծես ամէն ոք ինծի

պէս եղած էր, այլակերպած, տարրեր խռովքի մը անձնա-
տուր, երանական վիճակի մը մէջ:

Ամէն մէջըդ ման գալիս,
Յաւերըս իրար մի' տայ...

Ջութակահարը որոտընդոտ ծափահարութեան
մէջ աւարտեց լարային իր պատարագը, մինչ իմ սրտիս մէջ
կը զգայի անյայտ արմատի մը վրայ ծլարձակող ծառի մը
ալեծուփ ծաղկումը:

Դարձայ Միքայէլին:

Նոր յուզում մը ողողեց զիս, երբ տեսայ արտասուա-
զօծ իր աչքերը:

Սիրական անհամբերութեան նշաններ ցոյց կու
տար:

Ձեռքով հրաժեշտի նշան ըրի սպասեակներու պե-
տին ու ոտքի ելանք...

Երբ Երկաթէ կամուրջին մօտ իջնուցի զիրենք,
զգացի, որ Միքայէլի մէջ աստիճան մը աւելի խորացած է
բեկումը: Ատիկա պատճառ դարձաւ, որ բռնեմ Ատոմի
բնակարանին ճամբան: Կ'ուզէի առանձին խօսիլ հետը,
ըսել՝ ինչ որ չուզեց լսել, ա՛յն բոլոր տառապանքները,
որոնք հայրենիքէն դուրս գալու մղած էին այդ բազմա-
չարշար մարդը...

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

(Եար. 5 եւ վերջը յաջորդով)

Ա. ՃԻՒՂԵԱՆ

ՀԱՄԲՈՅՐԻ ՊԱՏԱՐԱԳ

Կը նետես հագուստներդ
 եւ լռյսին մէջ կը մխրճուիս:
 Բնագդի խորհուրդներ, լեզուիդ տակէն բարձրանալով,
 շրթներուդ վրայ կը տարածուին,
 եւ գոյն մը փայլուն, մագնիսով հեղուկ՝
 ֆազցրութիւններ կը խոստանայ բերնիս...

Ջարթնում միսի մէջ կիրփերու բոցին...

Մորթերու միջեւ՝ հրկիզումը շարժող օդին
 կը շոգիացնէ գով քրտնէքը եւ, մորթին կպչելով՝
 Հազարդակցելու ճնշումէ կրակահար ջգածայրերը գիրար
 շօշափելու համար մարմինէն դուրս կ'ուզեն գալ...

Աչքեր կը պզտորին լորձումնով շաղուած շոգիէն:

Ներդաշնակութիւնը այս մտաերեւութային խնկարկումին
 կը փանդուի անձայն եւ կ'անհետանայ:
 Առաջին փոքր ճիգ-շարժումէն մինչեւ մերձեցում
 շրթումները մեր
 կը բզկտեն իրար –
 անոնք մոռցած են,
 որ մեր դէմքին վրայ աճած են,
 մոռցած են, թէ մերն են,
 մոռցած են մեզ
 եւ մենք մոռցած ենք մեր շրթումները...

ՀՐԱԺԵՇՏ

Նրբ կռկռդէդ փչող բառերը
 միայն ինքնանկարդ է, որ կը գծեն,
 ինչու՞ միշտ երկիւղածութեան կը դիմես,

digitised by A.R.A.R.@

մոյնիսկ երբ այդ դիմակներդ հեղինակ չունին
եւ դիմակները աւելի յատկանշական են, քան դէմքը:

Եթէ չես ուզեր ընդունիլ,
թէ դուն մեռած ես,
տուր փլասթիկ ձեռներդ,
որ սեղմեմ անոց մէջի մետաղեայ ռսկաքները:

Հիմա, երբ բազուկներդ ուսերէդ կախուած ծանր կը կշռեն,
դուն կրնաս կեանքը դիտել աչքերու կարողութեամբ,
որովհետեւ դուն նկարիչ էիր...

Ես քաղուած եւ օդը նետուած եմ.
Ի՛նչ ուժ կրնայ արգիլել, որ ջուրերը
Հոգին տակէն ժայթիկն եւ երկինք քարճրացնեն գիւ:

Ցաւը կը հասնի օգնութեան
եւ կը փարիս հին վերքերու.
պէտք է երթամ հո՛ն՝ ուր
երկինքը հոգին է խառնուած
եւ ես պէտք է կայծակները հաւաքեմ մեծ մօրս
սարսուղներէն...

ՈՐՈՏՈՒՆ ԼՌՈՒԹԻՒՆ

կատարելագործեցի լռութիւնս
ու գացի ստեղծել անոր տառապանքները:

Եթէ խօսիմ հիմա,
պիտի ըլլամ այն մարդը,
որ ծառերը մերկ տեսաւ
եւ հագուստներ շինեց անոց համար...

Լռութիւնս նուէրի տուփ մըն է,
գոր միշտ կը նուիրեմ ես ինծի...

ԱՐԱՄ ԶԻՒՂԵԱՆ

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

ՆԻՒ ԵՈՐՔ, ՆԻՒ ԵՈՐՔ

Համայնարանը նոր էի աւարտել եւ դրամի պէտք ունէի:

Նիւ Եորքում մարդ չէի ճանաչում, Նիւ Եորքն էլ ինձ չէր ճանաչում:

Ենիւ Եորք Թայմզսում կարդացել էի, թէ Ուալ Սթրիթը մի աշխարաց, բանիմաց ու ներկայանայի երկատարողի պէտք ունի: Ես էի, ճիշտ իրենց ուղած մարդը: Գիշերը չկարողացայ քնել: Վաղուտենից կ'ուենենամ իմ գրասենեակը եւ մի քանի տարուց վեր կը ժազլցեմ Ամերիկայի ելեւժողական ելարանը: Նիւ Եորքի բոլոր դռները կը բացուեն իմ առջեւ: Կեանքը ի՞նչ է որ: Կեանքը կ'առնեմ ափիս մէջ, այնքան կը սեղմեմ, մինչեւ որ ազամանդ գտնայ: Բրոքսից գնացքը նստեցի, հասայ Թայմզ Սթրիթ, փոխեցի, ընկայ անծանօթ փապուղիների մէջ, դուրս ելայ լոյս աշխարհ: Գիտէի վերին ու միջին Մանհատանը: Ստորին Մանհատանը մի նոր աշխարհ էր, յունա-հռոմէական տաճարների մի ահագին համալիր: Ետտ գիւրաւ գտայ հասցէն: ՔՋԱՍՈՐՆ, Փարրաք անդ Հոքսթրոք: Ճիշդ ժամը Ցին, վերելակով բարձրացայ 11րդ յարկ, ներկայացայ Մըստըր Սմիթին, որը իր հասարակեցների տակից մի պահ ինձ գնեց, ասաց.

— Որտե՞ղ էք սովորել իրաւաբանութիւնը:

— Իրաւաբան չեմ,— պատասխանեցի:

— Ուրեմն, ելեւժողէտ էք,— ասաց Մըստըր Սմիթը:

— Ոչ, ելեւժողէտ չեմ,— պատասխանեցի:

— Ուրեմն, հաշուապահ էք,— հետաքրքրուեց Մըստըր Սմիթը:

— Հաշուապահութիւն չեմ արել,— պատասխանեցի:

— Սակայն սակարանային գործառնութիւնների մասնագէտ էք,— պնդեց Մըստըր Սմիթը:

— Ոչ, պատասխանեցի,— ոչ մի դադափար չունեմ սակարանային գործառնութիւնների մասին, սակայն կը սովորեմ:

— Ինչպե՞ս:

— Աշխատելով եւ փորձառութիւն ձեռք բերելով:

Առաջին անգամը լինելով ժպտալի պէս մի բան երեւաց Մըստըր Սմիթի դէմքին վրայ:

— Ի՞նչ էք սովորել,— ասաց նա:

— Հոգեբանութիւն:

— Հոգեբանութիւն,— զարմացաւ Մըստըր Սմիթը,— էլ ի՞նչ:

— Լրագրութիւն:

— Ո՞ր համայնարանում:

— Միզուրի եւ Փոլոմերիա համայնարաններում:

— Այդ լաւ է,— ասաց Մըստըր Սմիթը՝ աւելի հետաքրքրուելով,— հիմա ի՞նչ էք անում:

digitised by A.R.A.R.®

— Բանաստեղծութիւն եմ գրում:
 — Իսկապէ՞ս,— աթոռից վեր բարձրացաւ Մըստրը Սմիթը,— ինչպիսի՞ր
 բանաստեղծութիւն:
 — Ձգիտեմ, հենց բանաստեղծութիւն,— պատասխանեցի:
 — Այդ շատ լաւ է,— ոգիւորուեց Մըստրը Սմիթը,— մենք պէտք ունենք
 բանաստեղծներին:
 Ձիմացայ, թէ այդ «մենք»-ը մասնաւոր էր, թէ ընդհանրական, սակայն
 գօտեպնդուեցի:
 — Կ'ուզէի՞ք լսել իմ մի նոր բանաստեղծութիւնը: Երէկ գիշեր գրեցի:
 — Այո՛, այո՛, շատ կ'ուզէի լսել ձեր բանաստեղծութիւնը,— ասաց Մըս-
 տրը Սմիթը:
 Մոցիս գրպանից հանեցի թուղթի մի կտոր, կարդացի.

Every time you walk on the path of my days
 You bring me a lovely bouquet of magnolias.
 But I always prefer the bouquet of your smiles
 Than millions of magnolias.

Listen to me, gentleness: every morning
 When you come to my tropical hut on the lonely hill
 To give me your greeting, guard your tender feet;
 Along the green of my path, there are evil and angry thorns.

Guard your tender feet.

Բաժրածայն կարգալուց յետոյ զգացի, թէ որքան ձախուեր բան եմ
 գրել: Ո՛չ անգլերէնն է անգլերէն, ո՛չ կառուցն է կառուց, ոչ էլ գաղափարն է
 գաղափար: Այս զուսպ ամերիկացին ի՞նչ իմանայ իմ արեւելեան ցաւերը:

— Հոյակապ՛ա՛յ է, հոյակա՛պ,— բացականչեց Մըստրը Սմիթը,— որքան
 խտացուած յոյզ կայ այդ բանաստեղծութեան մէջ: Մենք այստեղ ի սպառ մո-
 ռացել ենք սիրոյ ցաւը: Դուք իսկական բանաստեղծ էք: Մենք ձեզ պէտք ու-
 նենք: Ե՛րբ էք ուղում գործի անցնել:

— Երբ որ ուղում էք:

— Վաղը ինչպէ՞ս:

— Վաղը լաւ է:

— Ուրեմն, վաղուանից,— ձեռքս ամուր սեղմեց Մըստրը Սմիթը:

Ստորերկրեայ գնացքը կանգ առաւ Եռւմիթն Սֆուէր կայարանում:
 Դրոսւմ գարուն էր: Որոշեցի ըմբռնել գարունը: Մարդկային հոսանքին
 յամենուեցի՝ լոյս աշխարհ գուրս գալու համար: Փողոցամուտ անցքի հանդի-
 պակաց կողմից ճամբորդների վարար գետը ներս էր խուժում դէպի Նիւ Յորքի
 ընդերքը: Բաղժաւարիւր գլուխներին մէջ նշմարեցի Արարատ Բաղդասարեանի
 գլուխը, իմ մանկութեան ընկերը, որը եթէ չեմ սխալոււմ, 1949 թուին Թաւրի-
 դից Շրեւան էր գնացել: Արարատ, կանչեցի, չսեց: Արարատ, բղաւեցի, նորից
 չսեց: Ծուռ եկայ, հրճւտեցի աջ ու ձախ, մի կերպ ճեղքեցի մարմինների յոր-
 ձանքը, հասայ ստորգետնեայ գնացքին այն պահին, երբ առաջ շարժուեց: Ո՛ւր
 է գնում Արարատը: Նա ի՞նչ գործ ունի Նիւ Եորքում: Յաջորդ գնացքը ցատ-
 կեցի, Արարատին գտնելու համար: Յաջորդ կայարանում կ'իջնեմ: Սակայն
 եթէ նա շարունակելու լինի իր հրթը, ի՞նչ պիտի անեմ: Գնացքը գլղղում էր,
 սուբալուվ փաղաքի սեւ որովայնի մէջից: Հազարաւոր թմբած գէմքեր միմեանց

էին նայում՝ ապաւինած իրենց ներքին ժամացոյցին: Արարատ Բաղդասարեանը գերազանց էր թուարանութեան մէջ: Տակաւին մի պուտ պատանի, նա զեկաւորում էր իրենց ընտանեկան կաթնատնտեսութիւնը: Ինձ եւ այլոց օգնում էր թուարանութեան մէջ: Ներքին ինչ—որ հաւասարակշռութիւն ունէր, որից, ըստ երեւոյթին, զուրկ էինք մենք: Ամենաբարդ խնդիրները բացատրում էր, լուծում եւ մենք զարմանում էինք. թէ որտեղից է ամբարեղ այդքան խելք: Միհրան Փոխարեանն էլ լաւ էր թուարանութեան մէջ, սակայն նա չի նարար ձեռքեր ունէր: Մի քանի փայտ կը գամէր իրար, աթոռ, սեղան կը շինէր: Հաւատարիմ ընկեր էր: Զիմացանք որակեղի՞ց եկաւ փրայրը: Թաւրիզում միակ Փիշուֆլանն էր: Տնից ամէն օր չի ու չամիլ էր բերում եւ մեր ընկերութիւնը զնայով ամբանում էր: Շատ չէր խոսում փրայրը, սակայն ասածի մէջ միշտ կուս կար: Մեր դասարանի բանաստեղծը Նորայր Պահլաւունի էր, միշտ ազնւորական: Յետոյ ունէինք Օննիկ Յարութիւնեանը՝ զուրիք միշտ խուզած: Մեր մէջ ամենաբարձրասակն էր ու ամէնից քարին: Բոլորս էր միասնաբար սիրահարուել էինք Թերէզ Տէր—Յակոբեանի եւ Էմմա Ստեփանեանի վրայ: Սիրուն աղջիկներ շատ կային, սակայն մենք համոզուած էինք, որ Թերէզն ու Էմման չնախարհիկ էին: Թերեւս այդ էր պատճառը, որ աշխատում էինք մտերիմ մնալ Թերէզի եղբօր՝ Գրիշայի հետ:

Գնացքը կանգ առաւ 23րդ փողոցի կայարանում: Գուրս չտալեցի մատուցահարթակ: Դէս ու դէն նայեցի: Գնացքը շարժուեց: Վերջին վազոնում աչքս բռնեց Արարատի գլուխը սեւամորթներին գլուխներին մէջ: Այ՛ մարդ, դու ի՞նչ դարձ ունեն նիւ Երբում: Արարատ Բաղդասարեան, ասա՛ խնդրեմ, ո՞ւր ես գնում: Գուրս վազեցի կայարանից, մի թաքսի մտայ, պահանջեցի վայր—կեան առ առաջ ինձ հասցնի 28րդ փողոցի կայանը: Մեքենավարը հրահանգս կատարեց: Գուրս ելայ ինքնաշարժից, աստիճաններից վար վազեցի դէպի կայարանի երախը, խոտնուեցի ամբոխին: Արարատը չկար: Մտայ առաջին գնացքը: Յաջորդ կայարանը Ըմփայր Սթէյք Բիլդինգի կայարանն էր: Ուրեմն, Արարատը անպատճառ այստեղ կը լինի՝ նիւ Երբում ամէնից տեսարժան վայրը: Գուցէ Արարատը չի, ինձ թուացել է, որ Արարատն է: Գուցէ Արարատը Երեւանում նստած թէյ է խմում իր ընտանիքի հետ, մինչ ես նիւ Երբում ընդգլխունեայ կայարաններն ընկած՝ փորձում եմ իմ մանկութիւնը վերապրել, մեր ճիւղերը, որ մնացին Թաւրիզի փողոցներում, Հայկազեան—Թամարեան դպրոցի միջանցքներում եւ Կենտրոնականի այգու մ: Իսկ եթէ Արարատն է, ես ինչպէ՞ս գտնեմ նրան եօթը միլիոն մարդկանց մէջ, երբ ամէն քայլ—լափոխին նոր ցեղախմբեր են արշաւում Մանհատթընի վրայ: Ըմփայր Սթէյք Բիլդինգի վերելակներից մէկը մտայ, բարձրացայ կատարը, դուրս ելայ դիտարան, ուր խոռոմած էին ամէն տարիքի այցելուներ: Դիտանկիւնից դիտանկիւն գնացի, փնտռեցի Արարատին՝ շարունակ տալով իր անունը: Ոմանք կարծեցին խենթացել եմ: Արարատը չկար, փոխարէն քաղաքի ատամնաւոր կրճերն էին բացուել ոտքերիս տակ, ամպի վարազոյրների տակ, երկնաքեր շէնքերի վիթխարի ստուերների տակ, սոսկալի ու ամբարտաւան, սարսափազդու իր մեծութեան մէջ, երկրաշափական իր գծերի մէջ, իր ամենի գեղեցկութեան մէջ, գործը հինաւուրց ու նոր աստուածների, որոնք խենթութեան մի նուպայում որոշել էին մի նոր Բաբելոն բարձրացնել Նոր Աշխարհի դրան առջեւ: Դարձայ արեւելք ու մտածեցի, որ եթէ լոյսի արտաթութեամբ սուրամ, ապա մի ակնթարթում կը հասնեմ Թաւրիզ, կը կանգնեմ Լիլաւայի Մէյդանում, կը գտնեմ Արարատ Բաղդասարեանին ու միւսներին, եւ մի սնեքին եւ կ'ասեմ նրանց՝ պահեցէ՛ք ձեր մանկութեան արեւը, որ լինի շարունակութիւն ու արեւ, որովհետեւ մանկութեան պուրակները երբեք չեն ցամաքում, թէկուզ ցամա-

քաժասեր շեռնանան մեր միջեւ: Այդպիսի բաներ կ'ասեմ եւ մէկ առ մէկ շարքի կը կանգնեցնեմ իմ մանկութեան գեւերին եւ աշխարհով մի կ'աղաղակեմ՝ երանի՜ նրանց, որ դիւահար են, այլապէս ես ի՞նչ պիտի անեմ իրականութիւնը:

Նիւ Եօրքում մի բարեկամ ունէի, անունը՝ Մանուէլ: Մանուէլը մի բարեկամուհի ունէր, անունը՝ Մարգարիտ: Մանուէլն ու Մարգարիտը ապրում էին միասին՝ կիսելով իրենց հացն ու երազը: Մանուէլի գէժը որսութիւնների համազրութիւն էր: Մարգարիտի գէժը ձուածն էր: Երկուսն էլ արտայայտիչ աչքեր ունէին: Միմեանց էին նայում ու հասկանում իրար: Հակադրութիւններ էին եւ միմեանց համազրում էին՝ լցնելով ու պարպելով իրար: Նրանք ապրում էին 72րդ փողոցի եւ Լեքսինգթըն պողոտայի խաչմերուկում, 11րդ յարկի վրայ: Գործից առն էին գալիս, տնային հազուատներ հաշնում, այցելում Սէնթրլի Փարք, ձմեռ թէ ամառ: Դիշերը գնում էին թատրոն, համերգ կամ շարժանկար: Երբեմն էլ նստում էին իրենց ստոյիկեան յարկարածնում, միմեանց պատմում իրենց կեանքը, երբ դեռ չէին հանդիպել: Այդպիսով լրացնում էին իրենց կեանքերի պատմութիւնը:

Մարգարիտը սպիտակ ձուկ էր տապակել: Սպիտակ գինու չիշի խցանը բացեց Մանուէլը: Ընթրիքից յետոյ Մարգարիտը պաղպղղակ մատուցեց: Եւ գարձայ Մանուէլին:

— Ի՞նչ էք ծրագրում:

— Ոչինչ,— պատասխանեց Մանուէլը:

— Ուզում եմ տեսի,— ասացի ես,— ի՞նչ են ձեր ապագայ ծրագրերը:

— Պարզապէս ապրում ենք, ամէն մի օրը տոնածին, ամէն մի օրը իր շերթին,— ասաց Մանուէլը:

— Մեր այսօրը մեր միակ ծրագիրն է,— խօսակցութեան եռանկիւնը լրացրեց Մարգարիտը:

— Ամուսնութիւն, ընտանիք: Այդ էր իմ նպատակը,— շարունակեցի ես:

— Ամուսնութեան մասին մտածել ենք, սակայն դեռ ժամանակը չէ,— ասաց Մանուէլը՝ հայեացքով շոյելով Մարգարիտի հայեացքը:

— Ամուսնութեան համար յենարան է պէտք,— ասաց Մարգարիտը,— խօսքս ապահովութեան մասին է:

— Տնտեսական,— ուզեցի իմանալ:

— Ոչ այնքան տնտեսական, որքան բարոյական: Բարոյական բառն էլ սխալ է,— ասաց Մարգարիտը, մի պահ իր ափին մէջը նայեց, աւելացրեց,— ամուսնայութեան մեծ մասը արդիւնք է հասցնել ամուսնութիւնների: Դեռ իրար չհանցած՝ պարտաւորութիւնների տակ են մտնում եւ, հազիւ մի քանի ամիս անցած՝ գոռում, որ սխալ ճայլ են կատարել: Ահա թէ ինչու ես ու Մանուէլը որոշել ենք սպասել:

— Ուրեմն, սկզբունքօրէն դեմ չէք ամուսնութեան,— Մարգարիտին նայելով խօսքս ուղղեցի երկուսին:

— Ոչ,— ասաց Մանուէլը,— ինչպէս գիտես, ես ու Մարգարիտը սիրում ենք միմեանց, սակայն տակաւին լուս չենք ճանաչում իրար: Այդ չի նշանակում սակայն, թէ միմեանց լուս ճանաչելուց եւ միմեանց թերութիւններն ու առաւելութիւնները գիտենալուց յետոյ որեւէ բան պիտի փոխուի մեր յարաբերութիւնների մէջ: Պարզապէս ուզում ենք հասնել յարաբերութիւնների մի այնպիսի կէտի, երբ այլեւս միանգամայն անկեղծ ու հարազատ լինենք միմեանց նկատմամբ, որպէսզի գիտակ ու ձեռակահոյթիւն չլինեն մեր միջեւ: Որպէսզի ասենք՝ առ ինձ ինչպէս որ կամ, առանց սակարկութեան, առանց պայմանականութեան:

— Զեր ուզածը իզելականն է,— ասացի,— իսկ իզելական սէր գոյու—
թիւն չունի:

— Ո՞վ է իզելականին ձգտում,— թեթեւ յուզուեց Մարգարիտը,— ես
լուկ ուզում եմ կեանքս բաժանել Մանուէլի հետ, երբ Մանուէլը պատրաստ լի—
նի իր կեանքը բաժանելու ինձ հետ: Այս առումով ես աւելի աւանդապաշտ եմ,
քան զեռ այդ չրացած նարօտ կապողները, որոնք տառնին սխալ քայլից յետոյ
ամբողջ կեանքում զժգոհ են մնում իրենց հետ, իրենց ամուսնու հետ:

— Կայ նաեւ այն, որ մենք ոչ միայն ապրում, այլեւ ստեղծում ենք մեր
կեանքը,— ասաց Մանուէլը,— ժամ առ ժամ, օր առ օր: Վաղը միշտ էլ խորհըր—
դաւոր անծանօթն է: Եւ այս անկախ այն հտնդամանքից, թէ տնտեսական
անապահովութիւն գոյութիւն ունի, որ մեր ենթագիտակցութեան վրայ շա—
րունակ կախուած է միջուկային արհաւիրքը:

— Այլ խօսքով, սիրում էք սէրը,— զիտմամբ յետադարձ կատարեցի:

— Մարգարիտը թեւը երկարեց, իր ափի մէջ առաւ Մանուէլի ձեռքը,
զլուխը հակեց, ասաց.

— Այո եւ ոչ, ինչպէ՞ս բացատրեմ: Ես ինձ սիրելով սիրում եմ Մանուէ—
լին եւ Մանուէլին սիրելով սիրում եմ ինձ: Հակասակա՞ն է հնչում, գուցէ այո,
սակայն ճշմարտութիւնն է: Այսքանը գիտեմ, որ Մանուէլի հետ երջանիկ եմ:
Ուրիշ բան մնա՞ց:

— Այո,— ասաց Մանուէլը:

— Ի՞նչ,— հետաքրքրուեց Մարգարիտը:

— Մոռացար սուրճը,— ծիծաղեց Մանուէլը:

Բոլորս միասեղ ծիծաղեցինք:

Յարկարածնից ներս նիւ Եորջն էր: Յարկարածնից գուրս նիւ Եորջն
էր: Նիւ Եորջն էր մեր ոտքերի տակ: Նիւ Եորջն էր մեր գլխի վերեւ: Ապրում
էինք քաղաքի արգանդում, եւ, Մանուէլը, Մարգարիտը եւ Մեծագոյն Նիւ
Եորջի մնացեալ 13 միլիոն բնակիչները, որոնք ցերեկը արշաւում էին քաղաքի
վրայ, գիշերը վերադառնում արուարձանների իրենց կոկիկ տները՝ նահանգի
դետամերձ լրջաններից մինչեւ Նիւ Ջորջի, մինչեւ Քրենիթթըթ ու աւելի հե—
ռունքը: Նիւ Եորջը մազնիսն էր, բազմացեղ, բազմազգի, բազմակրօն հոր—
դանների ռազմարեմը, ուր ամբողջ օրը ողորում էին ապրուստին մի կտոր եր—
ջանկութեան համար: Նիւ Եորջը իմ տունն է: Նիւ Եորջից զատ այլ տուն չու—
նեմ: Միւս բոլոր տներս խորթացել են, դարձել պղտոր յիշատակ: Նիւ Եորջը
յիշատակ չէ, այլ՝ կենդանի վկայ այդ բոլորի, որ ե՛ն, այլ ոչ թէ պիտի լինեն: Նիւ
Եորջը ներկան է, իր բոլոր սրերը ներկայ են: Ով յետ է նայում, ոտքի կոխան է
լինում:

Երբ Մանուէլին հարց տուեցի, պատասխանեց.

— Վերջում մի կտոր ճերմակ թուղթ եւ վրան հաստ վրձինով ուղղա—
հայեաց մի քանի սեւ կոպիտ գծեր ներկիր: Անմիջապէս կը զգաս ուժի ներ—
կայութիւնը աններդաշնակութեան մէջ, ինչպէս Մաղըրուէլի պատատոները:
Ահա Նիւ Եորջի ուժն ու ուժականութիւնը: Երկինքը քերոզ այս շինութիւն—
ները աւելի ուժ են տալիս: Թէ՛ դրական, թէ՛ բացասական: Դրական
խթան է հանդիսանում ստեղծագործութեան, իսկ բացասականը՝ ոճի: Այս
երկու ազդակների միջեւ տարբերութիւնը մազաշափ է: Մանհաթանում շար—
ժը: Ելու տեղ չի մնացել: Մարդիկ խելագարոււմ են: Թելագարութեան նուպա—
յին դանակը զիմացիների փորն են խրում, կամ ոտքի վրայ մի երգ, մի թատեր—
գութիւն կամ վէպ են յօրինում: Ոչ մի տեղ աշխարհում այնքան ուժ ու բա—
խում չի կենտրոնացած մի կէտի վրայ, որքան Նիւ Եորջում:

Մարգարիտը տարբեր կերպ մեկնաբանեց.

— Ռատնարան է Նիւ Եորջը: Ամէն ցեղ ու ազգ իր հետ բերել է իր լա—

ւազոյնն ու վատթարագոյնը: Բարձրային ու մշակութային այս անընդհատ բախումից ստեղծուած է քառս, իսկ քառսից զոյանում է կեանք ու ներդաշնակութիւն, մէկը միւսին անյայիւր, սակայն միանգամայն կենսունակ: Այս հակասութիւնն է Նիւ Եորքի ներքին ու արտաքին կոոյթի գաղտնիքը, ընդհանուրի մէջ այլակերպ, ամէն համայնք պահպանելով իր ուրոյն նկարագիրը եւ միաժամանակ մաս կազմելով մեծագոյն գերդաստանին, որ Նիւ Եորքն է:

Երբ հերթը ինձ եկաւ, ասացի, թէ ինձ գրաւողը քաղաքի յարաշարժ տենդն է, շարժումի ու երեւոյթների շարատեւ փոփոխութիւնը, միլիոնաւոր մարդկանց մէջ մենակ լինելու գիտակցութիւնը եւ միլիոնաւորների հետ բախտակից լինելու իրականութիւնը, երբ գիտես, թէ ներկայ պահը անկրկնելի է, անփոխարինելի, որ շուտօրէի շաղկապ կայ քո եւ դիմացի խանութպանի միջեւ, արագավազ խափշիկ տղայի միջեւ, գետնուղիներում ծուարած ընչազուրկների միջեւ, բազմահազար գրասենեակներում թակարդուած պաշտօնեաների միջեւ: Քո եւ քաղաքի միջեւ: Նիւ Եորքը կը մերժի քեզ, մինչեւ որ քո՝ դուք ես Նիւ Եորքը իր անարկու վեհութեամբ, իր անասելի կեղտոտութեամբ, իր սուրբերով ու մարդասպաններով, իր աւանդապաշտութեամբ ու սեռային սանձարձակութեամբ: Մէկը բոլորի մէջ՝ անկարելի երազին կառնած:

Ռաբըֆելըր Սէնթրի ստորին ճաշարանում նստել, ընթրում ենք՝ ես ու Ջիմի Ջաքսընը:

Ջիմի Ջաքսընը սեւամորթ է, Գոլոմբիա-Հարիսթընի լիմոնադէրը, որը հիմա ամուսնացել է, երկու փոքրիկներ ունի: Նա ապրում ու աշխատում է Հարլեմում, որպէս հանրային առողջապահական հիմնարկութեան բուժաշխատող: Նա միջնասակ է, նիհար, գրեթէ զուրկ խափշիկային դիմագծերից: Եթէ արճադոյն չլինէր, պիտի կարծէիր, թէ միջերկրականեան աւազանի չըջակայրից է սերում: Թէ ինչու էի ես հանրային առողջապահութեան դասընթացների հետեւում, այդ միայն Աստուած գիտէ: Կարօտել էի Ջիմին: Հեռախօսների, ժամագրութեանը՝ վերաշխուժացնելու համար մեր բարեկամութիւնը: Ինքն առաջարկեց ժամագրավայրը:

— Ջիմի, գուցէ յաճախ ես Ռաբըֆելըրի Սէնթրի այս ճաշարանը այցելում, — ասացի:

— Ոչ, առաջին անգամն է, — պատասխանեց նա, — ուզեցի տեսնել, թէ ինչպիսի տեղ է:

— Ես էլ առաջին անգամն է, որ ընթրում եմ այստեղ, — ասացի:

— Ես Հարլեմից գրեթէ զուրս չեմ գալիս, — իր մտքի թելին կառնած մնաց Ջիմին:

— Ինչո՞ւ:

— Գործիս բերումով, — ասաց Ջիմին, — յետոյ ինձ հարազատ եմ գտում Հարլեմում: Ինձ թւում է, թէ Մանհայթանը սպիտակամորթներին է պատկանում:

— Բայց Մանհայթանը լիցուն է սեւամորթներով:

— Այդպիսիները սպիտակամորթ-սեւամորթներ են:

— Քեզ չեմ հասկանում, Ջիմի Ջաքսըն:

— Քեզ մի բան ասեմ, — լրջաւ Ջիմին, — համալսարանում ձեւացնում էինք, թէ ցեղային խտրականութիւնը վերացել է, որ մաշկի գոյն գոյութիւն չունի, որ բոլորս էլ հաւասար քաղաքացիներ ենք: Եւ մասամբ հաւատում էինք: Սակայն կեանքը միանգամայն այլ բան է ասում: Տասնեակ տեղեր գործի գիծում կատարեցի, բոլորն էլ մերժեցին: Ընտրեցի մի քանիստ՝ վերադարձայ Հարլեմ:

— Սակայն այդ ճիշդ չէ, Ջիմի, — առարկեցի, — Մանհայթանը վիտում է սեւամորթ պաշտօնեաներով:

— Ամէնքն ալ ցածրաստիճան իրատեսիլակներ կամ սպասարկութեան ասպարէզին ծառայողներ:

— Դու ծայրայեղութեան ես անցնում եւ քո հերթին խտրականութիւն գրեւորում:

— Քեզ մի հարց տամ,— բորբոքուեց Ջիմին,— հիմա, այստեղ, քո առջեւ ո՞ւմ ես տեսնում:

— Ջիմի Զաքարեան,— պատասխանեցի:

Այդ պահին սեւամորթ սպասաւորը մեր ընթրիքը բերեց, պնակը նախ իմ առջեւ դրեց, ապա Ջիմիին առջեւ, զինի լցրեց բաժակներով մէջ, բարի ախորժակ մաղթեց, գնաց:

— Այո, Ջիմի Զաքարեան,— խօսեց Ջիմին,— սակայն սեւամորթ Ջիմի Զաքարեան:

— Այո, սեւամորթ Ջիմի Զաքարեան: Յետոյ ի՞նչ:

— Ա՛յն՝ որ դու շարունակ ինձ սեւամորթ ես տեսնում:

— Հապա ի՞նչ տեսնեմ:

— Մա՛րդ Ջիմի Զաքարեան, այլ ոչ թէ սեւամորթ Ջիմի Զաքարեան:

— Դու գիտես, Ջիմի,— այլեւս վրդովուեցի,— որ ես բնաւ խտրականութիւն չեմ գնում ցեղերի ու ազգութիւնների միջեւ: Միշտ մարդն եմ փնտրում, այլ ոչ թէ իր ազգային պատկանելիութիւնը: Յետոյ մտածում եմ, որ ես Հայ եմ եւ դարեւ չաքա՛նակ իմ ժողովուրդը անթափանչ կապ է կղել ազգային ու կրօնական խառնակութեան: Գու ինչպէ՞ս կարող ես նման բան ասել:

Ջիմին գլուխը հակեց իր պնակին, պատառաքաղով սուսկի կտորները ջրկեց, մի կողմ հրեց, ապա, իր բաց սրճագոյն աշքերը աշքերիս յառելով՝ հան— գարտ խօսեց:

— Ամբողջ Ամերիկան ցեղապաշտ է: Ամբողջ աշխարհը ցեղապաշտ է: Բոլոր ազգութիւնները ցեղամոլ են՝ թէ՛ Փրանսիացին, թէ՛ անգլիացին, թէ՛ ռուսը, թէ՛ գերմանացին, բոլո՛րը, բոլո՛րը: Օրէնքի կամ քաղաքակրթութեան հարց չէ, այլ՝ ժառանգական մտայնութեան: Ամէն մարդու մէջ մի—մի ցեղա— պաշտ է նստած:

— Սակայն այդ առելով, դու էլ ցեղապաշտութիւն ես ըստազուում,— ասացի,— ոչ ոքի չես հանդուրժում: Ատում ես բոլորին, յատկապէս սպիտակա— մորթներին:

— Դու չգիտես ի՞նչ է նշանակում սեւամորթ լինելը: Ինչ էլ անեմ, ինչ— պիտի դիրք ու հոլակ էլ նուանելու լինեմ, նորից սեւամորթ եմ, ինձ սե— ւամորթ կը ճանաչեն: Այս ամէնքը ինձ հետ գերեզման կը տանեմ: Դու չգի— տես, թէ ինչպիսի գազան կայ իմ ներսում:

— Դու չափազանցում ես,— աշխատեցի տրամաբանական մի ելք գտնել,— մեղանից իւրաքանչիւրը իր հետ կրում է ազգայնի թէ ցեղային ինչ—որ նուաստացման զգացում: Այս է իրականութիւնը: Սակայն պիտի պայքարել անհատական կամ հաւաքական ամէն տեսակի նախապաշարումների դէմ: Ինչո՞ւ ես մտել Հարլիմ ու դուրս չեմ գալիս:

— Քեզ մի այլ հարց տամ, որովհետեւ այդ ճառերը շատ եմ լսել,— ասաց Ջիմին:

— Օգէ՛յ:

— Դու որ իմ մտերիմ ընկերն ես, արդեօք կը համաձայնուե՞ս քո աղջ— կայ եւ իմ որդու ամուսնութեանը:

Հեռանկարը այնքան անհասանելի էր, որ անմիջապէս պատասխանեցի:

— Այդ իմ եւ քո Հայեցողութիւնից դուրս է: Երբ ամուսնանամ եւ դուստր ունենամ, այդ որդումը կը թողնեմ իրեն:

— Դու խուսափեցիր,— ասաց Ջիմի Ջաքսոնը,— ասա՛, արդեօք կը համաձայնութի՞ր սեւամորթ փեսայ ունենալ:

— Քո հարցումը այնքան տեսական է, Ջիմի, որ չգիտեմ պատասխանել:

— Այո՞, թէ ոչ,— հետապնդեց Ջիմին:

— Սակայն կայ նման միութեան հետեւանքը: Կայ խառնածին երեխայի հանդամանքը:

— Ես էլ խառնածին եմ,— անդուժացաւ Ջիմի Ջաքսոնը:

— Սակայն դու դեր չես ունեցել քո ծնունդի մէջ, մինչ ինձ պարտադրում ես որոշում կայացնել մի ապագայ ծնունդի նկատմամբ:

— Հիտու նշանաբ,— գաղափարացաւ Ջիմին,— կը համաձայնութի՞ր սեւամորթ կնոջ հետ ամուսնանալ:

— Ես հայ եմ: Կը նախընտրէի հայ կին:

— Ասելիք չունենձ այլեւս,— ասաց Ջիմին, կերակուրի պնակը գէն հրեց:

Ժամանակին հոգիս միմոզայ էր: Ամէն մի երեւոյթ արձանագրում էր իր անհուն ճերմակի վրայ: Հիմա այնքան տպաւորութիւններ եմ կուտակել, որ այլեւս ճերմակի տեղ չէ մնացել: Դոյները հրճւում են իրար, գիտելիքները դառնում իրար վրայ, ա՛յն աստիճան, որ զգայարաններս վրայ բթացման փուլին եմ զգում: Եւ գիտեմ, որ ոչինչ գիտեմ: Ժամանակին բոլոր հարցերի պատասխանը գիտեմ: Հիմա նոյնիսկ հարցումը չգիտեմ: Գիտենալու դէպքում անգամ չգիտեմ, երբ ինձ տրուած բոլոր պատասխանները անհեթեթ են, երբ հիմնական պատճառը անուրդի է դրուած, երբ պատասխանը ամէնուր է՝ մեր հասկացած ու չհասկացած տեղերի միմոզային անհեթեթ մէջ, տերեւի մէջ, աստղերի մէջ: Մի տեղ ասել, կրկնում եմ: Անպատճառ մի պատճառ կայ: Այլապէս չէր լինի նիւ Եօրքը, չէր լինի այս գրանիտեայ կղզին իր պնակած գիւղականներով, ուր ժամանակը յետ է մնում կենտրոնից, ուր ներկան դեռ ներկայ չեղած՝ դառնում է անցեալ, ազդակը, որ քարանուէ է թւում: Բարձր քառուղիներում եւ քարերում, որ դառնում են ազդակ՝ քերելով քաղաքի քարանձաւները, ուր մարդը ապաւինել է գոյատեւման իր ամենասուր բնազդին, եթէ ուշ հասնես՝ կորած ես, բերանիդ պատառը ուրիշը կը խլի: Այդուհանդերձ, մարդաստան են նիւ Եօրքի բնակիչները, ամէն մարդ գիտէ միւսի ցուր, սան ֆրանսիականներէ՝ իր պէս չեն, որ այցելուին մոլորեցնում են միմեանց յաջորդող բոլորների մէջ: Մի առանձին երկիր է նիւ Եօրքը, ո՛չ ամերիկեան է, ոչ էլ եւրոպական, աշխարհի ամէն մի անկիւնից մի բան բերել-խառնել են իրար, տուել նոր ինքնու-թիւն, երկրաշափութիւն ու բանաստեղծութիւն եւ այդ բոլորի մէջ հեւիչեւ վազքը փախչող հրապի, որը յաճախ ծերանում է բրդուէլի երկայնքում, երբ այդ նոյն պահին երէկուան փողոցարեակ ջութակահարը այսօր Վիվալդի է նուագում Քարներդի Հոլում, շատ շի պատահում, բայց պատահում է, եթէ ճիշդ ժամանակին ճիշդ մարդու հանդիպես, պայմանով, որ ամբողջ կեանքիդ ընթացքում պատրաստ լինես այդ հանդիպման համար: Անպատճառ մի պատճառ կայ, այլապէս այսքան հակասութիւններ չէին թափի նիւ Եօրքի գլխին, տաճարին կից սակարան, Աքրիփ-Թիզի կողքին Քրիստըն Սայրմսի գրադարան, հողեւորական ու պոռնիկ գրուցելիս, պերճանքի մէջ աղքատութիւն: Այս բոլորի պատճառը ես եմ, որ միմոզայի պէս արձանագրում եմ ամբողջի հայեացքը իմ հայեացքում եւ նրա հայեացքը իմ հայեացքում, անդադար ոտնաձայնը մայիլների վրայ եւ նրա ոտնաձայնը օրերիս արահետների վրայ, Ուաշինգթոն Սթուէրում նոր ծաղկանոց են տնկել, թմրամոլները գնացել, սիրահարներն են եկել, սակայն, աւա՛ղ, ծաղկանոցում լուշաններ չկան, հիմա ես լսում եմ քաղաքի բազմաշնչին ձայնը եւ այդ ձայների մէջ նրա արծաթէ ձայնը, թէկուզ հազար չափերի պատուէն քաղաքի թոքերը, հիմա ես զգում եմ նիւ Եօրքի տաք շունը Բաթլերից մինչեւ Բրոնքսու Բրուքլին եւ այդ շնի մէջ

նրա շնախարհիկ շուռը Հասուն Հասկերիս վրայ: Սիրում եմ Նիւ Եորքի խելահալ ցերեկն ու գիշերուայ լոյսերը եւ այդ լոյսերի մէջ նրա կեանքի լոյսը, որը ցամաքամասեր է լուսաւորում: Հիմա կընէ եմ տպաւորութիւնների տարափի տակ եւ զգայարաններիս վրայ բխացման փոշին է նստել, սակայն տակաւին ականջայուր եմ հողի անքոցին եւ Սէնթրըլ Փարքի ծառերի շուռնին եւ այդ շուռնին մէջ նրա շուռնէ շուռնին, որը շարունակ յոյս է ներշնչում իմ արտում օրերին: Նա ու քաղաքը, նոյնացած ու ամբողջացած, իմ տունն ու տիրուհին եւ նրանց միջեւ զոյգ զեւերը քաղաքի, իրենց բիրտ նաւամատոյցներով եւ մեազեայ սեւ կոնկրետով եւ այդ կոնկրետների մէջ միւս կոնկրետը, որի ամէն մի խօսքը աւետիս է, երբ լրագրերը լեցուն են մոայլ լուրերով: Անպատճառ մի պատճառ կայ եւ այս բոլորի պատճառը ես չեմ, այլ՝ աստեղային փոշին, որից զոյացել է Նիւ Եորքը, Նիւ Եորքի հետ աշխարհը, միւս աշխարհները եւ այդ աշխարհների մէջ միւս աշխարհը, որ նա՛ է, իր սիրով ու անուրջով, որը մի ամբողջ աշխարհ է: Հիմա այնքաւ ճերմակի տեղ չէ մնացել: Գոյները այնքան խտացել են, որ ճերմակի տեղ չի մնացել: Ես առնում եմ հիմանական եօթը զոյները, այնքան սեղմում, որ սպիտակ են դառնում եւ այդ սպիտակութեան մէջ տեսնում եմ Նիւ Եորքի անպատկառ անմեղութիւնը, ճարպիկ ու միամիտ, մի կատարեալ ամբարտաւան պատանի, որը եթէ ուզի, վաղը մի այլ աշտարակ կը կառուցի, զեւերը կը փոքի, մինչեւ Քաթմանդու կը հասնի: Ես նոյնիսկ չօշափում եմ Նիւ Եորքի սիրտը, որը բազմասիրտ է ու բազմերազ, կարեկից ու զթառատ, սակայն միլիոնաւոր սրտերի մէջ ամենազթառատը նրա սիրտն է, որի մօտ Ազատութեան արձանը լոկ արձան է:

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

Յունուար, 1987 – Ուաշինգթոն տիֆո



ԻՎԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Վ. ԹԵՓԵԱՆ

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՅԻ «ԱՄԵՐԻԿԵԱՆ ՇՈՒՐՋՊԱՐ»Ը

Առանձն առա՞մ մը երկ մը հրթրո՞ւն նման կ'արձակուի մեր գրական անընթացին մէջ: Կու գայ երկը բոլոր կողմերով յղկուած, փայլատակող, ամբարած կառոյց, ուժ եւ զօրութիւն, կու գայ այնպիսի՝ վարպետութեամբ, որ կը լեցունի անհամարժեք: Գոյութիւն ունի գիրքը իբրեւ տիմամիջ իրականութիւն:

Այս գործը՝ «Ամերիկեան շուրջպար», Յակոբ Կարապենյի պատմութեամբներու շարքի հատորն է եւ վեցերորդ երկը: Առաջին անգամ, 1970ին, հրատարակած է «Անձամօր հոգիներ», 1972ին՝ «Կարթագենի դուստրը» (վէպ), 1975ին՝ «Նոր աշխարհի հին սերմնացաններ», 1981ին՝ «Միջմարտ», 1983ին՝ «Աղամի գիրքը» (վէպ) եւ 1986ին՝ «Ամերիկեան շուրջպար»: Շարք մը՝ որ զանցառելի բերք մը չէ, եթէ գիտուի ժամանակի աստիճանին վրայէն:

Պիտի արտայայտուիմ «Ամերիկեան շուրջպար»ին մասին եւ ոչ թէ պիտի բացատրեմ գործը, որովհետեւ գծուար է մասուրականի ձեռով բացատրել բան մը, որուն բոլոր մակարդակները, որոնք կը կապեն զիրար՝ անգին են մտային սարքաւորումէ: Ինչպէ՞ս ըլլայ բացայայտ եւ մասնայատուկ, երբ որեւէ արուեստի գործ իր խնկութեան մէջ պիտի մնայ անհուն եւ արտայայտելի: Եւ եթէ էջ առ էջ փորձեմ ներկայացնել հատորը, դարձեալ անկարող պիտի ըլլամ սպառելու զայն որեւէ նկարագրութեամբ, եւ ինձի պիտի մնայ միայն գոհունակութիւնը՝ փորձարկութեան բանի մը, զոր չեմ կրնար բացատրել: Դիւրին չէ նաեւ անոր համար, որ երբ հեղինակ մը կ'օգտագործէ գատարկ էջին վրայ իր անծայր ազատութիւնը, քննարկողը կը ստիպուի կապուել, չզթայուիլ այդ էջերուն:

Յատկանշականը այն է Կարապենյի մօտ, որ միշտ երկու բեւեռներու վրայ ընթացող գրող մըն է:

digitised by A.R.A.R.®

Առաջին՝ զրոգ մըն է արեւելահայ եւ արեւմտահայ լեզուներու բարե-
խառնութիւնը իր լեզուին մէջ ձուլած: Իր նկարագիրը կազմաւորուեցաւ
Թաւրիզի մէջ, տաղանդը՝ Միացեալ Նահանգներու: Թաւրիզի ժողովրդային
հայերէնէն մինչեւ ամերիկահայու խոսակցական հայերէնը հարազատօրէն կու
տայ: Ամէնէն առաջ՝ կախարդ մըն է լեզուի, որ կրնայ բառերուն զեղակառոյց
ձեւ տալ եւ ոճին խաղերով հայեցնել զանոնք:

Երկրորդ՝ իր տողերուն մէջ այնքան ներդաշնակ կ'ապրին վիպասանն
ու բանաստեղծը: Մէկ կողմէ՝ բնատուր ու ժողովրդականութեան հատու ըմ-
բռնումով, տեսողութեան ճշգրտութեամբ, միւս կողմէ՝ բառերուն նկատ-
մամբ գերակշիռ զգայնութեամբ եւ երեւակայութեան հրճուանքով՝ կարա-
պենց կրցաւ արձակին բանաստեղծութեան թելեր տալ: Իր գործերը թափան-
ցիկ պատուհան մը չեն աշխարհին բացուած, զրոգ մը չէ, որ դիմակ կը դնէ իր
անմին վրայ, կամ կ'անհետի իր նկարագրած տիպարներուն ետին. ան յաճախ
կը կանգնի իր տիպարներուն եւ ընթերցողներուն մէջեւ: Իր հմուտ արհես-
տագիտութեան կողքին՝ զրելու պատասխանատուութիւնը չէ մնացած իր
գործիչներուն մէջ, որ լեզուի կողքին ճշտութիւնն է եւ մօտեցումի ալլազան
կերպերու թարմութիւնը, այլ նախ եւ առաջ՝ իր սեփական զգայնութիւննե-
րուն: Իր տողերը որոշազորոգ զուպանակները կեանքի կերքն է եւ տառապանքը
— բան մը, որ մարդկային կացութեան նկատումէն եւ խոկումէն կու գայ:
Միայն մարդկային տառապանքի հետ շաղկուելով է, որ զրոգ մը կրնայ այսքան
զգայնութիւն եւ գիտապաշար ունենայ. եւ միայն քառսի հետ ծանօթացումով
է, որ զրոգի մը հարցը կը գտնայ ցոյց տալ մերկացած ճշմարտութիւնը, հայ-
հոյեւի ի հարկին, բայց չաղարտել, չծածկել ճշմարտութիւնը:

Երրորդ՝ մինչ անցեալ զարաշխանին զբաղան արժէքը բարոյականն էր,
զոր այս գարուն սկիզբը փոխարինեց զեղադիտականը, կարապենցի պարա-
զային՝ անշուշտ գոյութիւն ունի բացարձակ զեղազեւոր, բայց բարոյախօսը
բացակայ չէ: Ան գիտէ, որ զբաղան աւանդական ձեւերը աւանդական նպա-
տակներու համար՝ այլեւս անհանդուրժելի են, որ՝ եթէ երկ մը կազմուած է
իրմէ գուրս գտնուող զաղափարներով, եթէ տեսակ մը ծրագրուած նպատակ
կայ, վարդապետութիւններու եւ զաղափարաբանութիւններու ղէղ մը՝ որ
պէտք է կրկնուի, այն ատեն եղածը կ'ըլլայ զիջում, եւ ոչ թէ արուեստ կը յայտ-
նուի, այլ՝ բանականութիւն: Ծիշող է, որ կարապենց տուաւ մեզի այն յոյսերն ու հա-
ւատքները, որոնք մեր մշակութային աւանդներն էին. բայց անոնք՝ յոյսը, ար-
դարութիւնը, հայրենիքը, հայութիւնը, յատկապէս իր «Աղամի գիրք»ին եւ
«Ամերիկեան շուրջպար»ին մէջ, տասնամեակներու իր փնտնտուքին
արդիւնքն են, սերունդներու փնտնտուքները եւ ոչ թէ ծածկմուած զաղա-
փարներ, եւ ասոր համար է, որ համոզիչ կը դառնան:

Չորրորդ՝ անխաղախ հայն է եւ անմիացորդ ամերիկացին: Այս
տուեալը իր գործին վերլուծականին միջոցաւ պիտի վերհանուի, բայց պէտք է
նշել, որ ասկէ կը հետեւցուի իր ամենազօրաւոր արժանիքներէն մէկը — եւ
ասիական հինգերորդ դուզահուն է — կարապենց կը գրէ երկու մակարդակներու
վրայ՝ այժմէական եւ պատմական:

Ամբողջ Սփիւռքի տարածքին կարապենցի նախորդած եւ իր սերուն-
դին գրականութիւնը ենթարկուած էր էպպէս հայկական մտահոգութիւննե-
րու: Եղեռնը, որ հիմա զաղափարի հրդեհ է միայն, այն ատեն Փիղիքական
հրդեհ էր գեռ: Մարդոց ներաշխարհը քարացած էր: Գրողները կ'երգէին հո-
գեւոր եւ մտային նահանջ, կեանքը դարձած էր մզմաւանջ ու անէծք: Կարա-
պենց թերեւս միակն էր, որ պահպանելով հանդերձ իր կապը նախնիներուն
հետ, յաջողեցաւ հետաքրքրական անկախութիւն մը պահել զասական աւան-
դութիւններէն:

Այս դիրքին չէր երբեք: Սփիւռքի դրող մը շատ գիմականեր պիտի գործածէ, որպէսզի կարենայ ինքզինք ճանշնալ Սփիւռքի անաւարտ յոյսին տակ: Ժեկուսացած է եւ վարակուած խորհրդաւոր լոյսով մը: ամէն բան կը տեսնէ, բայց խօսքին ամայութիւնը կը խեղդէ կոկորդը: Կարապենցիներ գոյութենապաշտ տրամ մը եղաւ ինքզինք փնտռելու, տրամ մը՝ երբ մշակոյթը բզկտուած էր: Այս տրամը միանգամայն իր հրճուանքն է եւ յուսարեկումը, եւ իւրաքանչիւր երկին մէջ կու տայ արդէն անոր հակաճառական բնոյթը:

Անհրաժեշտ հիմնադրաք մը ունին իր պատմութեանը, որ հաղորդակցութիւնն է եւ, մա նաւանդ՝ հաղորդութիւնը: Իրեն համար շատ կարեւոր է հաղորդութիւնը: Հաղորդութիւն կա՞յ թէ չկայ, եթէ չկայ՝ մնացեալը սուտ է, մնացեալը՝ պարապութիւն: Հաղորդութեան միջոցով է, որ, հակառակ իր գոյապաշտութեան՝ յուսափշուր չի դառնար:

Պիտի ընեմ քանի մը մէջբերումներ, նախածանօթացնելու համար Վանքի կեանքը շուրջպարքը, որովհետեւ կը կարծեմ, որ այս գործին խարխիւր կը կազմեն:

«Ամերիկեան շուրջպարք գրութեան մէջ կը նկարագրէ քսահերորդ դարը՝ «Ինքնաշխատ հոգեւորները մտել են ամէն ծակածուկ եւ անտում տիեզերային դիմակահանգէսի մեծ տօնը, ամէն առաւօտ նոր քաղաք է բարձրանում, իսկ հենքը տնձում են ժամանակի թեւան տակ: Անցեալը դարձել է օրուայ կարգախօսը, երբ Ամերիկեան արդէն ապագայի մէջ է: Գաղտնիքը մտել է մատնոցի մէջ եւ արդէն սկսուել է Սիլիկոնի գարաշրջանը»:

Բայց կը դէ քանի մը տող ետք:

«Մեծագոյնը Սերվանտէսն է: Փնտռում էր: Իսկ թէ ի՞նչ կը լինի արդիւնքը, կարեւոր չէ: Կարեւոր չէ նաեւ տեղագրութիւնը, եթէ անքառու աներազ պիտի լինի կեանքը, թէկուզ Թիւ-Վիի վրայ ամէն ինչ ժպիտով վերջանայ, քմբիքը, որի տակ փշտու ծաղիկներ կան, երբ հառաքակցանութիւնը աւելի մարդկային է, քան ենթադրում են վիճակագիրները»:

Այս քաջարժակ մարդկայնապաշտութեան ետին՝ անշուշտ իսկական տրամ մը կայ, անձնական կեանքի, որ հակառակ իր եռուստառապանքին՝ լոյսի երանգ մը ունի: Իր մանկութեան մասին կը գրէ.

«Այդ մանկութիւն չէր, այլ՝ բուք շեղբերի անվերջ քնքոց, որը սակայն ռեկորդին չէր հասնում: Այդուհանդերձ, կեանքի արշալոյս էր, որի մի ցոլքն անգամ չեմ փախի ամենաշուայի ճանաչի հետ: Փողոցներն ընկած շարունակ փնտռում էի: Ո՛ւր որ ինձ տարան, փախայ: Հարազատների տուն տարան, փախայ: Ֆրանսիական գիշերօթիկ դպրոց տարան, փախայ: Ես իմ տունն էի ուզում: Գտայ հօրեմական տունը եւ սնից դուրս չեկայ: Անմայր ու անթնամ մնացի, սակայն պապերիս տնից դուրս չեկայ: Յետոյ մի օր Թեհրան փախայ, Թեհրանից Պաքիստան: Փնտռումս չգտայ: Վերադարձայ, Ամերիկա մեկնեցի: Ամերիկայում էլ չգտայ: ... Այլ կերպ ասած՝ փախում էի ինքս ինձանից: Եւ յանկարծ առանց մանկութիւնս ապրած լինելու, հասունացայ, դարձայ հասուն մանուկ»:

Այսպէս, մնաց կեանքէն անյագ, անհեթեթի եւ իրողութեան ազուցում մը եղաւ իր կեանքը:

Շնկել եմ հունի մէջ, սակայն մի անաւարտ բան է մնացել այստեղ ու այնտեղ: Մնացել է մի վիթխարի շուշան հորիզոնի պառնգիւն, որը ո՛չ բացում է, ոչ էլ քառամում, ապրում է իր ուրոյն կեանքը, անկախ ու ինքնամատոյց, կարծես որքէ յարակցութիւն չունենալով ժամանակի ու հնացող տարերքի հետ:

«Կարեւորը այն չէ, թէ ինչ պիտի լինէր, այլ ա՛յն՝ որ եղել է, որ եղել

է մի պահ, երբ կեանքը գեղեցիկ էր. տիեզերքը՝ անհուն եւ գալիքը, քուսմ էր, մի սպիտակ թեւ, որիմ ապաւինած կարելի էր ճախրել միմյնիս յաւիտեանութիւն: Արդէն եղած-չեղածը այդ է, մի վայրկեան կեանքերի հպումի միջեւ, որը քարանձաւ փոխարէն՝ հոսում է շարունակ գիտակցութեան ամենահեռաւոր արահետներում:

Փրուստ տեղ մը կ'ըսէ:

«Ամէն ժամ, որ մեր կեանքէն կ'անցնի, տեղ մը կը պահուիտի, հոն կը մնայ ձերքակալութեան, միմյնեւ զիմք իր անունով կանչեմք եւ ազատագրեմք: Անցնող ղէպք մը դուրս կը հանէ զիմք այդ խռոշէն եւ ղէպք կը ցցուի»:

«Ամերիկեան շուրջպարճի ամբողջ հաւաքածոն (15 պատմութիւն, 250 էջ) կը յենի այս ճիշդին վրայ, վերաբերելու եւ դիւստանդարտ իր սեփական կեանքին բրտութիւնը, շինելու իր կեանքը եւ գրելու, տպելու, ինչպէս, յազ-թանակելու, սիրելու, վերաբերելու կեանքը՝ կեանքին ընդմէջէն: Կարելորդ այն է, որ մարդը կրաւորական չէ:

Եւ ասիկա բոլորստութեան հրաւեր մը կը ստեղծէ: Բայց բոլորստութեան այդ գաղափարաբանութեան ձեւ մըն է, որովհետեւ կրնաս բոլորստանայ միմիայն եթէ կը կարծես, որ բան մը կրնաս փոխել: Կարապետ կը հաւատայ ասոր, բարեփոխումը հոգեկան է անշուշտ եւ կարելի է մարդկայնապաշտութեամբ — ֆիզիքական աշխարհի, ներկայի մէջ — պատմութիւն եւ բնագիտական տրիշ — գոյաւորում մը ֆիզիքական աշխարհէն անդին, բանաստեղծութիւն — նը: Եւ երկու առարկաներու շփումով յառաջացած կայծին պէս, իր գրութիւններուն մէջ, մարդկայնականութեան անդուլ գործողութիւնը եւ բնագիտականութեան արարողութիւնը — եւ ինչ որ կու գայ անոնց հետ — կու տայ գերլուսաւորում մը գործին, որ կը տեսնէ բանականէն անդին:

Ուրիշ քեմիստի մը՝ գիտակցութեան ուղիով (stream of consciousness) կու տայ մտածումը, մտապատկերները, զգացումները մանրամասնորէն, անոնց մտքին մէջ կատարուած պահուն իսկ, մինչ սովորական արձակագիր մը պիտի ամփոփէր եւ բացատրէր զանոնք՝ անոնց պատահելէն ետք: Այլ խօսքով՝ կը փոխանցէ կեանքի շերտ մը, երբ անիկա կ'անցնի արձանագրող միջնորդին կամ միջնորդի մէջէն, կայծկլտումները ամէնէն խորը գտնուող երակին, որ իր պատգամները կ'ուղղէ մտքին: Ձի պատմել տիպարի մը պատմութիւնը, այլ կը ձգէ, որ ան ինքզինք պատմէ, այսինքն՝ կը թատերականացնէ, այնքան՝ որ երբեմն անձը մէկզի կը մնայ, որովհետեւ անոր գիտակցական աշխարհին հրահրումը աւելի զօրեղ կը արուի:

Գրելը ինքնահետադարձ ման գործողութիւն մըն է իր ներքին խաղերով՝ յիշողութեան, յաճախանքի եւ հաւատարմութիւններու: Բայց յաճախանքին ու մը կը նսեմացնէ հաւատարմութիւնը յիշեալ «առարկայ»ին նկատմամբ. ասոր իրը հետեւանք է, որ Կարապետ կրնայ ձերբազատուիլ արտաքինէն, գրութիւնէն, եւ տալ խորհրդաւորը, անտարմարանականը: Կը մանէ վիճակները, կը դարձնէ բառերը այնպիսի՝ անսովոր ուղղութեամբ, որ զգացումները կը բռնէ ամենահարազատ, նախնական ձեւերով. բայց այս գիտակցութեան հոսանքին կողքին՝ զիտէ նաեւ, թէ ո՛ր պիտի կանգնեցնէ ջրարգելը. կը յանձնուի՝ յանկարծ կը զսպէ ինքզինք:

Մէկ երկէն միւսը շարունակելութեան մը ստեղծումը կայ. եւ ֆիզիքական չէ այս անցքը, այլ՝ հոգեբանական. փոխարկում մը կայ զիմաստութեանը եւ հոգեվիճակներու: Միմյնեւ «Աղամի գիրքը» ազնուական եւ բաւական վերապահ հեղինակը այլեւս կը փչէ հնամենի ու նոր պատերը, կը խօսի իր տրամին մասին, կու տայ խոսքը իր հոգիին յատակը շնորհ թէ՛ խորաններուն, թէ՛ դուբերուն:

Ձեռով յարափոփոխ, բայց խորքով անփոփոխ կսկիծը՝ որդու թիւեր լայն տեղ կը գտնէ այս գործին մէջ: Կեանքի հաւաքական լարերին թոսին մէջ է ինք եւ տաղնապը լուսաւորեալ գիծի պէս կը թրթռայ: Որեւէ տեղ կեանքը չ'անիծուիր, ոչ ալ անշուշտ շնորհակալութիւն կը յայտնուի կեանքին: Իւրաքանչիւր անհատ աւելի անձնականացուած կղզի մըն է, քան թէ ուրիշ անձնաբու կեանքին հիւստեամբ մէկ թելը: Այսուհանդերձ, կայ հաղորդութեան պահը: Ամէն տիպար, որ կու գայ իր գրչին ծայրը, Կարապենց կ'ստնէ մտքի կամ մարմնի մտերիմ գիրկը՝ զխառնումի մը մէջ, հաւատալով հանդերձ, որ հոգիին աշխարհը անձնականութիւն կը մնայ:

Կը ծանօթանանք տիպարներուն այլազանութեան, որոնք կը շնչեն քով քովի եւ չեն տառապիր իրենց գրացնութեան համար: Բոլոր պատմութեան իրարու հետ յարաբերութեան համաստեղութիւն մը ունին, որուն կեդրոնական մոլորակը՝ հեղինակն է: Մանրամասն հանդէս մըն է մարդոց, արարքներու, արեան զոյներու եւ հասունցող լացի, ուր Կարապենց կը հերկէ իր փորձառութիւններու դաշտին անհերքելի բնագործակութիւնը:

Եւ այս բոլորէն անկախ ու վեր՝ կենդանագիր մըն է, Սփիւռքը վկայող գիր մըն է իր գրականութիւնը:

Գիրքը կը բացուի շնչալի ինձ մի քան պիտի ասէր՝ գրութեամբ: Ինքնարուի մեծախօսութիւն մը, ծայրը զօրաւոր է եւ արական, երբեմն մանուկն է, որ իր մանկութեան շփոթեցաւ, եւ հասուն մարդը, որ իր առաւապանքի մէկ փորանքը միայն ցոյց կու տայ: Կը հաւատայ, որ հայրերու եւ որդիներու միջեւ սերունդէ սերունդ յաւիտենութեան կարթեր կան, հարց մը՝ որ սկսած էր Վաղմի գիրքէն: Կը նկարագրէ իր մանկութեան կախարդական դաւաճումները, հետեւէն հասած փափաքները, կը զգաս տողերու ցանցին մէջ թփրտացող հոգին: Հայր եւ որդի գրոյց կ'ուզեն ունենայ եւ չեն կրնար: Իր կեանքին լուսակէտն է հայրը, բայց անբարբառ երեւոյթներ կան, ուր ամէն մէկը ինքն իր մէջ կը ծուարի, կարծես կը վախճան ճշմարտութեան քաղցրաւորման հետեւանքին, եւ ասկիւ գիծ մըն է, որ կ'երկարի գրեթէ իր բոլոր պատմութեանը խորքին — մտային, ֆիզիքական ներդաշնակութիւն մը կայ, բայց իւրաքանչիւր անհատի ներաշխարհը կղզի մըն է, ուր շատ-շատ պահուան մը այցելութիւնը կայ, ուր ուրիշը չի կրնար բնակիլ:

Վի՛ր օր Արմիկի օրհրդէն շարունակութիւնն է որդու թիւեր, տեսակ մը ռազմադաշտ է Կարապենցի համար մանկութիւնը: Կը կուտի, որ մանկութիւնը փրկէ, եւ գրելը թերեւս այդ արթուն յիշատակներու նշանատախտակը կանգնեցնել է: Վերագարձ՝ սկիզբին. պիտի սեւեռի հայրենի տան, առանց վճռական հէնք մը գտնելու, պիտի անցնի աշխարհէ աշխարհ՝ հոգիին մէջ մանկութեան շուրջը պահած: Իր թեքներին մաս կը կաղճեն Արամեան տպագրութեամբ շարունակութիւնները, որոնք մտքի անկիւնագործներ են. աւելորդ խօսքեր, կեղծ վիճակներ չկան, կայ մանուկի մը իսկական արհաւիրքը:

Երբ մութն ընկաւ պապամ եկաւ: Նրա ղէմքը շատ խոժոռ է: Պապայի ղէմքը միշտ խոժոռ է: Սաթիկը գնացել է, Համբիկը գնացել է, Քնաւիկը գնացել է, Թաթուլը գնացել է, արեւը գնացել է:

Մոռողները կը կուտին:

Եւ ինձ պիտի սպաննէ այս մարդիկը, եւ գիտեմ, որ ինձ պիտի սպաննէ այս մարդիկը, ու գեցի պատը մեղքի ու դուրս փախչել: Ամբողջ կեանքս փախուստ եղաւ: չի՛մի՞ թէ բռնեմ ինձ:

Եւ այնքան ծանր է պատկանելու գիտակցութեան հետ անկարողութիւնը՝ իրերու ընթացքը փոխելու, որ երբ անանուն մանուկի մը նկարը կը տեսնէ՝ կ'ըսէ. «Երանի ես նրա տեղը լինէի»: Կը սկսի կարօտնալ ամէն բանի, կ'ենթադրէ, որ մայրը Վանազէն եկեր է գինք խնամելու, այս բոլորէն կը մնայ

մօրը կաթնախնամ քույրը, որ դինք կը հանգստացնէր եւ որուն բացակայութիւնը՝ ամբողջ կեանքին ընթացքին պիտի հալածէր զինքը:

Հետեւեալ տղերսուն մէջ ամէնէն լաւ ձեւով կը նկարագրէ ինքզինքը, կեանքի անձուկով եւ զարհուրանքով թաթառուն: Իր նախկին գործերուն մէջ չենտուած չէր գէպի տուն վերադարձը, կ'ուզէր հաւատալ, որ գտունը յուշ չուներ, իսկ հիմա կ'ըսէ.

«Լսեց տան հետքը, որ փաստօրէն հետք չէր, այլ՝ տմեաց, որ գալիս էր դարերի խորքից: Հիմա մա երկրի գողորդացն էր լսում, կոացաւ, ակամբը հոգին դրեց եւ զգաց հոգի հոտը»:

Ուշադրութիւն ընենք յաջորդող նախադասութեան, որ իսկութիւնն է այս գրագէտին.

«Այսպէս աւելի յստակ լսեց իր սրտի ձայնը, զարմացաւ, որ ինքն է, իրենից մերս ինքն է, իրենից դուրս մերից ինքն է, մեծակ ու տիրակալն»:

«Ժամագրութիւն» պատմածքին հերոսուհին Անահիտն է, որ ամբողջ կեանքը օտերայի հերոսուհիներով խանդավառուած ըլլալուն՝ առիթ չէր ունեցած սիրելու: Եւ ահա հասած է օրը, որ ոչ թէ երկու շաբաթէ՝ այլ ամբողջ կեանքին ընթացքին կը սպասէր, իր Ծիլատելֆիա ծնած-մեծցած ամուսինին անհրաժեշտ բաներ կ'ըսէ եւ կ'երթայ հանգիպելու Մթրոփոլիթըն օտերայի երգիչ Էնրիկօ Մատրիտին: Այստեղ՝ գործնականի եւ փիլիսոփայականի խառնուրդը՝ «Այդ օրը Թաթառայի գեր չուներ, իր ազատ օրն էր. միասին կը լուսացնեն միմեկեւ առաւօտ: Կեանքը կարն է»:

Նոր ուրիշ գրող մը ուղիղ պիտի երթար իր նիւթին ետեւէն եւ նկարագրէր շարժում-անշարժ գործողութիւնները, կարապետներ ամենազէտ աչքը պիտի նկարագրէր այն բոլորը, որ տեղի կ'ունենան արտաքին աշխարհի (սրճարանի տեսարան) եւ ներքին աշխարհի միջեւ — երբ Անահիտ կանգնած է Մատրիտի ննջարանին մէջ: Եւ ուրեմն հաղորդութեան հետեւանքն ալ պիտի ըլլայ, «ինքը որեւէ հետք պիտի չթողնէ այս սենեակում»:

Անշուշտ, գուցէկեղ բան մը կ'ընէ Անահիտը: Բայց կայ նաեւ հարցին միւս երեսը, որ վստահութեամբ, բուն գրգռւածութեամբ չէր, երբ հեղինակը Անահիտը կը վերադարձնէ տուն: Այս պատմածքը առաջին ընթերցումին անհանգիստ ըրաւ զին եւ յետոյ անդրադարձայ պատճառին: Ինչո՞ւ համար կարապետն, որուն գրիչին տակ բազմաթիւ են այն հայ այրերը, որոնք կը սիրաբանին օտար կիներու հետ, աս հայուհիին, որ իր միակ ախպարն է, որ եկած է օտարին ննջարանը՝ յանկարծ կ'առնէ, կը փախցնէ եւ կը գետնի վրա ընտանիքին մէջ: Հայ գրողի ինչ բնագոյն է, որ մէկ հայու հիւսկ արտօնութիւն չի տար օտարին հետ սիրաբանելու: Անշուշտ, Անահիտին փախուստին պատճառը իր գիտակցումն է, թէ ինք ունի կին մըն է աշխարհահռչակ երգիչին համար, մէկ գրիչուան կեցութիւն, ինչպէս կ'ըսեն ամերիկացիները: Բայց ենթադրականացնում ենք մէկ մակարդակին մէջ յամեցող այդ բարակ թելը՝ հայուհի եւ օտարի՝ զանց չեմ կրնար առնել:

«Աշնանային արձակուրդ», ընտանեկան մթնոլորտը մեծ դեր ունի այս գործին մէջ: Խնդում մը կայ, որ ծածուկ է. թերեւս ենթակաները գիտեն, անոնց համար ալ յստակ չէ: Գրողը կու տայ Էդին եւ Հերային կեանքը, որոնք, միեւնոյն մնացեալ են, աղջիկները մեծցեր-զացեր են, սովորական դարձեր է ամէն բան. եւ աս սովորականին դէմ կիներն ալ կը պայքարի, մարդն ալ, իրենց յատուկ ձեւերով: Կինը արձակուրդի կ'ուզէ երթալ, մարդունը՝ աւելի հոգեկան է: Փափկութիւններու, ընտանի անուշութիւններու ծածկոյթին տակ կը շարժուի միւսը՝ խորհրդաւորը, սեւաթուր կին մը կ'երեւայ ծովափին, տեսիլքի պէս կը յայտնուի եւ տակնուվրայ կ'ընէ Էդի ներաշխարհը: Տենդագին կ'որոնէ

սեւ աթոյր կիներ, ամբարտակ ու բլուր կը բարձրանայ, եւ հակառակ անոր, որ կ'ըսէ կնոջը. «Դու գիտես, որ իմ աշխարհը դու ես, աղջիկներն ու տունն: «Բայց քո աշխարհում ես ինձ բացակայ եմ զգում», — արդարօրէն կը յարէ կինը:

Միջանկեալ պէտք է ըսել, որ այս զրուսեան մէջ արտայայտապաշտ նկարիչի պատմաւոր նման նկարաձգումը է ծովափի եռուզեռը:

Եւ ո՛չ անշուշտ սեւ աթոյր կիներ, ո՛չ իր կիներ, ոչ ալ ինք պիտի գիտնան վերջին պատճառը, երբ յանկարծ էդ վերադառնալ կ'որոշէ արձակուրդի վայրէն:

«Պատուհանը» յայտնի չէ, եւ կարելոր այ չէ, թէ հերոսները հա՞ն են, թէ օտար: Կին ու ամուսին պիտի բաժնուին, կիներ ամանները կը լուայ եւ կնոջ սիրահարին մասին կը խօսին Կարապետի կին տիպարները, մանաւանդ ճշնամամէ անցած կիները շատ մարդկային են: «Գեղ չեմ ատում», — կ'ըսէ կինը ամուսինին, — պարզապէս այլեւս աւերակներէ վրայ նստելու սիրտ չէ մնացել մէջս:

Ամուսինը լուսանկարիչ է, բայց վտանգը պատահած է, որովհետեւ Կարապետի փրկութեան յասարճ հաղորդութիւնը չկայ, «այնքն ու գործիքի ուսուցանակը կորցրել էին հաղորդութիւնը»:

Բայց զրոյր իր աչքերուն մտերմութեան մէջ կ'առնէ ամէն բան: Բաժանումը գանակ չէ, ընտանիք էր ի վերջոյ, «ամէն իր իր պատմութիւնն ունի, մաքսոման ու յոյսի օրերի սեփական կնիքը»: Հիմա նիւթը պակասած է, հոգին պակասած է: Բայց Անտէլ վճռականէն կ'անցնի հոգեկան յառաջատուութեան, որ իրենց հին օրերուն պարտադրած կարեկցանքն է, եւ կը հարցնէ. «Գնո՞ւմ ես, Մարք»:

Մնացեալը: Այս գործը այն հաղուադէպ կտորներէն է, որուն բոլոր սիւները խրած են կեանքի դառնութեան եւ անխուսափելի իրակաճութեան հոգին մէջ:

Բաւական հետաքրքրաւարժ է ՌՊՎ գիտէ ինչ է անցնում—դառնում մարդկանց մերժումը՝ անուն պատմութեան ներքին թաղանթներ, ուր կը յայտնուի Կարապետի իրեն երկախօտութեան եւ ուղիղականէն անհեթեթի անցնելու վարպետ. հատու տեսողութիւն ունի, գիտէ, թէ ի՞նչ կը մտածեն մարդիկ: Սպանութիւն մը պատահած է, մէջտեղը մեռել մը կայ, եւ հենքի անուանով անձ մը, որ խիղճի պէս ցցուած է այս կտորին մէջ, — գոնէ մէկը պէտք ըլլայ, որ արդարութիւնը վերստեղծել փորձէ, եւ հենքին այդ տիպարն է, հակառակ անոր, որ «...նա միշտ վախեցել էր մահուանից, մեռելները որեւէ ուշադրութիւն չէին պատկանում»:

Պէտք է ըսել, թէ իր պատմութեանը կը մատնեն, որ Կարապետի իւրաքանչիւր նիւթի համար մանրամասն ուսումնասիրութիւն կատարած պէտք է ըլլայ: Երբ միւս տիպարները կոմերու արդիւնաբերութեան տուեալներով կը զրադին, հենքի գտնադաշտին մէջ կը ծաւառայ Փիթ Բալդուինի արիւնատարաբախ գլուխը վայրի խոտերի մէջ: Կը խօսին մահուան մասին, «սպանութիւն կամ անձնասպանութիւն հասարակայնութեան գործն է»:

Աստուծոյ մը կայ հոն, ուր ոստիկանութեան կը սպասեն արձանագրութեան համար, հենքի կը վրդովուի. «մահուան մէջ էլ մարդ պիտի սպասէ»:

Եւ մեռելին հանդէպ մեռելայ անտարբերութեան մէջ՝ հենքին յանկարծ կը հարցնէ. «Էդ, ինչո՞ւ սպանեցիր Փիթին»: Ըսել կ'ուզէ հաւանաբար, որ այդ անտարբերութիւնը է կատարեալ սպանութիւնը: Բանային Մարքին կու տայ. «մեզանից իւրաքանչիւրը մի կ'զիւն է, չգիտենք դիմացինի ներաշխարհը, չգիտենք դրդապատճառը, չգիտենք Մարքին, չգիտենք Փիթ Բալդուինին»:

Յաջորդութիւնը հոն է, որ անտարբեր հասարակայնութեան մը մէջէն խիղճը կենդանի է, մեռելը կենդանի է:

«Եղանիկը» գրութեան մէջ կը բաբախէ կարապետներ վայելագոյն ոճը, երբ կը նկարագրէ եղանիկին ամէն մէկ ստուար ըլլալիս, այգիները, խնձորենիի պարտէզները, անտառուտները: Զարի, Զոհի եւ Բարիի, այսինքն՝ որսորդին, եղանիկին եւ պատմողին տիպարները խորհրդանշական են, միաժամանակ իրենց նկարագրային մանրամասնութիւններուն եւ լուռ ու ճշգրտ խոփքներուն նկարագրութեամբ՝ այնքան վաւերական:

Անուշտ, երբոր եղանիկ մը կայ՝ սիրահար մը կայ եւ որսորդ մը: Հեղինակը որսորդին իր հետապնդումին վրայ կը կեդրոնացնէ եղանիկին նկատմամբ ունեցած իր ամբողջ գորովն ու քաղցրութիւնը, սակայն ի՛նչ միջոցի ալ դիմէ՝ տեղի կ'ուենայ անխուսափելի, ու հեղինակը կ'արձակէ ընդՎզու մը սեղանը ու հայհոյալից՝ աշխարհի հասցէին» (նկատի առէ՞ք՝ որսորդի հասցէին չէ, որսորդը սեմպոյ է, աշխարհի մանրապատկերը): «Գիտէի կատարուածը, հագար անգամ, ապրեք էի կատարուածը: չէի ուզեր հաւատալ կատարուածին»:

Եղանիկը ինկած է. «Դեւեր էին մարտնչել միւսի վրայ, անտառը արիւն էր փսխել: Այդ կէտում այլանդակ արահետքը բացուել»:

Կը կարգանք. պատմութիւն վերջացեր է, սպանութիւնը պատահեր է, բայց այնքան որբ ու գեղեցիկ է եղանիկը, բանաստեղծութեան աստղերէն ինչ կամ այնպիսի՝ փլուսնաքնդով օծուած է այս գրութիւնը, որ նորէն պէտք է կարգալ՝ անդրադառնալու համար կացութեան եղբայրականութեան:

«Ընդհանր եղանիկին մէկ ուրիշ կերպարն է. մանուկ աղջնակ մըն է, որ կը զգայ իր ընչէղ դասակարգի պատկանող ծնողներուն միջեւ լարուածութիւնը, եւ անոնց պաշտամունքի առարկան է: Պատմող եւս լաւ դրացիի (Ողորդ կը պտուղեցնէ) եւ լաւ միջնորդի գեր կը խաղայ («Ո՛վ ըսաւ, որ ամուսնական կեանքը վարդափնջքի յարստեւ անկողին է»):

Այստեղ, շնորհիւ պատմողականը գրողը յաճախ կը վերածէ երազային պատմողականի: Լոգիս, ըստ յունական դիցարանութեան, Պրիապոսի սիրոյ առարկան էր, որ անոր հետապնդումէն ազատելու համար նուշուֆար դարձաւ: Ծնողները կը բաժնուին, յանկարծական մահ մը կ'ուենայ Լոգիս, գրողը այլեւս ծնողներուն զգացումներուն խորհուրդը կու տայ՝ զայն կարելի կամ անկարելի յայտն հանելով: «Կորուստը քանդել էր սառցակոյտները եւ քեկերն էին միջից յառնել էր մի ևս յայտնութիւն, որը ամբիշ էր իր քախիծի բոլոր արաններուն»: Դարձեալ իրականի եւ անհեթեթի խառնուրդը՝ սուգը կը միացնէ գիրենք: Կարելի է յայտնել իսկ կառուի, վերստեղծել յոյսը:

«Ո՛վ ռֆի համար եմ զօգանջում գանգերը», ինչպէս միշտ՝ պատմողին գիտողի ուղարկ լարուած պահուած է գտարիւն դրուագներու բոլորակին վրայ: Մէկ կողմը Ռապրիթը եւ Տանր կան, միւս կողմէ՝ Զանիսն ու Ռիթը: Ռապրիթը Զանիսին նախկին ամուսինն է, արդէն անկէ ի վեր քանի մը անգամ ամուսնացած-ամուսնալուծուած, որ «անցած տարիներում մասին կը մտածէ ու տեղ չհասնիր»: Ամէն մարդ տեղ մը յանգեր է, Ռապրիթն է, որ կէտ ճամբան մնացեր է: Բայց Ռապրիթ մտահոգ է Ռիթով, որ դուրս կը մնայ ընկերային համակարգէն՝ իրրեւ միասնական: Ռիթ ճամբորտութեան խօսնակն է, պատասխանատու իր կեանքին եւ ոչ ոքի հաշուետու: Դարձեալ ընտանիքի մը գիրար չճանչնալու թեման է, խաթարելու, գթալու, բաներ ծածկելու, եւ զգացական բախման մէկ պահուն՝ կը հասնի ապտակ մը, ճամբորտութեան չափ զօրաւոր եւ անկրեւի:

Ինչպէս կարապետներ շատ մը գործերուն պարագային, մեքենաները կ'արտայայտեն մարդոց ներաշխարհը, «նիւթին այրումի կատաղի գոռոց ունին, անիւները՝ խուճապահար ճիչեր»:

Վերջապահութեան կիներն է դարձեալ, որ կամուրջ է տարականոնին եւ սովորականին միջեւ, կիներն է կշիռքը պահպանողը:

«Հարազատը», պատմողը շահերտեսլ ազգականի մը ծանր վիճակին փութալով՝ ինքզինք հայկական ծերանոցի մը մէջ կը գտնէ, շահնուրեան աշխարհին պատկանող ընտանի թեմա մը, ուր Կարապետն ողորդականը կը թեթեւցնէ: Կայ պիթիսցի Խեչոն, որուն ճակատը Անդրանիկը համբուրած է, եւ բազմաթիւ տարեց հայեր եւ հայուհիներ, որոնք զինք բժիշկ կը կարծեն: Եազգականուհին՝ Կ'աղբաւ, որ նորեկ բժիշկը փութացնէ իր մահը: աս ամբողջ գիրքին հասունութեան սահմանին մէջ տեղ չի գտներ Հեղինակին հարցը, թէ՛ «Ինչպէ՞ս կարող է մէկը մահ աղերսել»:

Հուսանկարչական մեքենայի պէս կու տայ իրարու հետ աղերս շունչոց խօսքերն ու տրպարները, երկարաբանութիւն չկայ, հիւանդապահուհին կ'ըսէ. «Ճիշտ է, որ մարդիկ մահանում են նախքան մահանալը: Օրինակ: Օրինակ: Օրինակ:»: Եւ անկէ հետո՞ւ Հեղինակին խոկումը կեանքի մասին՝ Գրեցէ կեանքը այն չէ, ինչ կարծում ենք: Գրեցէ եղած-չեղած մի հատ բարեւ է, մի պուտ գուք եւ անվերջ տառապանք: Գրեցէ եւս:

Այդ գրեցէ եւսն է, որ յայտարարել կու տայ իրեն, որ այս՝ իր հարազատն էր մահացող կիներ, երբ իրականութեան մէջ ո՛չ ազգական էր, ո՛չ ալ ծանօթ:

«Երբ Հայաստան զմաս, քարեւ տար Արարատին», պատմողին առաջին սէրը ներգաղթի թուականներուն մեկնած է Հայաստան: Տարիներ ետք կ'երթայ Հեղինակը. «Վարտով զնացի, կարտով վերադարձայ, բան չհասկացայ» կը խոստովանի, գացած է խուճուղ՝ իրեւ ամերիկեան թղթաւիտ: Այսուհանդերձ, Արամայիսին հետ, որ իրենց հանրակառքի վարորդն է, խօսքը մէկ կ'ընեն Արարատին հանդիպելու: Կը յայտարարէ, որ «Արարատը լեռ չէ, այլ՝ հայուն գոյութեան քանալիւն: անանց Արարատի կը փութուի աշխարհը»: Ո՛չ թէ հայը, ո՛չ թէ Սփիւռքը կամ Հայաստանը, այլ՝ աշխարհը:

Հետաքրքրական է, որ հոս գրողը երկու անաւարտ բեւեռներ՝ սիրային եւ ազգային յանդիմանութեան խորհրդանշանները զուգորդած է, Սեդան եւ Արարատը միասին կ'ընթանան, երկուքն ալ հետո՛ւ՝ Սփիւռքի գրողին շրջապատէն:

«Որդի՛ անուցը Մայքլը», Պրանքսի հայ գերդաստանի մը մէջ կ'ապրի՝ Սերաստիան երկու աշխարհներու միջեւ՝ կիրքով ու երգով: Կ'ապրի Կիւրեղի միջոցով, որ մեռած է արդէն: Պատմութեանը կը բացուի Մայքլի այցելուութեամբ՝ իր մեծ հօր շրթմին, դարձեալ հաղորդակցութեան շաղկապ մը կ'ուզէ գտնել շիրմաքարերու արձանագրութիւններուն մէջէն: Կը բացուի անցեալը, ուր մեծ հայրը օղին ճնկելէ ետք Անդրանիկի մասին կ'երգէ. «...ամբողջ աշխարհ մը թափնուած է, որի անանցքը կիւրեղն էր, մի աշխարհ, որ այլեւս չկայ»: Մայքլը նմանութիւն մը կը գտնէ իր մեծ հօր եւ Անդրանիկի միջեւ: Կը վերջիւ չէ ամբողջ գերդաստանին հայկական շուրջապատը եւ կը գիտակցի, որ «Տեղ մը քանդուած է ժամանակը, կոտորակուել է մարդը, բեկուել միտքը, ընկել անհեթեթութեան փոսը»:

Պարբերութիւն մը կայ, ուր հիանալիսին կը շարահիւստին Սփիւռքի խորհրդանշանները, եւ այս հոսքը կ'երկարի մինչեւ հասնի խոսքումի մը, որ իր ճառագայթը կ'ուղղէ պատմութեան ամբողջ երկայնքին:

Ես աւելի ճանաչեցի կիւրեղին, որովհետեւ ժամանակիւն երկուսս էլ անմեղ էինք, մեր երազները իմ երազներն էին, սակայն մեր աստուած-

ները տարբեր էին, խոթող, վիրաւոր աստուածներ: Կիրեղի համար Ամեն-
րիկեան ժամանակաւոր էր, այդ աղբիւրն էր իր տառապանքի ու փրկու-
թեան: Այդ բոլորը եւ չգիտէի, եիմա մասամբ գիտեմ եւ լաւ է, որ ամբող-
ջութիւնը չգիտեմ, այսպէս եւ ինձ խորք պիտի զգայի այս փողոցումս:

«Կիսամեծագարիին», հանդիպում մըն է կենդանական ուժ ունե-
ցող մարդու մը հետ: Այլեւս Կարապետի զղեակները, աղնիւ հողեփեմակները
ինկած են, հողի, քարի, դամի եւ արիւնի համը կայ: Կան իրական տիպարներ
եւ աւելի իրական տիպարներ. Կարապետի ամէնէն յաջողակ տիպարներէն
մէկն է սա Մարտիրոսը. «Մարտիրոսը քերեւս յիսուն տարեկան է, քերեւս
հարիւր, քերեւս հարիւրյիսուն»: Որքան կը նմանի Մարտիրոս այս նկա-
րագրութեան, որ առաջին պարբերութիւններէն մէկուն մէջ կը կարդանք,
«Փոքրորակ տապալիք էր ծառը: Ծառը ընկել էր տան առջեւի բոլորակի
վրայ՝ տակաւին կառչած մնալով հողին»՝ հազար ու մի տեսանելի եւ ան-
տեսանելի արմատներով»:

Ամբողջ պատմութեան ճշգրիտ նկարագրութիւն մըն է, ուրկէ բառ մը,
տող մը եթէ հանուի՝ կը փլի ամբողջութիւնը: Ետագիտ մըն է հանքայինի, կեն-
դանականի, մարդկայնականի, եւ բնագանցականի: Հակառակ անոր, որ հե-
ղինակը կը փորձէ հասնել անոր ներքին յատակին, Մարտիրոսի հողեյատակը
այնքան խորունկ եւ խորտուրտ է:

Հողեկան անդապուծեան եւ սանձուժի ինչպիսի ներդաշնակութեամբ
կու տայ Կարապետն անդաշն, այլանդակ, այլականոն, միայնակ հայու կեր-
պարը, որ Քրէնթիքթի մէկ անկիւնը՝ անհաստատի բան մը կ'ընէ՝ պիտի չը-
սեմ, թէ ինչ կ'ընէ, կարդացէ՛ք՝ կը տեսնէք՝ բան մը՝ որ Սփիւռքի հայու նկա-
րագրութիւնն է. «Որ լինի շարունակութիւն, որ մնայ հետք, որ չասեմ, թէ
մարդը երկունք չի ունեցել, դու նրա թրիքուս ձեռքերին մի նայիր, ոչ էլ
գործարաններում մաշուած անեղունգ մատներին, նրա կէս-ծիծաղ կէս-
սարսափ դէմքի վրայ աստղերի պատմութիւնը կայ, որ միայն Աստուած
(եւ պիտի ըսէի՝ միայն հայ գրողը՝ Վ.Թ.) կարող է նկարել, այն էլ խեղճու-
թեան պահին»:

Եւ կը հասնինք պատմութեան, որ գիրքի խորագրերին ամբողջ բնուր կը
շալկէ՝ «Ամերիկեան շուրջպար»:

Ձանազան պատկերներով ճարտարապետուած, աշխոյժ ոճով կը տրուի
փուլուժը աշխարհներու: Մշակութային համակարգի մը մէջ բազմադիմի
կեանք մը կայ: Իր եռուժի մէկ պահուն՝ յափշտակուած է կեանքը այս տիպար-
ներէն, եւ մէկը հիմա պէտք է տայ պատմութիւնը, ինչո՞ւ, ատկեա աւարտին
պիտի հասկնանք:

Ամբողջութեամբ նոր աշխարհն է այստեղ՝ իր արիւնամած ոտայնեան-
քով: Յափշտակուած է կեանքը՝ Արտեմիսը այլեւս բանաստեղծութիւն չի
գրիր, Քրիֆ Պրանտը Եռամուշի մէջ կը սպաննուի այն պահուն, երբ կ'ուզէ ձի-
միին հետ ամուսնանալ, Սփիւռքի գրողին գիրքերը չեն հրատարակուիլ Հա-
յաստան, կարմրամորթ հեղինակներու ներքին քարտիսագիտութիւն մը կայ,
ամբողջ քաղաքներ՝ որ խլուած են իրենցմէ եւ այստեղ գրութիւնը գուռ, յու-
զաթաթաւ բանաստեղծութիւն է, տրուած միայն քաղաքներու անուններու
ընդմէջէն. չես կրնար շտառապիլ այս մարդոց կորուստին, անփառունակ ներ-
կային համար: Դեռ Տիթրոյիթէն «աստուածապաշտ» ընթերցող մը բառացի-
որէն կը հայհոյէ հեղինակին, անոր «անաստուածութեան» համար: Այն ատեն,
1971ին, միամիտ էի կ'ըսէ, աշխարհը կրնայի փոխել, միամիտ գրող էի, աշ-
խարհն ալ միամիտ էր:

Այլեւս ամենակործան ողորդականն ու երգիծականը միացուցած է իրարու կարապետները: Հիմա Միջուկային աշխարհակործանման պէնքի սպառնալիքն է, որ կանգնած է պայքարով ու արիւնով, լացով ու ուրախութեամբ, զաւերով ու գաշիւններով, աւանդութիւններով ու փորձարկութիւններով, արուեստներով ու մոլորակազնացութիւններով իր կեանքը շարունակող մարդկութեան գլխուն: Այս գրութեան սկիզբէն ի վեր բան մը կը պատահի տարերային թափով, որ մեզի թոյլ չի տար հանգիստ արտով կարգալ, բա՛ն մը՝ որ կ'առնէ՝կը տանի մեր արհաւիրքը, պո՛թը, վարանուժը, մինչեւ որ հեղինակ ու ընթերցող ջարդուփշուր գետին հասնին, եւ գրութիւնը իր վերջը կը պոռայ: «Սեմարի»-օ ես ուզում: Յիշողութիւն չկայ, որ սենարիօ լինի: «Ձի՛» եղել:

«Ձի՛» եղել, ոչինչ չի եղել, մարդը չի եղել, գազան ու անասուն չի եղել, քաշում ու սառնում չի եղել, պատմութիւն ու քաղաքականութիւն չի եղել, մշակույթ չի եղել: Ձի՛ եղել սէր ու տառապանք ու սպասում: Ձի՛ եղել յոյս, չի եղել հաւատ: Եկեղեցի չի եղել, պապ ու տատ չեն եղել, Բէթհովէն չի եղել, դպրոց գնացող մանուկ չի եղել, գործից տուն վերադարձող աշխատատեղ չի եղել, ոչ էլ Գէօրգէ, Դա Վիկտոր կամ Նարեկացի: Ես այրել եմ «Միջուկ»-բարձը, դու էլ այրիր, քանի զեռ ուշ չէ, տակից գլուխ սուտ է, Յովհանն Սեփաստիան չի եղել, ակնոցաւոր ուսուցիչ չի եղել, գիւղական արահետ չի եղել, ոչ էլ քաղաքի ժողովը, «Յիշարայի ամուսնութիւնը», հեծանիւի գիւտը, քառն ու սխտոր չի եղել, «Շահնէլ թիւ 5» չի եղել, չի եղել փարիզ, չի եղել Նիւ Եորք, չի եղել Մոսկուա, չի եղել Քաթմանդու, չի եղել Երզնայի Գոթազ, ոչինչ չի եղել, ոչինչ է եղել, արտիստներ չի եղել յուշ ու յիշատակ, երբեք չի եղել, ոչինչ է եղել, ոչ մի բան չի եղել, բանն էլ չի եղել, երբեք չի եղել, ոչինչ է եղել, պատմութեանից դուրս նայող մայր չի եղել, դաշագի յետիւսից գնացող թափօր չի եղել, թելիվիժըն չի եղել, Աստուած չի եղել, Աստուծոյ ստեղծող չի եղել, իսկ եթէ Աստուած ինքն է իրեն ստեղծող, ապա իրենից բացի ուրիշ բան չի ստեղծել, մեծակ ու շուար, ոչինչ է ստեղծել, չի եղել մէկը, որ վկայէր, թէ եղել է ստեղծագործութիւն, որ եղել է գեփիւտ ու ցօղ, որ եղել է սուրճի բուրմոսն ու ամառային յետմիջօրէ, օ՛հ, ոչինչ է եղել, ոչինչ է մնացել, ոչինչ է եղել, երբեք չի եղել, հուր ու աւեր չի եղել, ստորոտիում 90 չի եղել, համատարած խաւար չի եղել, ոչ էլ մշտնջենական ճմեռ, ոչինչ է եղել, երկրագունդը շարժուփուշուր չի եղել, չի փռշիացել, վկայ չի եղել, միտք չի եղել, յուշ ու յիշատակ չի եղել, ոչ ոք չի եղել, ոչինչ չի եղել, ոչինչ է եղել, երբեք չի եղել, ոչինչ է եղել, երբեք չի եղել, չի եղել:

Գերուստուհում՝ որ կը տեսնէ բանականէն անդին, նոյնիսկ եթէ անյուշ, անյիշատար, չեղեալ երկրագունտ մըն է:

«Ո՛ր մնացին 1925 թուականի ծնունդները», շարժապատկերի արագութեամբ իրարու ազուցուած պատկերներով կը տեղեկացնէ, թէ ի՛նչ անցաւ-դարձաւ 1925ին, ամբողջ աշխարհի տարածքին: Բոլոր տուեալները հաւաքելէ ետք, կը յայտնուի սերունդ մը, որ ոչ մէկ վայրի կը պատկանի: Զեւոյ մը՝ ինքնահետախուզման յենակէտ մըն է իր ծննդեան տարեթիւը, որուն մէջէն կ'անկնկալէ գտնել իր ժամանակը եւ ինքնզինքն, սերունդէն աւելի՝ իր տեղը յարաբերարար ուրիշներու, եւ կը յայտնուի կեդրոնական անհեթեթը:

Ջարմանայի չէ, որ գիրքը կ'աւարտի այս գրութեամբ, կը հասնի մարգու ամէնէն մեծ մտահոգութեան՝ ո՛ր է իր տեղը տիեզերքի մէջ: «Շարքը այն է, որ ամէն մարդ իր հետեւն է թողնում մարդկութեան համայնապատկերում», կ'ըսէ եւ կ'եզրակացնէ, որ ժամանակ է մեր հասկացած տիեզերքի գոյութեան պատմագրութեան: Միայն այսօր հարազատ գրող մը ճշմարիտ բառը

պիտի դարձնէր իր մզմուսանը, բառը պիտի կապէր իր գոյութեան հետ: «Երբ Հայաստան գնաց, քարեւ տար Արարատին՝ մէջ կը ցաւ, որ իր տնկեղծութիւնը անմնացորդ պիտի չկարենայ յայտնուիլ իր տողերուն մէջ. «Կը շարունակուի Թուսը արունքի մէջ, եւ որովհետեւ Թուս է քաղը, Թուսի եւ մեր գոյութեան խաղկանք»:

Փակելէ ետք երկը, Համապարփակ, առողջ բարախում մը կը մնայ մերկ ու մեծ ճշմարտութիւններով իր ճամբան քալող այս գիրքէն, որ Հակոբակ լեզուի շքեղութեան՝ բառերու պարիսպներով պաշտպանուած չէ, կրակ ու հուր կը անդայ:

Պատմութեան եւ, որոնք դրուած են քով քովի, բայց կը վերածուին միակեցութենէ տարբեր անունի մը: Տիպարներու ցրուածութիւնը կը համագործի նոյն Հաւաքական Հանգոյցին՝ աշխարհի մէջ ըլլալու իրողութեամբ. «Միթէ կեանքը կազապա՞ր ունի, որ եւ ունենամ: Եղած-չեղածը մի ակընթաք է, որը մագ երաժշտութեան պէս ո՛չ սկիզբ ունի, ոչ էլ վերջ»:

Կարապետը իր ընտրած հունին, որ անկող Սփիւռքն է, մշտական խորացումով ու ընդլայնումով՝ Սփիւռքի եւ Հայաստանի գրողներուն համար ուսանելի բան մը ըրաւ, խորացուց խօսքի տարողականութիւնը, հաստատելով, որ ամէն բանէ առաջ գրելը արուեստ է: Ինքզինք պատապարելու համար՝ հետոյ չմնաց ճշմարտութիւն կոչուած խարոյկէն: Մեր հիւանդ, ակար օրկաններուն տեղ ձգախէժ օրկաններ չգրաւ, զօրացուց հոգին, մարդու եւ հայու հոգին: Ան շնատու անապատին մէջ հովահար շարժողներու քով, իջաւ իր դուրերուն մէջ եւ այնտեղէն իր խօսքը դուրս քաշեց: Կ'ուզէի յուսալ, որ դուրս չգայ այս — ինչո՞ւ չըսել — եղբայրական լարումէն: Ինք ալ գիտէ, որ եթէ չգրէ՝ պիտի յանգի վատնդի մը. հարցը ա՛յն է, որ կրնա՞յ նուաճուիլ իրականութիւնը, Սփիւռքի՝ իրականութիւնը: Իսկ եթէ կեանքի ողբերգութեան գիմաց մարդը մարդացնող, բիւրեղացնող արարողութիւնը հաղորդութիւնն է, եւ գրելը՝ ողբէն գրահ, ուրեմն՝ իր գրականութիւնը փրկութիւնն է:

Կարապետի հետ տեղի ունեցած Հարցազրոյցներէն մէկուն ընթացքին, ինչպէս նաեւ իր այլ գրութիւններուն մէջ՝ անգլիերէն գրելու, ամերիկեան հասարակութեան մտայնելի գաղափար հարց մը ծագած է: Եւ Հակոբակ՝ ասպարէզով ամերիկեան թերթերու թղթակիցի իր իրողութեան, անոր պատասխանին մէջ լոյսի հետեւեայ ճառագայթը կայ. մօտաւորապէս կը յիշեմ բառերը. «Մի պայծառ օր եկայ այն եզրակացութեան, որ ո՛չ ամերիկեան գրական մութիւնը իմ պէտք ունի, ոչ էլ ես՝ մըրան»:

Ինք լուռ էր մնացեալին նկատմամբ, մնացեալը՝ սրբութիւնն է, սպրում, հայ գրողի կոչում: Բայց կը կարծեմ, որ ամբողջ աշխարհը պէտք ունի իրեն պէս գրաչէտի մը, որ քառասուն տարի գրելէ ետք, իր գիրքը կ'աւարտէ հետեւեայ տողով. «Որքի մի կաթիլ արցունքը անելի կ'արժէ, քան թէ յոյսը մատնադարաններն ու քանգարանները»:

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԵՈՒՍԷՓ ԷԼ-ԽԱԼԻ ՀԵՏ



Քաղաքակրթական գանձ մը,
գեղեցկութիւն մը
կործանարար դէր չի կրնար
ունենալ, այլ կը հարստացնէ
քեզ, կ'ընդարձակէ
ազգային մշակոյթիդ
արտայայտչական
կարելիութիւնները,
սահմանները եւ նոր
բովանդակութիւն կու տայ:

Գրականութեան մէջ
մենքի եւ դուքի հարց
չի կրնար ծագիլ,
միմիայն մէջէ կայ:

ԵՈՒՍԷՓ ԷԼ-ԽԱԼԻ

Լիբանանցի եւ արաբ ժամանակակից գրողներու մէջ, վաստա-
կաշատ բանաստեղծ Նուսեփ Էլ-Խալ կը ճկատուի մէկը այն սպիտակա-
հեր երիտասարդներէն, որոնք քանամեայ երիտասարդի խանդավա-
ռութեամբ կը նստին իրենց գրուցակիցին դիմաց՝ հանդիպումը վերա-
ծելով իսկական վայելքի:

Աւելի քան տասնամեայ մեր բարեկամութեան ընթացքին, գրեթէ
ամէն հանդիպումի, մենք անպաշտօն կերպով գրուցած ենք այս տափա-
րիւն բանաստեղծին հետ՝ բանաստեղծութեան, քարգմանութեան, կեր-
պարուեստի եւ գրական ու յարակից այլ միութեան շուրջ: Եւ ամէն ան-
գամ, երբ մեր խօսակցութիւնը մօտեցած է իր աւարտին, ունեցած ենք
այն զգացումը, թէ գրոյցը նոր է որ պիտի սկսի:

Նախապատրաստական այդ գրոյցներու մթնոլորտէն ծնունդ
առաւ ստորեւ տրուած գրութիւնը, երբէ հանգրուաններով: Առաջին
անգամ շուրջ մէկուկէս ժամ գրուցեցինք 1975ի սկիզբը, Եդեսիի 60ամ-

եակի նախօրեակին, երկրորդ անգամ՝ հինգ տարի հտք, երբ ալ վերջնականապէս հաստատուած էր իր սիրած Ղազիր գիւղը, իսկ վերջինը՝ երկու տարի առաջ, երբ սկսած էր պայքարիլ անգութ քաղցկեղին դէմ:

Հետագայ էջերով տրուած ընդարձակ գրոյցը համադրումն է վերանշեալ համդիպումներուն:

●Նրբ կը փորձենք կազմել դիմագիծը բանաստեղծ նուսէֆ էլ-Խալիմ, դասական ըմբռնումներու եւ նորարարական ձգտումներու ներդաշնակ միահիւսուած պարագան ինքզինք կը պարտադրէ: Մինչդեռ, «Շէրըր» հանդէսի էջերէն ձեր բարձրացած նորարարական հրաւերներէն մեկնելով՝ բնական պիտի ըլլար կարգաւ ծայր աստիճան յանդուգն եւ փորձառական բանաստեղծութիւններ, որոնք կրնային աւելի հարազատ հնչել ձեր արժարժած տեսանկէտներուն:

Դուք եղաք լիբանանցի այն բանաստեղծը, որ ոչ միայն յաջողեցաւ քայլ մը անդին անցնիլ լիբանանցի նոր բանաստեղծութիւն եւ խորհրդապաշտ բանաստեղծներու դասական ըմբռնումներէն, այլեւ արաբական բանաստեղծութիւնը թարմացնելու անոնց նիւթերուն տուիք նոր թափ եւ յեղափոխական շեշտ, երբ 1956ին լոյս ընծայեցիք փնտռութիւններու, երիտասարդական յանդգնութեանց եւ փորձառական ծայրագոյն ախորժակներուն իր էջերը լայն բացող «Շէրըր» հանդէսը, որ, իրաւամբ, եղաւ բանաստեղծական յեղափոխութիւն մը:

Աւելի քան քսան տարիներ անցած են արդէն «Շէրըր»ի լոյս ընծայման թուականէն եւ այսօր ձեր հիմնադրած հանդէսը կը հանդիսանայ անկիւնադարձային թուական մը՝ ե՛ւ լիբանանեան, ե՛ւ արաբական բանաստեղծութեան պատմութեան մէջ: Այսօր, «Շէրըր»ը արժեքափայլին մշակութիւն ունի, եւ գրականագէտներն ու քննադատները երբ կը խօսին արաբական ժամանակակից բանաստեղծութեան այս կամ այն երեւոյթին մասին, յանախ կը գործածեն «Շէրըր»էն առաջ», «Շէրըր»էն հտք», «Շէրըր»ի սերունդը», «Շէրըր»ի յեղափոխիչ հասկացութիւնները» եւ նման սահմանումներ, որովհետեւ ձեր հիմնած հանդէսը յաջողեցաւ խորտակել

արաբական բանաստեղծութեան կազմարները եւ զայն առաջնորդեց դէպի արդիականութիւն, դէպի նորարարութիւն եւ դէպի անծանօթ մակարդակներ:

Նորահաս երիտասարդներ գոյն ու դիմագիծ ստացան ձեր աճունին նոյնացած «Շէրըր»ի էջերուն, զայն օժտեցին երիտասարդական աւիւնով եւ յառաջապահ հանդէսի մը դիմագիծով: Այսօր, անոնք վաւերական անուններ են արդէն: Արաբական արդի բանաստեղծութեան այդ կեդրոնական դէմքերը, ինչպէս՝ Ատմին, Ունսի էլ-Հաժ, Շաուքի Ապի Շաքրա, Մոհամէտ Մադուք, Սաատի Եւսէֆ, Սարֆուս Պուլա, արդիական դիմագիծ եւ նկարագիր ստացան «Շէրըր»ի ստեղծած կենդանի մթնոլորտէն, արդիական հարցերու քննարկման նուիրուած հանդէսին կազմակերպած գրական հանգիպումներէն: Բոլորն ալ, զանազան առիթներով, կ'անդրադառնան այս իրողութեան, եակայն հետաքրքրականը այն է, որ իրենց ստեղծագործական կենսափորձով անոնցմէ ոմանք աւելի հեռունները գացին ձեր նորարարական հրաւերներէն, մինչ զուրքաւականացաք իր գաւակներուն ստեղծագործական խեղճութիւնները հովանաւորող հոր դերով, իսկ ստեղծագործական մակարդակի վրայ՝ անոնց վստահեցաք յառաջապահ բանաստեղծի դիրքերը, մնալով դասականութեան հետ ամուսնալուծուած, բայց տակաւին կենակցող բանաստեղծ մը: Արդեօք կը վախճայի՞ք ստեղծագործական ամբողջական արկածախնդրութիւնէն, թէ դասականութեան հետ բոլոր կամուրջները չհանդիսու ձեր կենդանոցն ունի այլ պատճառներ:

— Առաջին հերթին, առիթը օգտագործելու գնով, պիտի ուզէի շնորհակալութիւն յայտնել ձեզի եւ «Բագին»ի

խմբագրութեան, որ իր էջերը լայն բացաւ արարական եւ լիբանանեան ժամանակակից բանաստեղծութիւնը խոր եւ համապարփակ քննարկման ենթարկած այնքան շահեկան ձեր ուսումնասիրութեան դիմաց: Դիտէք, որ նկարագրով գովասանքներէ եւ ծափերէ ախորժող անձ մը չեմ: Կշտացած եմ թէ՛ ծափերէն եւ թէ՛ «ԵՐ» ըրձի գէժ կազմակերպուած խաչակիրութիւններէն: Սակայն արդար ըլլալու համար պէտք է խոստովանեմ, թէ այն հոգածու եւ եղբայրական վերաբերումը, զոր «ԲԱԳԻՆ» ցուցաբերեց մեր նկատմամբ, ամենաթանկ յուզումները պատճառեց ե՛ւ ինծի, ե՛ւ գրչեղբայրներուս: Որովհետեւ հարցը, իմ համոզումովս, ֆրանսերէնով, անգլերէնով, սպաներէնով հրատարակուելէ ետք նաեւ հայերէնի թարգմանուելու պատիւէն աւելի խոր եւ լուրջ հարց մըն է, քաղաքակրթական կենդանի փոխարարներութեան մը անխուսափելի հարցն է, նոյն շրջանին մէջ զարեւր շարունակ սպրած, առգնապած եւ ստեղծագործած երկու ժողովուրդներու՝ հայ եւ լիբանանցի ժողովուրդին հոգեմտաւոր եղբայրացման, կապերու սերտացման, աշխուժացման հրամայականն է: Ասկէ առաջ, զանազան առիթներով, ես այս նիւթին շուրջ կարծիքներ փոխանակած եմ լիբանանցի հայ արուեստագէտներու հետ, որոնց եւ «Կալըրի Ուան»-ի միջեւ տարիներու մտերմութիւն հաստատուած է: Օրինակ, զանազան առիթներով խօսած եմ Փոյ Կիրակոսեանի, Պերճ Զապիւնի, Ասատուրի, Շարթի եւ ուրիշներու հետ, որոնք բոլորն ալ բաժնած են իմ եւ Ուանի էջ-Հատին մտահոգութիւնները, սակայն մեր դրական գործակցութիւնը եղած է պարագայական, մեզմէ անկախ պատճառներով: Ուրախ եմ, որ յանձին «ԲԱԳԻՆ»-ի եւ անձնապէս մեր հետեւողական ճիգերուն՝ արդէն դրուած են ամուր հիմքեր կենդանի յարաբերութեան մը, որ յաջողելու բոլոր տուեալները ունի:

● Մշակութային կենդանի յարաբերութեան հարցը արդէն տեղ գտած է մեր հարցարանին վրայ: Բայց անոր եւ տեսական այլ միւլթիքու հասանելի առաջ,

կը կարծեմ, հետաքրքրական պիտի ըլլայ լսել ձեզ՝ մեր գրական փորձառութեան եւ մեր արծարծած միւս հարցերուն մասին:

— Մերով: Ձեր հարցադրումները, կրնամ ըսել, ժողովրդային ճշմարտութիւններուն, կարգ մը դատումներու պարագային՝ թափանցեցին խորը ճշմարտութեանց, բայց ոչ միշտ: Զիշդ է, որ Ուանի էջ-Հատի, Իսամ Մահմուդի կամ Սարգսի Պուլստի բանաստեղծութիւններն ու անոնց լեզուն աւելի յանգուզն եւ նոր էին՝ իմ, Աստուրի կամ Նիզար Գապալանի բանաստեղծութիւններուն հետ բաղդատած: Սակայն մի մոռնաք, որ նոյն թերթին շուրջ բոլորուած ըլլալով հանդերձ, տարբեր մտածողութիւններ եւ սերունդներ կը ներկայացնէինք: Անոնք քսանը նոր թեւակոխած ըմբոստներ էին, մինչ մենք՝ արդէն իսկ որոշ կազմաւորում ստացած սերունդ մը, որ սնած էր երկրորդ աշխարհամարտէն առաջ տիրող Նոր Դասակարգութեան մթնոլորտէն եւ ակունքներէն: Մեր առաջին բանաստեղծութիւնները հրատարակած էինք այս մթնոլորտին մէջ՝ իրրեւ անառակ յաջողները արարական դասական բանաստեղծութիւնը նոր պատաստներով հարստացուցած Ամին Նախլի, Զաուրի Մաալուֆի, Իլիաս Ապու Շապաբի, Սալիմ Ազիլ եւ վաւերական այլ բանաստեղծներու: Եւ բնական է, որ այսպիսի կացութեան մը եւ մթնոլորտի մը մէջ, որքան ալ յեղափոխական տրամադրութիւններ ունենաս՝ մշակութային մասցորդները անխուսափելի կը դառնան:

Հետեւաբար, ես բնական կը գտնեմ իմ սերունդիս առաջին բանաստեղծութիւններուն եւ նոյնիսկ անդրանիկ հատորներուն մէջ գոյութիւն ունեցող լեզուական, տաղաչափական, պատկերային եւ այլ յատկանիւններուն մասամբ աւանդական երանգները, որոնցմէ մէկ օրէն միւսը կարելի չէր ձերբազատուիլ, որքան ալ առաջնորդութիւնք նորարարական տեսականներէ: Մնաց որ, իմ ծառայութեամբ դասական բանաստեղծութեան դէմ չէր, անոր կենդանի եւ կենարար յատկանիւններուն դէմ չէր, այլ՝ այն բրածոյ լեզուին, մէկ տողի ամբողջութեան ժամանակամիջակ ըմբռ-

նուսին, քարացած տաղաչափութեան օրէնքներուն եւ կառուցային անկենդան հասկացողութեան գէժ: Այս պարագան յատկօրէն կ'երեւայ նորարարութեան շարժումէն առաջ տիրող մթնոլորտին մէջ իրենց առաջին քերթումները ստորագրած երիտասարդ բանաստեղծներուն՝ իմ, Ատոնիսի, Պատրի Շաքէր Սայեապի, Նազէ Մալախէի, Նիզար Գապպանիի եւ ուրիշներու առաջին հանգրուանի գործերուն մէջ: Տակաւին, նոյնիսկ մեզմէ աւելի երիտասարդ բանաստեղծներու, օրինակ՝ Յուսէպ Ռիֆթայի եւ Շառլէ Ապի Շաքրայի առաջին քերթողագրերուն մէջ, հակառակ անոր, որ անոնք իրենց առաջին քայլերը առին «Նը» ըրձի էջերուն:

Սակայն կը կարծեմ, որ այս դատումը սխալ դուրս պիտի գայ, եթէ փորձենք այս տարազը հազցնել «Նը» ըրձի հետ կապւած եւ անոր հետ զարգացած մեր բանաստեղծութիւններուն: Օրինակ, «Նը» ըրձ հանդէսի էջերուն եւ նոյնիսկ «Նը» ըրձէն բաժնուելէն ետք, Ատոնիս անդադար որոնեց բանաստեղծական նոր յղացքներ, բանաստեղծութիւնը իրեն համար եղաւ անսպասելի եւ յարատեւ փնտրութիւն մը, նորարարութեան անկաշկանդ խաղ մը: Ինչ կը վերաբերի իմ գրականութեան, կը հաստատմ, որ բանաստեղծութիւններէս ոմանք նոր էին եւ իրենց հնչեղութեամբ, եւ լեզուով, եւ պատկերամտածողութեամբ, եւ կառուցով, եւ բովանդակութեամբ: Կարճ խօսքով՝ փորձառական բանաստեղծութիւններ կոչուելու արժանի իրագործումներ են անոնք, որոնց խորհրդանշանները, քաղաքակրթական պարունակը, գեղարուեստական նկարագիրը եւ կառուցային առանձնայատկութիւնները կրնան շատ բան չըսել աւանդական բանաստեղծութիւններէ ախորժող պարզ ընթերցողին:

● Բայց միշտ ալ վերադարձա՞մ ձեր գլխաւոր նպատակակէտին՝ *էլեզուի պարիսպը յաղթահարելու տաղնապահին*: Յսկան թուականներուն, երբ «Շը» ըրձը ժամանակաւոր կերպով դադարեցաւ լոյս տեսնել եւ Առիթիւ 1970ին, երբ վերջին թիւը լոյս ընծայեցիք, երկու

պարագաներուն ալ, ձեր ստորագրած խմբագրականներուն մէջ, քաջայայտ կերպով խոստովանեցա՞մ, որ լեզուի պարիսպը յաղթահարելու ձեր ճիգը ձայնագած է: Այս իրողութիւնը ինչպէ՞ս կը քաջատրե՞ք...

— Էլեզուի պարագան միշտ ալ տաղնապահացած է գիտ, շատ կանուխէն: Տակաւին 1942ին, երբ Պէյրութի Ամերիկեան Համալսարանին (A.U.B.) մէջ փոխտնօրէնութեան ճիւղի ուսանող էի, դասընկերներուս ուղղուած դասախոսութեամբ մը արծարծեցի այս հարցը, որ իմ մնայուն տաղնապահ հանգիստացաւ: Օրին դիտել տուի, որ խօսակցական եւ գրական լեզուի երկուսն էլ լոյս տաղնապահ մըն է, քաղաքակրթական մտահոգիչ կացութիւն մը, որ ցարգ իր լուծումին կը սպասէ: Առաջին օրէն լեզու հասկցած, թէ «Գուրան» լեզուն, այսինքն՝ դասական արարեղէնը ինչ կապ ունի մեր կեանքին հետ: Կը խօսենք բոլորովին տարբեր լեզու մը եւ կը գրենք լեզուով մը, որ լիբանանցիներ եւ գրեթէ բոլոր արաբներուն համար կորսնցուցած է իր այժմէականութիւնը եւ օտար լեզուի մը պէս կը հնչէ: Տակաւին, այն կենդանի լեզուն, զոր կը խօսենք, դարձու հոլովոյթով հասած է այնպիսի՝ պարզութեան մը, այնպիսի՝ ճկունութեան մը, որ հիմնովին տարբեր է դասական արարեղէնէն:

Մանրամասնելու համար նշեմ միայն, որ արաբական աշխարհը կը բաժնուի մշակութային չորս շրջաններու, որոնց խօսակցական լեզուները եթէ ընդունուին՝ կ'ունենանք կենդանի չորս լեզուներ, ասիական երկիրներու խօսակցական գրական լեզու մը, Արաբական թերակղզիի երկիրներու լեզուն, Աֆրիկէի արեւելեան երկիրներու լեզուն եւ արեւմտեան երկիրներու լեզուն:

● Բայց ձեր այս առաջարկը, ինչպէս նաեւ լատիներէն տառերով գրականութիւն մշակելու Սայիտ Ազի ձգտումները քաջածին բուռն ընդդիմութեամբ, որովհետեւ գրական արարեղէնը արաբագրականութեան մէկն է, ազգային առանձնայատկութիւն մը ըլլա-

յով համդերձ՝ մասն մտածողութիւն մը, աշխարհընկալման եղանակ մը, ուրոյն փիլիսոփայութիւն մը, վերջապէս՝ քաղաքակրթական հարստութիւն մը: Ձեր ընդդիմախօսները կը ծանրանան այս կէտերուն վրայ եւ կ'աւելցնեն, որ արաբերէնի պարզացման կողմնակից ըլլալով հանդերձ, կը մերժեն խօսակցական լեզուն իբրեւ գրական լեզու րնդումելու տեսակէտը, որովհետեւ նման քայլ մը ազգ մը տարանջատող վտանգ մը կընայ ըլլալ, որուն պիտի յաջորդէ շրջանային բարբառները որոնք ինչու առաւել վտանգաւոր հանգրուանը: Այս իսկ պատճառով, անոնք կը կառչին իրենց դասական լեզուին՝ իբրեւ անսպառ զանգարան, նորոգման եւ հարստացման մնայուն աղբիւր:

— Հարցը ճիշդ հոս կը կայանայ: Կը լեզուն լեզուի պարզացման հրամայականը, սակայն կը սարսափին բնական լուծումէն: Եթէ խօսակցական լեզուն տանք ապրելու եւ իբրեւ գրաւոր մշակոյթ զարգանալու իր արդար իրաւունքը, կարճ ժամանակ մը անց, ազատութեան եւ կենդանի փորձառութեան մթնոլորտի մէջ՝ անիկա ոչ միայն պիտի բերեղանայ, այլեւ պիտի ստանայ իր բնորոշ, հարազատ եւ իրաւ գիմագիծը, ճիշդ այնպէս՝ ինչպէս եղաւ լատինական աշխարհին մէջ: Ահա թէ ինչու ես անխուսափելի կը նկատեմ պատմական, քաղաքակրթական եւ մշակութային այս հոլովոյթը, որովհետեւ միայն զիբրեւ գրականութեան սահմանում լեզուն բաժնոյ ազդակ մըն է եւ ոչ թէ միացնող յատկանիշ մը:

Եզրակացնեմ եւ հարց տամ. Լոնտոնի մէջ զբող անգլիացի բանաստեղծին եւ պարզ քաղաքացիին խօսած անգլերէնը Շէքսպիրի լեզուն է: Այնպէս հարաւոր կը գործածէք այսօր եւ իբրեւ խօսակցական, եւ իբրեւ գրական լեզու, բունազրօսի՞ կ'ընդունէք: Հին յունարէնը կամ լատինարէնը, որոնցմով հսկայական մշակոյթ ստեղծագործուած է՝ բան մը կ'որսնացուցա՞ն են քաղաքակրթական հարստութեանց գանձարաններ ըլլալու իրենց հանգամանքէն, միայն մասնազէտներու կողմէ գործածուող լեզու դառնալէ ետք: Պատասխանը յստակ է:

Հին յունարէնով գրուած փիլիսոփայական գործերը կը պահեն իրենց արժէքը, ճանթէն՝ նոյնպէս, ինչպէս նաեւ՝ ձեր հանճարեղ Սայաթ-Նովային հրաշալի սրբերգներն ու Գրիգոր Նարեկացիի անկրկնելի պոեմը:

Կարճ ու կտրուկ՝ պատմութեան բնականոն զարգացման ընթացքը կարելի չէ վերադարձնել իր մեկնակետին, որովհետեւ նման փորձ մը մեծ անհնթութիւններ մը պիտի ըլլար: Այդ իսկ պատճառով, հազիւ ծանօթացած ձեզի հետ՝ ուղեցի իմանալ հայերէնի հոլովոյթին մանրամասնութիւնները, գրաբար — աշխարհաբար պայքարին յաջորդած հանգրուանին ուսանելի կողմերը, որովհետեւ պէտք է չիքիչ դասեր քաղենք խօսակցական լեզուն գրականացուցած ժողովուրդներու հարուստ փորձառութիւններէն:

● Քանի որ այսօր մեծաքանակութեամբ անգլիացիներ խօսակցական, ձեր քաղաքացի լեզուն՝ գրականացնելու հարցին, կը կարծեմ, եւս տաքրբական պիտի ըլլար լսել ձեզ այս ուղղութեամբ, անշուշտ ծանրանալով բանաստեղծական ձեր փորձառութեան պատասխաններուն վրայ:

— Ժամանակակից բանաստեղծը անպայման որ կանգ պիտի առնէ կենդանի լեզուի հոլովոյթին դիմաց, ժողովուրդի շուրթերուն վրայ անոր ապրած զարգացման անբունազրօսիկ զարգացումէն ոգտըւելու համար: Այսինքն՝ ան լեզուն պարտի մօտենալ զայն վերականգնացնելու, արտայայտչական նոր աշխուժութեամբ օժտելու դիտանկիւնէն, յարգելով հանդերձ անոր օրէնքները, դասական նկարագիրը եւ առանձնայատկութիւնները: Այլ խօսքով՝ գրական լեզուն խօսակցական լեզուն է՝ զեղազրիտական յստակ հոլովոյթի մը անցնելով բերեղացած: Այդ իսկ պատճառով, ես երբեք իրարմէ չեմ գանազանած այս զոյգ լեզուները եւ մերժելով մերժած եւ լեզուն այն նախնական մակարդակը, որուն կը հանդիպինք բարբառներով զբող աշուղներուն մօտ: Իմ տաղնապս եզած է եւ քաղաք կը մնայ կենդանի, թարմ, նոր արարելներ մը ձգտումը, որովհետեւ արդի գրական

նութիւն մը կարելի է մշակել միայն արդի լեզուով, մեր լեզուով:

Առաջին իսկ օրէն, ես ապրած եմ այս տաղնապար, դասական լեզուն իր կարծրացած, մահացած ծանրութիւններէն թեթեւացելու, բնական կենսունակութեամբ օժտելու տաղնապար: Ահա թէ ինչու ես միշտ ալ արծարծած եմ լեզուի պատնէշը յաղթահարելու հարցը, որովհետեւ ճշմարիտ բանաստեղծը չի կրնար գրել լեզուով մը եւ խօսիլ բոլորովին տարբեր լեզու մը, դասական եւ քարացած լեզուով մը չի կրնար նոր բանաստեղծութիւն մշակել, որովհետեւ նման ճիշդ մը թանգարան եւ պատմութիւն պիտի հոտի, մինչ ստեղծագործ լեզուն անպայման որ պիտի ունենայ ժամանակակից հնչեղութիւն, կենդանութիւն եւ ճկունութիւն:

Դասական արարելէնով իմ առաջին գիրքս լոյս ընծայելէ ետք, 1954ին, ես այս հարցին կարճ ակնարկութիւն մը ըրի իմ երկրորդ հատորիս՝ «Հերոսիկայի» քննադատի առաջին էջին վրայ, տառացիօրէն արժանազանով. «Վերնայ քլլալ, որ Հերոսիկայն բանաստեղծական հին տարագրով արտայայտուած գրական վերջին ստեղծագործութիւնս հանդիսանայ: Անկախի է այլեւս շարունակել կիրարկումը բանաստեղծական նախկին ձեւերուն՝ ամբողջական աւագատ կերպով արտայայտելու եամար հոգիին քոցերը: Ըսել չեմ ուզեր յանգերն ու հատածները, այլ՝ նոյնիմէճ լեզուն»:

Ինչ էր իմ նպատակս. գրել խօսակցական այն լեզուով, զոր նպարտվածաւոր կամ սափրի՛շը կը գործածեն. ո՛չ. գրել բանաստեղծին, այս պարագային՝ իմ գործածած առօրեայ արարելէնովս, այն արդի արարելէնով, զոր կը գործածեն ամենայն բնականութեամբ, առանց պաշտօնականի, եւ որ իր մէջ կ'ամփոփէ դասական լեզուի կենդանի բոլոր առանձնայատկութիւնները: Այդ իսկ պատճառով, ես այդ լեզուն կոչեցի արդի արարելէն:

● «Շը'ըր»-ի երկրորդ հանգրուանին ըրիք մամն փորձ մը, երբ ձեռք բերեցաք լեզուով գրեցիք թատերախաղ մը: Աւելի ուշ, մամուլին մէջ, այդ լեզուով

ստորագրեցիք յօդուածներ եւ քանաստեղծութիւններ: Ո՞ր հասաք: Կրցա՞ք յաղթահարել լեզուին պատմէշը, թէ այդ տաղնապար տակաւին ամէնօրեայ հարց մըն է ձեզի համար:

— Ժիշդ է, եւ ըրի նման փորձեր եւ տակաւին կը տաղնապար լեզուի հարցով, որ ինծի համար ամէնօրեայ մտատանջութիւն մըն է: Յետոյ, պայման չէ, որ մարդ հասնի իր ջատագոված նպատակակէտին, աւելի ճիշդ՝ այս տաղնապար երբեք չի նշանակեր, որ ես անպայման պիտի հասնիմ իմ Հետապնդած նպատակակէտիս: Կարելի որ փորձելն է, յարատեւելը, թէկուզ մտածողութեան մը մայր հիմունքներն ու սկզբունքները բիրեղացնելու ճիշդը՝ ստեղծագործութեան ճամբով, կենդանի փորձառութեամբ, անկեղծութեամբ, հաւատքով եւ ամբողջական նուիրումով: Ո՞վ գիտէ, վաղը կրնան ծնիլ աւելի տաղանդաւոր բանաստեղծներ, որոնք կուզան եւ կը շարունակեն գործը, կը խորացնեն քու բացած ճամբադ:

Այս ծիրէն ներս, փորձեցի բոլոր կարելիութիւններս եւ վերջին տարիներուն լուռ ու անաղձուկ մշակեցի քերթողութիւն մը, որուն խորապէս կը հաւատամ: Արդի արարելէնով իմ գրած այդ բանաստեղծութիւններս եւ լոյս պիտի ընծայեմ մօտերս, ժերկրորդ ծնունդը՝ թելագրական խորագրով: Տայ Աստուած, որ իմ տարիներու ճիշդերս յաջողութեամբ պըսակուին, որովհետեւ նի՛շ յաջողիմ, կը կարծեմ, որ լիբանանեան եւ արաբական գրականութեան հալուոյն պայթեցուցած պիտի ըլլամ իսկական յեղափոխութիւնը, ըս'ւն յեղափոխութիւնը:

● Կ'ըսեմ, թէ դուք խորապէս ազդուած էք Իլիքթի, բայց մա՛նաւանդ էգրա Փառնիտի բանաստեղծական ըմբռնումներէն: Լեզուի այս տաղնապար արեւէ ձեւով կապ ունի՞ այն խոր մտերմութեան հետ, որ ձեզ կը կապէ ամերիկեան եւ անգլիական արդի քանաստեղծութեան: Յետոյ, ձեզ կը կոչեն «Արաբներուն էգրա Փառնիտը», եւ դուք ո՛չ միայն չէք հակադրուիլ այս տեսակետը զարգացնող քննադատներ:

բուժ, այլևս լուր երգանկութեամբ մը զայն կ'ընդունինք իրեն շքանշան: Ճիշդ է...

— Այո, նախ՝ «Արարներուն էզրա Փառնտը» կոչուելու պատիւին մասին: Յետոյ կ'անդրադառնամ միւս ժանրա-մասնութիւններուն: Ամենայն անկեղծութեամբ խոստովանիմ, որ պատիւ է ինծի համար ըլլալ արարներուն էզրա Փառնտը: Սակայն, կը կարծեմ, որ չափազանցութիւն մը կայ այս գատումին մէջ: Ես մզոններով հետեւ եմ թէ՛ Իլերթէն, թէ՛ Փառնտէն, որոնք իմ գլխաւոր կուռքերս են, մա՛նաւանդ Փառնտը: Համալսարանական առաջին տարիներէս ես խոր հիացում տածած եմ այս երկու բանաստեղծներուն նկատմամբ, որոնք անգլիական բանաստեղծութիւնը բարձրացուցին քաղաքակրթական եւ փիլիսոփայական նոր մակարդակներու: Մնաց որ, իրեն փիլիսոփայութեան ուսանող՝ ես խորապէս ուսուցմանս փորձերը այն մտածողներուն, որոնք իրենց բարերար դերը ունեցած էին այս երկու բանաստեղծներուն գրական անհատականութեան կազմաւորման եւ զարգացման գործին մէջ: Պղատոն, Սփինոզա, Պերսոն, զիցարանութեան պատմութիւն, Հին քաղաքակրթութիւններու պատմութիւններ եւ յարակից այլ գործեր, այս բոլորը ամէնօրեայ հետաքրքրութեան աղբիւր եւ օգէին ինծի համար, եւ ես, ինքիս շնչելով գեղարուեստական — քաղաքակրթական այդ թթուածինը՝ սկսնակ բանաստեղծի թոքերս լիացան:

Փաստօրէն, ես շատ բան սորվեցայ Փառնտէն: Նախ սորվեցայ, որ գրականութիւնը քաղաքակրթական նուաճում մըն է, քաղաքակրթական երեւոյթ մը, իսկ բանաստեղծութիւնը՝ իմացական, հոգեկան եւ մշակութային հասունութեան մը արտայայտութիւնը, աշխարհն ու կեանքը դիտելու աշխարհայեացք, քաղաքակրթական կեցածք: Սորվեցեայ նաեւ, որ բանաստեղծութիւնը խտութեան արուեստն է, նուագապոյն բառերով առաւելազոյն մտածումները, հոգեմիճակներն ու ապրումները արտայայտելու արուեստը, պարզութեան եւ յստակութեան արուեստը, ուր լեզուական սոսնճանդէս-

ներն ու հրախաղութիւնները այլեւս տեղ չունին, ուր դորժածուած ամէն մէկ բառ իր նշանակութիւնը պարտի ունենալ, թէ՛ աշուղներու եւ զեղեցիկ, զգիւիչ նկարագրութիւններու ժամանակը անցած է վաղուց եւ ես այլն, եւ այլն:

Եւ այս քմբոսումները ես ջանացի կիրարկել ո՛չ միայն իմ, այլեւ՝ «Երբ» մէջ հրատարակուելիք որեւէ բանաստեղծութեան առիթով: Եւ երկասարգ բանաստեղծները, նոյնիսկ Պատրիկ Շաքէր Սայեապի պէս արտակարգ խճոր ունեցող տաղանդաւոր բանաստեղծ մը ինծի կը վստահէր երկրորդ աչքը ըլլալու պատահականաւ գործը: Եւ ես, ամենայն թախնդրութեամբ, յստակ նոթերով եւ դիտողութիւններով ետ կը յանձնէի իրենց բանաստեղծութիւնները՝ զանոնք վերամշակելու, խտացնելու եւ իրենց վերջնական ձեւին բերելու համար: Աւելին՝ յաճախ անձամբ կը կատարէի մկրատումները, կը ջնջէի կրկնութիւններն ու աւելորդ արտահայտութիւնները եւ, երբեմն, խմբագրական նուագապոյն հպումներով բանաստեղծութիւնները կը ստանային իրենց վերջնական ձեւը: Բայց միշտ այժմե զգուշութեամբ կը մօտենայի բանաստեղծութիւններուն, կը խուսափէի նոյնիսկ մէկ բառ աւելցնել կամ փոխել, որպէսզի անոնք պահպանեն եւ իրենց լեզուամտածողութիւնը, եւ պատկերներու համակարգը եւ մթնոլորտն ու նկարագիրը: Եւ այս իրողութենէն ծնաւ «Արարներուն էզրա Փառնտը» պատմութիւնը:

● Բայց «Երբ» չկրցաւ եիմը դնել բանաստեղծական յստակ դպրոցի մը: Գրական շարժում մը ըլլալով հանդերձ, գրական դպրոց մը չեղաւ, ինչպէս, ըսն՝ տպաւորապաշտութիւնը, գերիապաշտութիւնը, անեքեթի գրականութիւնը եւ այլ դպրոցներ: Ճիշդ է, անիկա յաջողեցաւ ըլլալ արարական բանաստեղծութեան զիմագիծը փոխող, զայն նոր ուղղութիւններով եւ նորարարական փորձերով հարստացնող յանդուգն ծրագիր մը, բայց յաջողեցաւ բարձրանալ դպրոց մը ըլլալու, գրական դպրոց մը հիմնադրելու երկ-

որոգ մակարդակին: Վերջապէս, ճորհորիզոններու բացուելու, հարստամալու, ստեղծագործութեան համար խիստ անհրաժեշտ ազատութեան մրթնալորտը ապահովելու մպատակով ճամբայ ելած հանդէս մը եղաւ անիկա, բայց ոչ երբեք գրական դպրոց մը: Համաժայն էք այս տեսակետին...

— Այո, որովհետեւ մեր նպատակը գրական դպրոց մը հիմնելը չէր: Մենք չէինք կրնար կաշկանդուիլ գրական դպրոցի մը նեղ կաղապարներուն մէջ, որովհետեւ ունէինք աւելի կարեւոր տեսլական մը, — բացուիլ բոլոր հնարաւորութիւններուն, բոլոր շարժումներուն, առաւելագոյն պատուաստներով արաբական քանաստեղծութիւնը հարստացնելու, թարմացնելու համար: Անշուշտ, ասիկա չի նշանակեր, որ անիկա յստակ դիմագիծ չունէր: Ունէր իր անդարձ համոզմունքը, բայց մի մոռնաք, որ թերթը կենդանի, ապրող գոյութիւն մըն էր եւ ինչպէս իր ստանար անոր զօրագիւղ կանգնած անձերուն դիմագիծը: Յետոյ, «Եր»-ը ճամբայարկային քաղաքակրթութեան գանձերը կրող գաղափար եւ անոնցմէ առաւելագոյն չափով հարստանալու համամարդկային ազնիւ ձգտում մըն էր, հաւաքականութեան մը միացեալ եւ ստեղծագործ ճիգը: Հետեւաբար, մենք ջատագովեցինք անխտիր բոլոր մշակութիւններուն բացուելու գաղափարը, առանց որեւէ նախատրամադրութեան եւ ամբողջական շահագրգռութեամբ: Ազատութեան այս մթնոլորտն էր, որ մեզի դէմ հանեց թշնամիներու բանակ մը, որովհետեւ անոնք չէին զգարական աւանդական հրատարակութիւններուն, այլ յեղափոխութեան, նորարարութեան եւ անվախճան փնտրողներու անկաշառ բեմնէր: Վերջապէս, անոր արժէքը կը կայանայ թերթին շուրջ հաւաքուած մեծ թիւով բանաստեղծներու այլազան ստեղծագործութեանց մէջ, բանաստեղծներ՝ որոնք գրական ուղղութեան մը հաւատարիմ մնալով հանդերձ, իւրաքանչիւրը ստեղծագործեց համաձայն իր ներքին ձայնին, ամենայն ազատութեամբ, ամենայն անկեղծութեամբ, երբեմն հակադրուելով նոյնիսկ թերթի հիմնադիրին

գրական համոզումներուն, ոչինչ գիշերով իրենց անհատականութենէն եւ ստեղծագործական կարողականութենէն, ինչ որ «Եր»-ը վերածեց քաղաքակրթական, աշխոյժ եւ կենսախայտ քաղաքական բեմ մը, մեզմէ ետք եկած նոր բանաստեղծներուն համար՝ անսպառ գանձարան մը եւ յաբատեւ փնտրողներու կենդանի աւանդ մը:

● «Եր»-ի փորձառութեան մեկնելով, կարելի է խօսիլ մէկէ աւելի գրական հարցերու մասին: Օրինակ, անձանթ երիտասարդներ փայլեցնելու, գանձել յառաջ մղելու հարցին մասին: Ամերիկեան «Poetry» գոստ բանաստեղծական հանդէսին հոգեզրայրը հանդիսացող «Եր»-ը եւս չկրցաւ խուսափիլ ընտրութիւններու խաղէն: Այսօր յաճախ դիտել կու տան, որ ամերիկեան կարելի է ակամատես ըլլալ բանաստեղծական մէկէ աւելի մակարդակներու, ե՛ւ եզակի, ե՛ւ միջակ, ե՛ւ ձախողած գերբնականներու: Գրական բոլոր հրատարակութիւններն ալ ապրած են եւ ցարդ կ'ապրին այս տագնապը, որ խմբագիրներուն մնայուն հարցերն են: Տեղ տրամադրած էք բազմաթիւ անուններու, որոնց կէտն աւելին արդէն թօթափած է գրականօրէն: Անկասկած, այս պարագան կ'ունենայ ժխտական անդրադարձ, անուգ՝ զակիօրէն մպաստելով գրական արժեւափերու վերիվայրումին, առաջացնելով բանաստեղծական իրարանցում մը: Միմյոյեռ, յառաջադաւ հրատարակութեան մը մպատակակետն ու առաջելութիւնը գրական մթնոլորտի բիրեղացումն է, գրական ճաշակի եւ առողջ հասկացողութեան մը հասունացումն ու ամրապնդումը: Կը կարծենք, որ հետաքրքրական տեղեկութիւններ կրնաք հաղորդել հայ ընթերցողին, ներկայացնելով իբրեւ խմբագիր ձեր ապրած փորձառութիւնը:

— Գիտէ՞ք, որ զրգուցիք իմ մեծագոյն ցաւերէս մէկը: Յաւ մը, որմէ միշտ ալ փորձած ենք ազատագրուիլ, սակայն, ըստ երեւոյթին, նոր անուններու պարա-

զան պիտի շարունակէ մնալ զրական հանդէսներուն Աքիլլէսի կրունկը:

Ծիշդ է, որ «Եր'ըր» մէջ լոյս տեսած բոլոր անունները այսօր վաւերական դէմքեր չեն եւ ասիկա, կը կարծեմ, բնական երեւոյթ մըն է: Բացէք նոյնիսկ ամէնէն խառնապահանջ հրատարակութիւններուն հաւաքածոները եւ դուք պիտի համոզուիք, որ ասիկա անխուսափելի իրականութիւն մըն է: Որեւէ թերթ, որ յայտնագործութեան կատարելու ազնիւ ձգտումը ունի, անխուսափելիօրէն պիտի իյնայ մեր մատնանշած ծուղակին մէջ: Ինչն է պարագան նոյնիսկ անաղապահ թերթներուն, որոնք իրենց էջերուն կը հրատարակեն միայն հեղինակութիւն չարժան վաւերական գործերու գործեր: Որովհետեւ բնական է, որ անոնք ստորագրեն նաեւ միջակ կամ, ինչու չէ, ծախողած գործեր: Վերջապէս, միշտ չէ, որ արժէքաւոր գործեր կամ գլուխ-գործոցներ կը ծնին: Սակայն հոս կը ծագի խառնապահանջութեան հարցը, այսինքն՝ իրաւ, բարախուս եւ նորութիւն բերող ստեղծագործութիւններ ընտրելու հարցը, որ մեր հիմնական մտահոգութիւններէն մէկն էր, Լթէ ոչ առաջնահերթ մտահոգութիւնը:

● Լաւ, ինչպէ՞ս կը կատարէիք մեր քննարկութիւնները:

— Ամենայն ազատութեամբ եւ անախապաշար ոգիով: Հրատարակութեան համար զրկուած որեւէ բանաստեղծութիւն կարգալէ ետք, մենք հարց կու տայինք. «Անկե՞ղծ է, իրա՞ն է, ի՞նչ նորութիւն կը բերէ», եւ ըստ այնմ կ'առնէինք հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը: Յետոյ, մի մոռնաք, որ ես բանաստեղծութեան արհեստին տիրապետած հին վարպետ մըն եմ, կրնաք ըսել՝ մասնագէտ մը: Կը կարգաւ բանաստեղծի մը գրութիւնը եւ կրնամ ըսել, թէ զրական ի՞նչ գրամագլուխ, ի՞նչ մտահոգութիւն եւ ի՞նչ տեսլական ունի: Եւ ընկերներս մեծապէս կը վստահին իմ գրական հոստպոստութեան, որ երբեմն... նաեւ խաբած է զիս: Անսպասելի պատկեր մը, հոգեմիճակ մը, մշակելու ինքնատիպ մօտեցում մը կամ ոչ-սովորական կառոյց մը յաճախ

քեզի կը թելադրեն, թէ գործ ունիս զարգանալու մէկէ աւելի տուեալներ ունեցող նորեկի մը հետ, եւ կը խանգապանաւ: Բայց եկուք տես, որ ան չի զարգանար, տեղքայլ կ'ընէ եւ երբեմն նոյնիսկ նահանջ կ'արձանագրէ: Երբ խմբագիրը հաստատէ, որ խոստմալից նորեկը կը գտնուի նման կացութեան մը մէջ՝ պէտք է դիրք ճշդէ, ցուցմունքներ ընէ, պահանջէ բանաստեղծութեան վերամշակումը, եւ ապա՝ երբ տեսնէ, որ իր բոլոր ճիշդը ապարդիւն դուրս եկած են, պարտաւոր է կեցուածք ճշդել եւ մերժել զանոնք: Եղած են նաեւ պարագաներ, որ ինծի պարտադրած են նոյնիսկ վերամշակուած բանաստեղծութիւնները մերժելու եւ աչխատակակից մը կորսնցնելու լուծումը:

Եւ առաւելագոյն չափով այս մտանգէն խուսափելու համար, երբ նոր անունի մը տեղ կը բանայինք, մենք անոր կը յատկացնէինք տասը, քսան էջ, հրատարակելով բանաստեղծութիւններու շարք մը: Այսինքն՝ մեր այս կեցուածքով ոչ միայն կը քաջալերէինք այս նոր անունը, այլեւ ըսել կ'ուզէինք, որ այս բանաստեղծը արժէք է եւ զարգանալու բոլոր տուեալները ունի: Եւ երբ ան կու տար փաստը մեր այս համոզումին, երբ իրերայնորդ անակրն-կալներով կ'այլեր զարգացման իսկական հորիզոնի մը, հակառակ մեր նիւթական սահմանափակ կարողութիւններուն, յաճախ մեր սեփական չքաւոր զրպաններէն հաւաքուած գումարով կը հրատարակէինք անոր առաջին քերթողագիրքը՝ իրրեւ «Եր'ըր» մատենաշարի հրատարակութիւն, ինչ որ իր իսկական պատկուծը կը հանդիսանար:

Նշեմ նաեւ հետաքրքրական այլ օրինակ մը, որ կրնայ ուսանելի փորձառութիւն մը ըլլալ: Երբ որոշեցինք «Եր'ըր»-ը հրատարակել, կապի մէջ մտանք նորարարական որոշ ներդրումներ կատարած բանաստեղծներու հետ եւ մամուլին մէջ հրատարակեցինք ծանուցում մը, որուն իրրեւ պատասխան ստացանք հարիւրէ աւելի պատասխաններ՝ իրանանէն, Սուրիայէն, Իրաքէն եւ արաբական այլ երկրներէ: Այսչափով էինք զասական բանաստեղծի պատուանդանը արդարօրէն նուաճած վաւերական բանաստեղծ-

ներու, օրինակ, Պատառի ժապալի պէս յարգելի բանաստեղծի մը աշխատակցութիւնը: Ի՞նչ ըրինք սակայն: Թիւր բացինք իրաքցի անծանօթ երիտասարդի մը՝ Սաստի Եռակֆի մէկ ուշագրաւ բանաստեղծութեամբ, որմէ ետք միայն տեղ տրամադրեցինք Պատառի ժապալի դասական քերթուածին: Այսպէս վարուեցանք, բակու համար դասականներուն: «Այս է մեր բանաստեղծութեան ապագան»:

● Եւ հետագային, նման կեցածքներուն պատճառով «հերետիկոսներ», «ապագայամալ», «Արեւմտի գործակալներ», «աշակոյմեան խփանաւարներ», սիռնականութեամբ ստրուկներ» կոչուած բանաստեղծները շարունակեցին հրատարակել Սաստի Եռակֆի եւ իր նմաններուն բանաստեղծութիւնները:

— Անշուշտ եւ առանց աջ ու ձախ նշելու: Մեր առաջին թիւի կողքին վրայ, իրրեւ խորհրդապատկեր, մենք լոյս ընծայած էինք առաջատարի մը գծանկարը, որով ըսել կ'ուզէինք, որ մենք աշխարհին հետեւ ենք, ամբողջ աշխարհին, փետրուտուք մեր առաջելութիւնն է եւ չենք ընդունիր մշակութային ոչ մէկ կաշկանդում: Մենք վճռած էինք դուրս գալ գրական լծացումէն եւ առանց որեւէ բարդոյթի ուսանիլ ուրիշներու փորձառութիւններէն, ճիշդ այնպէս՝ ինչպէս ըրաւ իսլամութիւնը իր առաջին հանգրուաններուն, երբ թարգմանեցին յունական իմաստասիրութեան գանձերը, գրական գանձարաններ, իմացական, կենցաղաբարոյական, գրականագիտական գործեր, բժշկական, դիտական, թուարանական եւ նոյնիսկ աստղագիտական գանձերը, երբ իւրացուցին գանոնք եւ իւրացնելով հարստացան, իսկ երբ ծուլացաւ իրենց բացուելու ընդունակութիւնը՝ մեռան, պարզապէս մեռան, որովհետեւ հազար տարի է վեր ոչինչ կրցան տալ, այլ դարձան գերին երեւոյթներու, հռետորական հռոտմարանութիւններու եւ սնամէջ ու անիմաստ այս լեզուական արապեսութիւն...

● Յարգելով հանդերձ ձեր տեսակետը, չենք կրնար անտես թողուլ նաեւ այն կարծիքները, որոնք արաբական ֆաղափակքութեամբ անկումը կը վերագրեն չափազանցուած բացումի ֆաղափականութեամբ հետեւեմով կատարուած ներթափանցումներուն, այսինքն՝ արաբներուն օտարացումին: Օրինակ, մենք եւս ապրած ենք պատմական նման փորձառութիւն մը, Քրիստոսէ առաջ, Տիգրան Մեծ աշխարհակալին օրով, երբ իր մայրաքաղաքը խեղդեց օտար արուեստագէտներով, որոնք կազմեցին օտարներէ բաղկացած վերնախաւ մը, անհաղորդ՝ հայկական պետութեամբ ազգային տեսականներուն, տեղիներուն, եւ երբ փչեց առաջին ֆամին, այդ նոյն օտարներուն օժանդակութեամբ կատարուեցաւ մայրաքաղաքին գրաւումը: Ումեմ նոյնպիսի դեր մը կը վերագրեն յոյն, ասորի, պարսիկ, հրեայ եւ այլ ժողովուրդներուն այն բոլոր արուեստագէտներուն, մտաւորականներուն ու գիտնականներուն, որոնք արաբական կայսրութեան եւ անոր մայրաքաղաքի վերնախաւին, առանձնաշնորհեալներու դասուն կը պատկանէին: Ձեմք ուզեր ֆնմարկել այս հարցը, քայց կ'արժէ խօսիլ թարգմանութեան, օտար գրականութիւններու իւրացման գծով ձեր ապրած փորձառութեան շուրջ: Կը հանձնէ՞ք այս մասին խօսիլ:

— Սիրով: Բայց նախ կ'ուզեմ ճշգրտմը ընել, ըսելու համար, թէ այն՝ ինչ որ այսօր իրրեւ արաբական մշակոյթ եւ քաղաքակրթութիւն կը ներկայացուի, իր յարգելի մէկ համեմատութեամբ կը պարտինք իսլամութիւնը ընդունած կամ նոյնիսկ չիսլամացած այն օտար գրողներուն, իմաստասէրներուն, արուեստագէտներուն, որոնք արաբներէն իւրացնելէ ետք, ստեղծագործեցին արաբերէնով, արաբական գրականութեան դիմաց բանալով նոր հորիզոններ, նոր աշխարհահայեացքներ, որոնք հեղինակներուն ազգային ժառանգութեանց, ազգային քաղաքակրթութեանց բարենպաստ արձանագանդներն էին: Նոյնիսկ արաբերէ-

նի թարգմանուած գործերը այս աւերն-
չութեամբ մեծապէս նպաստեցին արա-
բական մշակոյթի յատկացման եւ զար-
գացման:

Եւ չեմ բաժներ իսլամ ուղղափառ
պատմաբաններուն, զբականազէտնե-
րուն եւ արուեստի տեսարաններուն ձեր
նշած վարկածը, որովհետեւ կը հաւա-
տամ, որ քաղաքակրթական գանձ մը, դե-
ղեցկութիւն մը կործանարար դեր չի
կրնար ունենալ, այլ կը հարստացնէ քեզ,
կ'ընդարձակէ ազգային մշակոյթիդ ար-
տայայտչական կարելիութիւնները, սահ-
մանները, նոր բովանդակութիւն կու
տայ, պայմանաւ սակայն, որ կատարած
ընտրութիւնդ տեղին եւ ճիշդ ըլլայ, զայն
իւրացնես, ներծծես օգի նման, որովհե-
տեւ գրականութեան մէջ մենքի եւ զուքի
հարց չի կրնար ծագիլ, միմիայն մե'նք
կայ:

● Ճիշդ է, քարգմանական գրակա-
նութիւնը «Շը'ըր»ի հիմնական մտա-
նադրութիւններէն մէկը եղաւ: Դուք
քարգմանեցիք միբազային ժամանա-
կակից գրականութեան բոլոր հոսանք-
ները ներկայացնող արդի բանաստեղծ-
ներ, լորրիամոնէն մինչեւ Փառնոտ,
Ռիֆէէն մինչեւ Լարֆին, Լարֆայէն մին-
չեւ Շար, Պըթոնէն մինչեւ գերման,
իտալացի, ամերիկացի եւ օտար այլ
բանաստեղծներ, ինչ որ «Շը'ըր»ի
տուաւ արեւմտեան դիմագիծ: «Թարգ-
մանութիւն», «Բանաստեղծութեան եւ
բանաստեղծներու մասին» մնայուն բա-
ժինները միեւնոյն, ար անգամստանեն
ապագային անորոշակներով, արարա-
կան բանաստեղծութեան ազգային դի-
մագիծը խեղաթիւրելու յանգամնով եւ
մասամբ նորին: Այսօր, երբ «Շը'ըր»ը
դադրած է արդէն ու դուք անք քարգ-
մանական աշխատանքները որոշ եե-
ռաւորութենէ մը կը դիտէք, ի՞նչ եզրա-
կացութիւններու կը յանգիք...

— Ինչպէս քիչ առաջ կ'ըսէի, գրակա-
նութեան մէջ միմիայն մենք կայ: Մարդ-
կային ողջ քաղաքակրթութիւնը սեփա-
կանութիւնդ է, օտար չի կրնար ըլլալ
ստեղծագործ մարդուն, ինչպէս օտար չեն
կրնար ըլլալ գիտութիւնն ու արուեստը:

Մշակոյթներու փոխազդեցութիւններն ու
փոխարարներութիւնները հին են՝ մարդ-
կութեան պատմութեան չափ, եւ վա՛յ
այն ժողովուրդին եւ մշակոյթին, որ չի
յարարերիւր այլ ժողովուրդներու մշա-
կոյթներուն հետ: Եւրոպացիք Ձիւնաստան
եւ Ափրիկէ կ'երթան, ինչո՞ւ: Անոնցմէ
նոր մտահորդոններ, աշխարհընկալման
նոր եղանակներ եւ արտայայտչական նոր
կարելիութիւններ ու մեներ քաղելու հա-
մար: Եւ սահկա պատուարիւր նախան-
ձախնդրութիւն մըն է, ամչնալու ոչ մէկ
պատճառ կայ նոյնիսկ նախամարդու պէս
ապրող Ափրիկէի այս կամ այն ցեղա-
խումբին թէկուզ նախնական արուեստ-
ներէն օգտուելու նախանձախնդրու-
թեանց մէջ: Արարներու մարդաբնէն ըսաւ.
«Պանանցեցէ գիտութիւնը թէկուզ Ձի-
նաստանէն»: Այսօր ի՞նչ կը տեսնենք.
կարդ մը արարներ կ'ըսեն. «Մշակու-
թային գետնի վրայ կը յարարերիւր Ռուս-
իոյ հետ, բայց ոչ՝ Ամերիկայի», ուրիշներ՝
«կը յարարերիւր Արեւմտեքի հետ, բայց
ոչ՝ Ձիւնաստանի» կամ՝ «Երբորդ Աշխար-
հի հետ, բայց ոչ՝ Եւրոպայի»: Այս մտա-
ժողութիւնը անկում կը նշանակէ, մահ
կ'ենթադրէ, եւ ճիշդ այս նեղմտութիւնն
էր, որ մեզ ամբաստանեց Եւրոպայէն եւ
Ամերիկայէն գրական ճարտարները նե-
րածելու յանցանքով, անկումային տրա-
մադրութիւններով եւ ազդուբացու-
թեամբ:

Դուք շատ լաւ դիտէք, որ անք նշած
անունները մեր թարգմանած բանաս-
տեղծներուն մէկ աննշան համեմատու-
թիւնը կը ներկայացնեն: Այո, ամէն թիւի
մէջ լայն տեղ գրաւած թարգմանական
բաժինները դիտումնաւոր կերպով
ճշդուած են, հսկայական բաց մը զոցելու
համար, որովհետեւ մեզի պարտադրուած
էր իւրացնել, մերը ընել գեղագիտական,
քննադատական, գրականագիտական
հսկայական հարստութիւն մը: Արարա-
կան մշակոյթին հաշուոյն բաց մը զոցե-
լու, զարեւ շարունակ լքուած կամ մասի
ծայրով կատարուած աշխատանք մը
զլուխ հանելու տենդադին ճիշդ մը,
անզսպելի ազնուապ մը գրաւած էր մեր
էութիւնը: Եւ մենք նողարմ չէինք կրնար
կատարել:

Հարցումին հարցումով պատասխանեմ. «Ինչո՞ւ համար արարները պիտի փորձեն օգտուիլ — եւ ատիկա իրենց արդար իրաւունքն է — արգիւթ չկոտորենէն, արգիւ ճարտարապետութենէն, ճարտարաւեստէն եւ գիտական նորագոյն գիւտերէն ու պիտի մերժեն բացուիլ օտար մշակոյթներու: Ինքնաշարժ, օդանաւ, բազմալարկ շէնքերը, էլեկտրոնիկ կազմածներն ու գերարգիւկան գործիքները մի՞թէ արեւմտեան չեն: Երբ արարական կայսրութիւնը իր փառքի օրերը կ'ապրէր, յայնքէն, պարսիկներէն, հնդկներէն, հայերէն եւ միւս բոլոր ժողովուրդներէն, որոնց հետ չփուռ ունեցան, առին ամէ՛ն բան, մշակութային ամէ՛ն արժէք, շատե՛կա կ'ուզեմ, իսկ այդ մէկը չեմ բնդու յիշ» չըսին: Ուրեմն, այն բոլոր վարկածներն ու իմացական ճիշդերը, որոնք կը փորձեն փառսել, թէ օփերան, Պաղ միւզիէր, գերիւրապատմութիւնը արարներուն խորթ կը հնչեն, հարազատ չեն, անոնց ազգային գեղարուեստական ընկալչութեան չեն համապատասխաներ՝ պարզապէս վիժած, ձախողած եւ անհիմն մտածումներ են: Որովհետեւ պէտք չէ մոռնանք, որ հարազատութիւնը նաեւ վարժութեամբ ձեռք կը ձգուի: Որինակ, մտիկ ընելով, ընելով եւ ընելով միայն կ'ընտելանա նուազամբային յօրինումներուն, օփերէթներուն, եթէ ոչ այսօր՝ վաղը անպայման, հաւանաբար քսան տարի ետք, ճիշդ այն-

պէս՝ ինչպէս որ առաջին անգամ վախով օգտնուէր բարձրանա, երկրորդ անգամ՝ նոյնպէս, երրորդին՝ քիչ մը նուազ եւ տարիներ ետք է միայն, որ օգտնուէր բարձրանալը վարժութիւն կը դառնայ, առաւել կանուխ երես լուալու պէս բնագոյնին գործողութիւն մը: Այս վարժութիւնն էր, փորձելու, բացուելու հետաքրքրասիրութիւնն էր, որ շուրջ տասը դարէ ի վեր կանգ առած էր արարական մշակոյթին եւ մտածողութեան մէջ:

●Այսինքն՝ ազատութեան, քաղաքացիական ըմբռնումը:

— Այո՛, ազատութեան, իմացական ըմբռնութեան հրաշալի աւիւր: «Ե՛ւրընքի շուրջ հաւաքուած երիտասարդները նման բարդոյթներէ չէին տառապէր, եւ ասոր համար է, որ մեր հանգանակին առաջին կէտը ազատութիւնն էր: Այսինքն՝ բանաստեղծը ամբողջականօրէն ազատ, անհանդարտ եւ ստեղծագործ մարդն է, որ ինք կը ճշդէ, իր փորձառութեամբ կը նուիրականացնէ իր բանաստեղծութեան օրէնքներն ու գեղարուեստական առանձնայատկութիւնները, եւ ոչ թէ կ'ենթարկուի դարեր շարունակ սրբութիւն որոյ համարուած գրական օրէնքներու: Ուրեմն, ազատութիւնը հիմնական է, անփոխարինելի է, ստեղծագործութեան առաջին նախապայմանն է:

(Վերջը յաջորդեմ)

Հարցազրոյցը վարեց՝
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



**ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ՝
«ՀԱՅՐԵՆԻՔ»
ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ**



«Հայրենիք» հաստատության հանրային ծառայությանը նոր թափ տալու նպատակով, Գրիգոր Զիլինկիրյան (Զիլեան) «Հայրենիք»-ի նույնիսկ է Metalore Resources-ի 10.000 բաժնեթուղթեր, որոնց ներկայիս արժեքը կը հասնի 300.000 քանատական տուրքի:

«Հայրենիք» օրաթերթի առաժմանն էլ, անոր համրով հայ մշակույթին առաքման նպատակով, հաստատությունը որոշած է իր նոր կեդրոնին շրջափակ շարժի սրահը կույնը «Գրիգոր Զիլինկիրյան սրահ»:

«Հայրենիք» օրաթերթին մէջ լոյս տեսած յօդուածէ մը կ'իմանանք, թէ շնորհիւ հաստատոր բնակիչներու, բարեկամներու, համակիրներու եւ բնակիչներու անմիջապէս օժանդակութեան՝ հաստատութիւնը պիտի կարենայ իրականացնել իր առաջադրանք-նպատակը, որուն կէտերն են:

«ա) Բարեկամի զոյգ հրատարակութեանց խմբագրական, էլադրական եւ գրաշարական մերկայ վիճակները:

«բ) Թափ տալ գիրքերու հրատարակութեանց եւ վերահրատարակութեանց:

«գ) Ընդարձակել «Հայրենիք»-ի գրատունը:

«դ) Հաստատել «Հայրենիք»-ի գիրքի ակումբ»:

«ե) «Հայրենիք»-ի գրադարանը օժտել արդիական ցուցադրութեամբ եւ գայն դնել ուսումնասիրողներու տրամադրութեան տակ:

«զ) Նոր համ յորրորդ յարկի «Գ. Զիլինկիրյան» սրահին մէջ կազմակերպել դաստիարակչական բնոյթ ունեցող գիտաժողովներ եւ դասախօսութիւններ:

ՀՈՒՆԳԱՐ ՀԱՅԱԳԻՏԸ

Հունգար Պալ Սալմաշ քառորդ դար առաջ գացած է Երևան, զին Ալիսարի պատմութեան վերաբերեալ իր գիտելիքները հարստացնելու համար Երևանի պետական համալսարանին մէջ, հանգուցեալ փրոֆ. Ալեոս Արարածեանի ղեկավարութեամբ:

Մինչև Երևան երթալը, Սալմաշ երեքուկէս տարի գրադար ստիպած է Պուտափէշտ Լորան Էտվէշ անուն համալսարանին մէջ, հայագէտ փրոֆ. Էտման Ենեցի ղեկավարութեամբ:

«Նկայ Երևան, հայերէն եւ ռուսերէն սովորեցի, աւարտեալ աշտպանելու համար ճիւրիբ հաւաքեցի՝ «Հայ-հունգարական յարաբերութիւնները Արտաւազ Քի ժամանակ» քննարկն շուրջը: Պուտափէշտ վերադարձայ գիտելիքներ լաւ պաշարով եւ հինգ հարիւր էփիլիքով գրեկով»:

Պալ Սալմաշ մեծ վատտակ ունի հայ գրականութիւնը հունգարացիներուն նախնական գործին մէջ: Թարգմանած է Դերենիկ Դեմիրճեանի «Քաջ Նազարը», Արամ Ալեոս Պապայեանի «Աշխարհն, այդ, շուր է եկել» թատերգութիւնը, Թումանեանի «Գիճորը», Հրանդ Մաթևոսեանի, Աղասի Այվազեանի փոփոխները, Ինչպէս նաեւ շարք մը գիրք-լածներ՝ Նարեկացիէն մինչև Պարոյր Սեւակ:

Անոր Թարգմանութեամբ հունգարերէնով լոյս տեսած են Ռահմեյանի եւ Պ. Սեւակի «Տողովանուները», իսկ շուտով լոյս պիտի տեսնէ նաեւ Յ. Թումանեանի հաւաքածոն:

**Ա. Գ. ԿՐԵՓԻՆ
ՊԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԷ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ**



Միջազգային Հետազոտութեան և Փոխանակման Վարչութիւնը (ՄՀՓՎ) յատկացում էր ընդունած է Գլխավորի Նախնադային Համալսարանի տեղի. Յոն Ա. Գ. Կրեփինի, որպէսզի պատրաստէ մանրամասն ցանկագրումը Մաշտոցի ունեւան մասնաւարանի մատենաներուն մէջ գտնուող երկրիցու հայերէն քառարաններուն: Տեղի. Կրեփին պիտի բնակէ Երևան, 1987ի աշունէն սկսեալ:

Միջին դարերուն, հայերը ժրջան քառարաններ կազմողներ էին՝ յունարէնէ, եբրայերէնէ, արաբերէնէ, պարսկերէնէ և թուրքերէնէ հայերէնի թարգմանելով համապատասխան գործեր: Մատենադարանի գրացուցակին մէջ կան աւելի քան 400 քառարաններ. ասոնք Արեւմտեացի լիզուարաններուն թէ՛ հայերուն կողմէ ուսումնասիրութեան առարկայ դարձած են, տառնամակներէ ի վեր:

Տեղի. Կրեփին լիզուարանութեան դասախոս է Գլխավորի Համալսարանին մէջ (Մ. Նախնադներ): Ան դասական հայերէնի իր գիտութիւնը ստացած է տեղի. Աւետիս Սանճեանէն:

**ՎԵՆԵՏԻԿ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ
«ԶՈՒԳՈՐԴՆԵՐ»**

Յառաջիկայ Սեպտեմբերին, Խալիպոյ Վենետիկ դաւառը ևւ Հայաստանը պաշտօնապէս զուգորդը պիտի հոչակուին, քացառիկ հանգիստութիւններով: Հանգիստութիւններու միամսեայ շրջանին, Վենետիկ պիտի այցելեն Հայաստանի երգի և պարի համայնը ևւ «Կոմիտաս» քառեակը, որոնք կոչութիւնը պիտի ունենան Նաեւ Փատովայի, Վերոնայի, Վիլիշայի ևւ Միլանոյի մէջ:

Վենետիկի Տոներու պաշտօնն երկու մեծ դահլիճներուն մէջ, պիտի ցուցադրուին մեր պատմական ժառանգութիւնն զանմեք, ուրարտական շրջանի իրեր ևւ յատկանշական այլ նմոշներ: Այս ցուցադրութեան պիտի մասնակցի նաեւ Մ. Ղազարու վանքը, 25 միտագիրներով, հետիւյզ գիրքերով ևւ դասական հայ նկարիչներու պատաստներով, իսկ Երևանի թանգարանը՝ արգի հայ նկարիչներու գործերով:

**ՆԱԵՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ
ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՔԵՄՊՐԻՃԻ
ՄԻՋԵՒ**

Քիմպրին (Մասաչուսեթս Նահանգ) քաղաքապետարանի հրաւերով, 14 Մայիսին Մ. Նախնադներ մեկնած է Երևանեան պատուիրակութիւն մը՝ Էդուարդ Աւագեանի Նախադահլիճեամբ, որ քսած է, թէ պատուիրակութեան նպատակն է սերտ գործակցութեան կապեր հաստատել Քիմպրինի ևւ Երևանի միջև:

Պատուիրակութեան հետ Քիմպրին մեկնած են Նաեւ զանազան մարզերու մէջ գործող հայ մասնագէտներ, որոնց շարքին՝ Երևանի օփերայի թատրոնի մենեքշուհի Արաքս Դուրեան, զաշխակահարուհի Աւետիանտա Նաւասարդեան ևւ այլ արուեստագէտներ, որոնք համերգներ տուած են քաղաքին մէջ: Խու մքին մաս կազմած են Նաեւ զաստիստներ, կրթական, առողջապահութեան ասպարէզներու ևւ գրադարաններու աշխատողներ:

Քիմպրին մէջ, պատուիրակութեան այցելութեան ընթացքին, կատարուած են քացման հանդիստութիւնները հայ կերպարուեստագէտներու, մանուկ նկարիչներու ևւ լուսանկարիչներու ցուցահանդէսներուն:

**ԱԼԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ
ՄԵՆԴԵԱՆ 75ԱՄԵԱԿԸ**

400է աւելի հրատարակուած գործերու հեղինակ, երգահան Ալան Յովհաննէսի ծննդեան 75ամեակին առթիւով, 30 Յունուարին, Պոսթրին Նիւ Ինկլընտ երաժշտանոցի «Ճորաբն» հանդիսարանին



ապիպոք որդան է 2000 ամերիկեան ապաքի
ժրջանակը հաւասարակա բաժնէն Այնք Գրեմանը
եւ Անգրանիկ Անգրեանանք միքի:

Այսպէսով այս տարուան ժրջանակաւ որեքոր
ստանան 1000ական ամերիկեան ապաք, իրենց չն-
տեւեալ գործերուն համար: Այնք Գրեման հա-
ւանկալի (ն)՝ անգրքի հողի եւ հատուցման իր
բաւաստեղծութիւններու հաւաքածոյին, իսկ
Անգրանիկ Անգրեանան (պարծնայ հաւանկալ-
ալն)՝ իր շինարարական եւ յարուսթիւն խորագրեալ
վեպին համար:

Գնահատել յանձնախումբը իր յայտնէ, որ մեզի
հասած միւս գիրքերուն մէջ եւս կային գնահա-
տալից Ակատառութեամբ արժանի նրկեր: Կը
շնորհաւորենք Յան անոնց հեղինակները, բայց
Որիքական գնահատման մեր արտայայտու-
թիւնը կը վերադառնանք իրենց դեռ ընդուն տա-
րիքին ակնկալուած հետագայ աւելի ծանրակշիռ
երկերու:

ԱԼԵԳ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄՊԻՈՐ ՄԸ

մէջ, երբեք ունեցած է «Սիմֆոնիա» սենեկա-
յին նուագախումբը, զնկավարութեամբ Արամ Դա-
րաբեկեանի եւ մեծանուն երգչաներին ներկայու-
թեամբ:

Յարեւաթ երգչաներ ընտրու գործերէն կազ-
մուած այս համերգի աւարտին, Պոլսի երաժշ-
տանոցի տնօրէնութիւնը Ալան Յովհաննէսը մե-
ծարած է երաժշտութեան տղջերայի աւարտանով:
Արաժշտանոցի նախագահ Ռ. իւրմ Սէյմուր եւ
տնօրէն-ժողովի ատենապետ Փրանքիէն Հոպս-
թարմը գնահատած են պոսթընարեանկ հայ արուես-
տագէտին ստեղծագործական ընդուն կեանքը:

Մանօթ է, որ առաջանդաւոր երգչանք իր ներ-
շնչումը կը ստանայ Արեւելքի, Մայրաքոյն Արե-
ւելքի, բայց մանաւանդ հայկական երաժշտու-
թեան ակունքներէն եւ կը ստեղծագործէ գաղա-
կան հիմունքներով, յարգելով արեւմտեան յոր-
նումը գիտութեան օրէնքները:

Թ. Մ. Մ. «ՀԱՅԿԱՇԷՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ» ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԴԻԻՒՆՔԸ

Թրքեան Աշակութային Միութեան «Հայկաշէն
Ուղուտեան» գրական մրցանակի գնահատել
յանձնախումբին ստացանք վերոյիշեալ ժրջանակին
Չլրդ հաղորդագրութիւնը, որ կը յայտնէ, թէ դա-

հին Արաբիկ Միւրիքին համայնարանը մէկ մի-
լիոն ապաքի նախադասութիւն մը ստացած է Այնք
եւ Մարք Մանուկեան հիմնադրութիւնէն՝ հաղա-
թական երկրորդ ամպիոն մը յիմնելու նպատակով:
1981ին, այն համայնարանին մէջ, Ա. Մանու-
կեան հաստատեց արգի հայոց պատմութեան ամ-
պիոն մը, որուն գաղափար նշանակուեցաւ փրֆ.
Ռանդալ Գրիգոր Սիւնի:

Երկրորդ ամպիոնը պիտի սահմանուի արգի հայ
գրականութեան եւ լեզուին: Այն ամպիոնին հա-
տաւածան առիթով, բարեբար Այնք Մանուկեան
յայտարարած է. «Միւրախ եմ, որ կարողացած եմ
օժանդակել Միշիկընի համալսարանի հայագի-
տական ուսմանց բացառիկ ծրագիրին. որուն
նախնայած գիտնականները կենսական գործ մը
կը կատարեն՝ տարանջնով հայ մշակոյթն ու
պատմութիւնը եւ յանքծանցնելով անոնց հաւ-
կացողութեան եւ իւրացման աշխատանքները:

Իր կարգին, համալսարանին նախագահը՝ տոթթ.
Հերրլո Շափիրո յայտարարած է. «ԵՄՍՄ բախտա-
ւոր եմ, որ տիրար Այնք Մանուկեանը ունիմք իր-
քու բարեբար եւ բարեկամ Միշիկընի համալսա-
րանին: Ենթադրեալ անոր օժանդակութեամբ՝ Միշի-
կընի համալսարանը դարձած է հայ մշակոյթի եւ
պատմութեան ուսումնասիրութեան գլխաւոր
կենդաններէն մէկը՝ ամբողջ Ամերիկայի մէջ:

Եւսկը, որ այն համալսարանը առաջին անգամ
հայ լեզուի դասընթացներ հաստատած էր 1974ին,
ապա պատապանի յատկացուցած էր հետեւեալ
նիւթերու. «Արդի հայ գրականութիւնը, «Հայ-
կական վերածնունդի» ծագումը եւ «Հայաստան
եւ հայեր» 1989 եւ 2009 զարեւումը:

«ՀԱՄԱԶԳԱՑԻՆ»Ը ՄԵԾԱՐԵՑ ՕՆՆԻԿ ՍԻՒՐՄԵԼԵԱՆԸ

Կիրակի, 10 մայիս 1987ին, ժ. Յեր Մեղրեան հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ լիբանանահայ Հաւաքական խորհրդի, իւրաքանչիւր եւ մանկավարժ Օննիկ Սիւրմելեանի նախագահութեամբ քննարկուող միջոցառումը՝ «Համազգային»:

Հանդիսութեան բացումը կատարեց տղթ. Արմենակ Միլիան, որ նշեց պատմելի վրայ գտնուող արուեստի գործիչները գնահատելու տնտեսական արժեքը, ապա անդրադարձաւ յորհեալ երաժիշտի իրեն մեկնարան, մանկավարժ եւ խմբագիր ունեցած գործունէութեան, բարձր գնահատելով վաստակը Օ. Սիւրմելեանի:

Քառյդի երաժշտանոցին տնօրէնը՝ Հայր Ժոզէֆ Թաննու, իր կարգին, ծանուցաւ յորհեալ երաժիշտի թեղուն կեանքին վրայ, ներկայացնելով անոր գործունէութեան փառաքան հանգրուանները: Ապա փոխանցեց Քառյդի երաժշտանոցին ողջունի խօսքերը, զորու առելով Օ. Սիւրմելեանի շնորհակալութիւն հարուստ մշակութային եւ մանկավարժական անցաւը:

Վերջին խօսքը եղաւ Զարեհ եպ. Աղնաւուրեան, որ խորաթափանց եւ ներշուն մօնեցումով ներկայացուց ամբողջական գիմնական բազմափաստակ Օ. Սիւրմելեանի, բարձրորդի գնահատելով Հայ յանձնառու արուեստագիտի անոր արուել կեցւածք եւ նկարագրային հարուստ գիծերը:

Վերջին խօսքը եղաւ յորհեալ Օ. Սիւրմելեան, որ հակառակ իր առողջական տկար վիճակին, շատաւարանայի մեւում ներկաներուն փոխանցեց իր շուրջ 50ամեայ երաժշտական գործունէութեան շարժման համալուծները:

Մեծարանքի ցերեկոյթը նաեւ ունեցաւ զեղարուեստական բաժին, որուն իրենց մասնակցութիւնը բերին լիբանանահայ արուեստագիտներ եւ Օ. Սիւրմելեանի աշակերտներ:

«ԳՈՒԹԱՆ ԶԵՂՆԵՐ» ԱՇԽԱՐՀ ԻՆՉ ԻՐ...»

Անցեալ տարի Հայաստանի մէջ հրատարակուած է երկար տարիներ ի վեր սպասուած ժայռապանակ մը՝ «Հայկական ժողովրդական երգեր» խորագրով, Հայրիկ Մուսատեանի կատարողութեամբ:

Հայրիկ Մուսատեան եղած է Հայ երգի դաստարակ եւ իր մանկութեան երգերը հասցուցած է մեր օրերը: Ներկայիս, Յ. Հայաստանի մէջ հատուկ շնորհակալութեամբ երգերու հաւաքման եւ տարածման աշխատանքին: Հ. Մուսատեան եղած է այս գործը սկսողներէ մէկը: Ան ոչ միայն փրկած է բազմաթիւ երգեր, այլեւ յոգնած ու մաշուած վիճակին հասցուած ազգաբնակից երգերուն յանձնա հաղորդած է անոնց արարման նախապայմանները խորհուրդը՝ մաքրելով, յղիւթով եւ փրկելով երգը, կոմիտասի սրինակով:

Հայրիկ Մուսատեան երգած է «Իմ սոխակի», «Մօր հրաւերի», «Վարդանի» հերոսական, զիւցաղնական երգերը: Երգած է նաեւ աշխատանքային կամ հարսանկան երգեր: «Գուրանի երգը» որ իր կատարողութեամբ կը ստանայ պատգամի բնոյթ. «Գուրան չեզմեր» աշխարհի ի՞նչ էր...»:

«Աստուած տա խոփ, լարի ի քարիմ»...


Այսպէս կը ծնի բարի շատանքի հողագործի յարձակուն կերպարը, որ երբեք չի զաղրիւր հող վարել:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑԻ ԾՆՆԴԵԱՆ ԳՕԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Երեւանի մէջ, վերջին տեղի ունեցած է Յիշէ Զարենցի նուիրուած գիտական նստալըման մը, կազմակերպութեամբ Հայկական Գիտութիւններու Ակադեմիային, Երեւանի պետական համալսարանի եւ Հայաստանի Գրողներու Միութեան:

Նստալըման բացումը կատարած է ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեան, որ բաժն է, թէ ջնդրապարտ աւարտին, Հայոց մեծ բանաստեղծը «մեզ հետ խօսում է իբրեւ կենդանի ժամանակակից, մտարտայայտում է մեր տագնապները մարդկութեան մերկայի եւ ապագայի համար, մեր հաւատը, ուր ի վերջոյ կը յաղթանակեն բանականութիւնն ու արդարութիւնը»:

Յիշէ Զարենցի, մասնաւորապէս անոր վերջին ստեղծագործութիւններուն մասին Զեյր խօսքերով ելոյթ ունեցած է բանաստեղծ Վահագն Գալստեան: Ներկաները մեծ հետաքրքրութեամբ լսած են բանաստեղծի Այժմաւ Զարեանի, Ռաֆայէլ Ելիսանեանի, Վազգէն Գաբրիէլեանի, Անահիտ Զարենցի, բանաստեղծ Գէորգ Էմինի եւ այլոց պոետիկութեանը:



digitised by A.R.A.R.®

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Ն Շ Ա Ն Ա Փ Ի Ր

- Միացեալ Նահանգներ, 1987, 141 էջ: Հրատարակութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի տպարանի, Անթիլիաս-Լիբանան:

ՀՈՒՇԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

Վ Ե Ր Լ ՈՒ Ծ Ա Կ Ա Ն Է Զ Ե Ր

- Լիբանան, 1987, 88 էջ, տպարան «Էրեբունի»:

ՍԵԴԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ - ՏԱՏՈՅԵԱՆ

Է Զ Ե Ր ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՄՏԱԾՈՒՄԷՆ

- Պէյրութ, 1987, 243 էջ: Հրատարակութիւն՝ Հ. Բ. Ը. Միութեան «Վահրամ Ապտալեան» հիմնադրամի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

«Բազիկ»ի արտասահմանի աշխատակիցներն ու բարեկամները, իրմբազրութեան հետ կապ պահելու համար, յետ այսու կրնան դիմել նաեւ հետեւեալ հասցեին՝

PAKINE – literary Monthly

P. O. Box 19226, Athens,

GREECE

digitised by A.R.A.R.@

ԼՈՒՐԱՆՆ
Հատավանդակ 40 Լ.Ռ.
Տարեկան բաժնեգին 400 Լ.Ռ.

ՍՈՒՐԻՔ
Հատավանդակ 25 Ս.Ռ.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارثين كارنيك قزانيان

•

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
Ս. ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban
Tel. 296898